



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՏՕՐԹ. Զ. ՈՒՕՇՊԸՐԵՆ



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԱՐՐԱՀՍՄ Զ. ՅԱԿՈԲՅԱՆ

Ի. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Ե. ՄԱՏԹԻՈՅԱՆ

1906

377

ՈԼ-64



ՏՕՔԹ. Ճ. ՈՒՕՇՊԸՐՆ

11 JUL 2012

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՐԳՄԱՆԵՑ
ԱՐԲՆ.ՀՍՄ Ց. ՅԱԿՈԲՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1906

27 AUG 2013

46.110

391
NL-64

ԳՐԱՐԱՆ, ՎԻՄՍԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՍՈՒՆՈՑ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսներըս եօզուշու, Կ. Պոլիս



2143-2012

معارف عمومية نظارت جلیله سنک ۹ ربیع الاخر ۳۲۴ و ۲۰ مایس
۳۲۲ تاریخی و ۷۳ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر



George Washburn

ՏՕԳԹ. ՌԻՕՇՊԸՐՆ սոյն Մանկավարժական դասախօսութիւնները քանի մը տարիներ առաջ պատրասած է բարձրագոյն կարգին համար Ռուպէրթ Գոլէճի, որուն երախտաւոր նախագահն եղած է երկար ժամանակ:

Բազմահմուտ, փորձառու դասխարակ, ի մօտոյ ծանօթ, մէկ կողմանէ, Եւրոպական եւ Ամերիկեան կրթական գլխաւոր հաստատութեանց, եւ, միւս կողմանէ, մեր երկրի ժողովրդոց պարագաներուն ու կարօտութեանց, եզակի կարեւորութիւն մ'ունին մեզ համար դասխարակութեան բազմակողմանի հարցերուն մասին իր տեսութիւնները, զորս կը պարզէ իրեն յատուկ հասցելի եւ դիւրհասկանալի ոճով մը:

Այն ջերմ ընդունելութիւնը՝ զոր գտաւ իր միւս գիրքը «ԳՐԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՌԻՐԻՇ ՔԱՐՈՋՆԵՐ» քաջալեր եղած է սոյն Գրքոյկը նաեւ հրատարակելու նախաձեռնութեամբ վարժարանիս: Հայ ուսանողներուն, որք կը համարին այսու ծառայութիւն մը մատուցած ըլլալ իրենց ազգակից ուսուցիչներու, ծնողքներու եւ ուսանողներու:

Ռուպերթ Գոլէճ
22 Յունիս 1906

Ա. Տ. Յ.



Գ Լ ՈՒ Խ Ա.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

Կ'ԱՊՐԻՆՅՔ այնպիսի դարու մը մէջ, որուն նշանաբանն է դաստիարակութիւն: Դաստիարակութիւնը կը ներկայացուի մեզ իբր անվրէպ և միակ դարմանն ընկերութեան բոլոր չարիքներուն, և ազգերն ալ կը մրցին մին քան զմիւսն աւելի դրամ ծախսել դպրոցներու համար:

Այս նիւթն ուստի ուշադրութեան առարկայն եղած է ո՛չ միայն դասատուներու, այլ և ծնողքներու և ուսանողներու, ո՛չ միայն մարդասէրներու, այլ նաև պետական անձերու և իմաստասէրներու: Պէտք է որ ամենքս ալ ըմբռնենք թէ ի՛նչ է դաստիարակութեան ճշգրիտ իմաստը և ի՛նչ կրնանք ակնկալել անկէ:

Նախ՝ մոռնալու չենք թէ դպրոցներուն տուած կրթութիւնը մին է միայն այն միջոցներէն՝ որ նկարագրի կազմութեան կը նպաստեն: Թէ ի՛նչպիսի մէկը պիտի ըլլայ երիտասարդ մը, երբ իր քսան և հինգերորդ տարին թեւակոխէ, այդ նախ և առաջ կախումն ունի այն յատկութիւններէն որոնցմով բնութիւնը օժտած է վրնքը:

Դեռ շատ քիչ բան գիտենք ժառանգականութեան օրէնքին նկատմամբ, բայց ծանօթ է մեզ այն իրողութիւնը թէ մարդիկ աշխարհ կուգան խիստ զանազան ընդունակութիւններով թէ՛ Ֆիզիքական և թէ՛ իմացական: Հինաւուրց Յոյն իմաստասէրն շատ լաւ հասկցած էր թէ այս դիպուածի արդիւնքը չ'էր, և խորհրդածութիւններ կ'ընէր զայն կառավարելու եղանակներուն մասին: Աստուածաշուշնը կ'ուսուցանէ որոշակի թէ մանուկներն աստիճանաւ մը իրենց նկարագիրը իրենց ծնողքէն կը ժառանգեն: Բայց մինչև այսօր գիտութիւնը շատ քիչ յառաջդիմութիւն ըրած է ժառանգականութեան օրէնքն խուզարկելու մէջ: Մեր նիւթին չը պատկանիր այս հարցը յուզել, բաւական է միայն յիշել թէ դաստիարակը ձեռք կ'առնէ մանուկը ինչպէս կը գտնէ զայն, և անոր բնական յատկութեանց համեմատ կ'աշխատի զարգացնել զայն, որչափ կրնայ:

Բայց նկարագրին կազմութեան նպաստող կայ ուրիշ միջոց մ'ալ, որ բոլորովին անկախ է դաստիարակին կամքէն: Մանուկին դաստիարակութիւնը օրօրօցին մէջ կը սկսի, և այս դաստիարակութիւնը կը կատարուի ո՛չ միայն իր ծնողաց միջոցաւ, այլ նաև այն հաղարաւոր ազդեցութեանց՝ որք մանուկը կը չըջապատեն այնպիսի հասակի մը մէջ, երբ ամենէն աւելի ընդունակ է արտաքին տպաւորութիւններ կրելու:

«Այն դասատուներն և հրահանգութիւններն որք յատկապէս կը սահմանուին մեզ համար, կ'ըսէ Քառլայլ, գրեթէ ոչինչ են բազդատմամբ դիպուածական և շարունակական հրահանգութեանց, որոնց դպրոցական ժամերն մեր կեանքին բոլոր օրերն ու գիշերներն են, և որոնց դասերն, մեր գիտութեամբն կամ առանց մեր գիտութեան, մեր վրայ կը տեղան ամէն շունչի հետ, զոր կը չնչենք:»

Երբ իմ մանկական օրերս միտքս կը բերեմ, կը տեսնեմ թէ միայն խիստ աննշան մէկ մասը այն գիտութեան, զոր ունէի երբ Քոլէճ մտայ, ստացած էի դասատուներէ կամ դասադիրքերէ: Ստացայ զայն ընտանիքէս, եկեղեցիէն, լրագիրներէ, փողոցներէն, ուրիշ տղաքներէ, սպասաւորներէ: Կը յիշեմ թէ երբ եօթը տարեկան էի, եռանդուն քաղաքագէտ մ'էի: Դեռ հասարակ կոտորակներուն խելք չ'էի կրնար հասցնել, ո՛չ ալ դեռ աշխարհագրութիւնս աւարտած էի, բայց ականջներս բաց էին մտիկ ընելու քաղաքական վիճաբանութեանց սեղանին վրայ, քաղաքապետութեան սրահին մէջ, և ամէն ուր որ մարդիկ կը հաւաքուէին խօսակցելու: Քանի մը տարիներ վերջ, երբ աստուածաբանական և գործնական կրօնքի խնդիրներ գրաւեցին իմ խորին ուշադրութիւնս, եկեղեցին էր և ո՛չ թէ դպրոցը, որ կը ներշնչէր զիս:

Այսպէս նաև իմ գործի մասին ունեցած ծանօթութիւններս, իմ հօրս գրասենեակին մէջ էր որ ստացայ զայնս, և ո՛չ թէ դպրոցէ ու դասատուներէ: Շատ բան կը պարտիմ իմ դասատուներուս, ի մասնաւորի անոնցմէ ոմանց, բայց իմ անգիտակցաբար ստացած դաստիարակութեանն էր որ կը պարտէի իմ գիտութեանս մեծագոյն մասը:

Աշխարհիս մեծ մարդիկներէն շատերը բնաւ դպրոցական կրթութեան առաւելութիւններն վայելած չեն, կամ միայն նախնական դպրոցներ յաճախած: Այսպէս էր նախագահ Լինքըն, որ անտարակոյս իր երկրին մեծագոյն դէմքերէն մին եղած է: Այսպիսի մարդիկ ընդհանրապէս դժբաղդութիւն մը նկատած են իրենց դպրոցական ընթացքէ մը զրկուիլը, և մենք կրնանք յաճախ տեսնել թէ դպրոցական կրթութիւնը պիտի բարւոքէր իրենց նկարագիրը: Բայց այս պարագաներն կը հաստատեն այն իրողութիւնը, որուն կ'ուզեմ ուշադրութիւն

նուկին հետ, գիտութիւն խճողելու է անոր մէջ գաւազանի մը միջոցաւ, մինչ կրաւորական կը մնայ տղան: Այս կը յաջողի սագերուն համար, բայց չը յաջողիր տղոց համար, և եթէ յաջողէր իսկ, արդիւնքը սագերուն հիւանդ լեարդին նման բան մը պիտի ըլլար միայն: Դաստիարակութիւն չը պիտի ըլլար այն: Դասատուին գործը չ'է ուսանողին գործունէութիւնը խափանել, այլ քաջալերել և ուղղել զայն: Այս գործը աւելի հմտութիւն և աւելի ճարտարութիւն կը պահանջէ քան ուրիշ որ և է արուեստ: Մեծ դասատուներն աշխարհի մէջ խիստ փոքրութիւ եղած են միշտ: Դասատուներուն մեծագոյն մասը հինաւուրց հաստատուած եղանակներով կը գործեն անխորհուրդ, ընկով ինչ որ ուրիշները կ'ընեն առանց գիտնալու թէ ինչ՞ո՞ւ, և քիչ կամ շատ յաջողութեամբ, իրենց ողջմտութեան և աշակերտաց նկատմամբ տածած համակրութեանն համեմատ: Բայց այս յաջողութիւնը երբէ՞ք այնքան մեծ չ'է որքան պիտի ըլլար, եթէ իրենց գործը հասկնային կատարելագէտ:

Ա. Ըսի թէ դասատուին առաջին և ամենէն էական գործն է ուսանողին ընդունակութիւնները հրահանգել և զարգացնել, զօրացնել և ընդարձակել անոր կարողութիւններն, այնպէս որ իւրաքանչիւր կարողութիւն գործէ քանակն կատարեալ եղանակաւ և տակաւին միւսներուն հետ համերաշխութեամբ: Այսպիսի կրթութիւն մը երբեմն կարելի է դպրոցէն դուրս ալ ստանալ, բայց դպրոցին մասնաւոր և յատուկ գործն է այն. և դիւրագոյն է ստանալ զայն հոն քան այլուր:

Իր գործը լաւ կատարելու համար դասատուն պէտք է խելամուտ ըլլայ թէ՛ որո՞նք են այն կարողութիւններն, որք զարգանալու են այսպէս, ինչ է իրենց յարաբերական կարեւորութիւնը, և ինչ են զայնս մշակելու համար հարկ եղած միջոցները:

Պէտք է յիշէ ամենէն առաջ թէ իր խնամքին յանձնուած մանուկը զարմանալի կերպով բարդ բնութիւն մը ունի: Ունի Ֆիզիզական բնութիւն մը, որ պէտք է մշակուի և զարգանայ, և միւսնոյն ատեն խիստ հսկողութեան մը ենթարկուի և բարձրագոյն կարողութեանց հպատակի իբր ստորագաս: Ունի իմացականութիւն մը տարօրինակ և հիանալի ընդունակութիւններով, որք գրեթէ անսահման զարգացման ասպարէզ մ'ունին իրենց առջև, բայց իրենց արժէքը վերջապէս կախումն ունի իր սրտին և կամքին նկարագրէն, այսինքն իր բարոյական բնութեանէն, ինչպէս հասարակօրէն կը կոչենք զայն: Այս եռասպառիկ բնութեան և ո՛չ մէկ մասը կրնայ զանց առնուիլ, առանց ամենուն վնասելու, և ասոնցմէ և ոչ մին կրնայ անտես ըլլուիլ դաստիարակին կողմանէ:

Ֆիզիզական Առողջութիւնը. — Քանի մը հեղինակներ կ'ըսեն դասատուն բոլորովին ազատ կացուցանել իր աշակերտին առողջութեան մասին ո՛ր և է պատասխանատուութենէ: Բայց այս շատ անձուկ ու կարճատես գաղափար մ'է դասատուին պարտաւորութեանց նկատմամբ: Ֆիզիզական առողջութիւնը առաջնակարգ կարեւորութիւն մ'ունի թէ՛ ըստ ինքեան և թէ՛ մտաւորական կարողութեանց համար իր ունեցած ազդեցութեան պատճառաւ: Այնպէս կը հաւատանք թէ՛ հոգին կրնայ գոյութիւն ունենալ առանց մարմինի, բայց ցորչալի մարմնոյն մէջ կը բնակի, այնքան անբաժան կերպով միացած է անոր հետ, որ զիւրին չէ ըսել ճշդիւ թէ՛ ո՞ր ֆիզիզականը կը վերջանայ և ո՞ր կը սկսի հոգեկանը: Եթէ մին տկար է, միւսն ալ կը տուժէ և ճշմարիտ նշանաբանն է. «Առողջ միտք յառողջ մարմնի»:

Նոյն իսկ ցերեկեայ դպրոցներուն մէջ դպրոցականներուն առողջութիւնը կարեւոր աստիճանաւ մը կախումն ունի դասատուէն, և շատ աւելի գիշերօթիկ դպրոցներէ:

բու մէջ : Օղ, լոյս, ջերմութիւն, մարզանք, խաղի և հանգիստի ժամերն իր հակողութեան տակ են երկու կարգի դպրոցներուն մէջ ալ, և գիշերօթիկ վարժարանին մէջ այդ հակողութիւնը բոլորովին իր ձեռքն է միայն : Ինչպէս կրնայ ուրեմն դասատուն ճողոպրի իր աշակերտներուն Ֆիզիզական դաստիարակութիւնը գէթ մասամբ վարելու պարտականութեանէն : Թէ՛ սրն է դայս կատարելու լաւագոյն կերպը, ուրիշ առթի կը վերապահենք քննել սոյն խնդիրը :

Իմացական կրթութիւն. — Մարդկային միտքը բարդ մեքենայ մը է՛ է մարդկային մարմնոյն նման, որ ունի զանազան գործարաններ զանազան գործածութեանց համար : Միութիւն մ'է, որ տեղ չը գրաւեր միջոցին մէջ և ուստի անբաժանելի է. բայց տակաւին զանազան կարողութիւններ կամ ուժեր ունի. զանազան գործեր կըրնայ կատարել, ու այս կարողութիւններէն իւրաքանչիւրը կը կարօտի իր որոշ և անջատ հրահանգութեան : Ասոր օրինակը կը տեսնենք նոյն իսկ մարմինին մէջ : Միայն մէկ ալ ձեռք մը ունինք. բայց այդ ձեռքը շատ մը բաներ կրնայ ընել, և ամէն բանի համար մասնաւոր դաստիարակութեան մը կը կարօտի : Այդ ձեռքին գրել սորվեցնելը՝ չը տար անոր դաշնակահարութեան կամ նկարչութեան ճարտարութիւնն ալ, ո՛չ ալ ուժգին հարուած մը տալու ուժը կուտայ անոր : Այսպէս է նաև միտքը : Յիշողութիւնը մշակելը՝ չը զարգացներ նաև դատելու կարողութիւնը, ո՛չ ալ չափազիտական ուսումները երեւակայութիւնը կը զարգացնեն : Իւրաքանչիւր կարողութիւն առանձին իր յատուկ կրթութեան կը կարօտի :

Յոյժ կարեւոր է ուրեմն գիտնալ թէ ի՞նչ են մշտքին այն կարողութիւնները, զորս մեր պարտքն է մարզել ու զարգացնել. ի՞նչ է այս կարողութեանց յարաբերական կարեւորութիւնը, և ի՞նչ է իրենց զարգացման

ընական դասակարգութիւնը : Յոյժ կարեւոր է ուրեմն նաև Հոգեբանութիւնն ուսումնասիրել լրջօրէն : Բայց առանց այս դիտութեան մանրամասնութեանց մէջ մտնելու՝ յայտնի է արդէն թէ մենք ունինք կարողութիւն ծանօթութիւն ստանալու. դայն պահելու ու անոր վրայ խորհրդածելու : Այսինքն թէ մենք կարողութիւն ունինք նիւթական աշխարհին ծանօթանալու : Այս կարողութիւնը հաւականաբար ամենէն աւելի կանուխ կը սկսի գործել, և կը տարունակէ այն բոլոր ծանօթութիւնը, որ զգայաքանաց միջոցաւ կուգայ մեզ : Ապա՝ ունինք մենք զմեզ ճանչնալու կարողութիւնը, զոր Գիտակցութիւն կը կոչենք. որ կը կարողայնէ զմեզ մեր ներսը դարձնել մեր հայեացքը և մեր իսկ հոգեկան բնութիւնը հասկնալ : Մասօթութիւնը պահող կարողութիւնը կը կոչուի Յիշողութիւն, և այս կարողութեան քիչ շատ ազգակից է Երեւակայութիւնը : Ապա՝ ունինք խորհրդածելու կարողութիւնը, որ հիմն է Դատողութեան և Տրամախոնութեան, որ իրաց յարաբերութեան ծանօթութիւնը կը հայթայթէ մեզ : Ասոնցմէ զատ՝ այնպէս կազմուած է մեր միտքը, որ երբ առիթը ներկայանայ, ունինք ուղղակի, գէ՛մ յանդիման կարողութիւնը, որ կ'ընծայէ մեզ ծանօթութիւնն այն գաղափարներուն, զորս նախնական կը կոչենք, ծանօթութիւն մը որ ի յառաջագունէ է բնութեամբ, որ հիմն է բոլոր փորձառութեան. բայց որ երբէք չստացուիր փորձառութենէ : Այսպիսիք են մեր ծանօթութիւնը ժամանակի և Անջրպետի, Պատճառի ու Աստուծոյ, որ է Մեծ Առաջին Պատճառն :

Բոլոր մարդիկ տէր են այս կարողութեանց, և լոկ չփուժը աշխարհի հետ գործնական կեանքին մէջ՝ չափով մը կը զարգացնէ զայնս անդաստիարակ մարդուն մէջ, նոյն իսկ վայրենիին մէջ : Բայց դպրոցին նպատակն է մարզել և կրթել զանոնք ամենքն ալ անհատաբար և

իրենց միմեանց հետ ունեցած յարաբերութեանց մէջ, այնպէս որ մարդ կարող ըլլայ քաղաքակիրթ կեանքի բարձրագոյն զարգացման հասնիլ: Գլխաւոր թերութիւնը անդաստիարակ մարդուն, ու նաև շատ մը դպրոցական դաստիարակութեան, այն է որ կարողութեանց մշակութիւնը մասնակի է և անկանոն: Կարողութիւններէն մէկ քանին կը զարգացնենք միւսներուն յլատելով կամ զուսնք անտեսելով: Կան վաճառականներ, որ շատ քիչ դպրոցական դաստիարակութիւն ընդունած են, բայց որք նշանաւոր յիշողութեան մը տէր են, և կարող կարգ մը նիւթերու վրայ այնպիսի դատողութիւններ ընելու, որ զմեզ կը սքանչացնէ: մինչդեռ իրենց մտաւոր մշակութիւնը այնքան թերի և մասնական է որ իրենց գործէն դուրս իրենք իրենց վրայ վստահութիւն չունին:

Դաստիարակութեան պատշաճ դրութիւնը պէտք է ուղղէ այս ակարութիւնը, և իմացական կարողութեանց կանոնաւոր զարգացումն ապահովէ: Բայց այս արդիւնքն այն ատեն միայն կարելի է լիովին ձեռք ձգել, երբ դաստիարակութիւնները, և ինչպէս պէտք է կրթութիւն: Եթէ անպատրաստ արհեստաւոր մը անյարմար է փափուկ մեքենայ մը կառավարելու, և անշուշտ կը խանգարէ զայն, անկարող դասատուն շատ աւելի անյարմար է մարդկային միտքը կրթելու, ու անշուշտ անյաջող պիտի ըլլայ իր փորձին մէջ:

Բարոյական Կարողութիւնք. — Արդի հեղինակներէն ոմանց կարծիքն այն է թէ դասատուին գործը մտաւորական կարողութեանց սահմանին մէջ միայն մնալու է, թէ դասատուն որ և է գործ չ'ունի բարոյական բնութեան հետ: Այնքան բանաւոր է այս որքան պնդել թէ մեքենավարը վայրաշարժին մեքենաներուն յատկացնելու է իր ամբողջ ուշադրութիւնը, և իր գործը նկատուելու չ'է բնաւ շոգին:

Բարոյական կարողութիւններն են որ կը շարժեն և կը կառավարեն մտքին ամբողջ գործունէութիւնը: Այս կարողութիւններն են որ մարդու ճշմարիտ նկարագիրը կը կազմեն: Զարգացնել ֆիզիքական և իմացական կարողութիւններն, մինչ բարոյականը կը մնայ թմրած, տալ է այնպիսի դաստիարակութիւն մը, որ կրնայ անէճք մը ըլլալ թէ՛ նոյն ինքն անհատին և թէ՛ այն ընկերութեան, որուն մէջ անհատը կ'ապրի: Դպրոցը սահմանուած չ'է ընտանիքին և կամ եկեղեցւոյ տեղը բռնել: Դպրոցը չ'ազատեր ծնողքները կամ կրօնի ուսուցիչները մանուկներու կրօնական կրթութեան մասին իրենց ունեցած պատասխանատուութենէն, բայց դպրոցն իր մէջ կ'ընդունի մանուկը այնպիսի շրջանի մը մէջ, երբ ամենէն աւելի ընդունակ է չար ու բարի ազդեցութեանց, և կը ձեռնարկէ կատարեալ մարդ մ'ընել զինքը, որչափ կրնայ: Եւ այս կարելի կ'ըլլայ միայն մշակելով բոլոր կարողութիւնները համանգամայն, և նախապատուութիւն տալով անոնց, որք ամենէն կարեւորն են: Տարակոյս չը կայ թէ այս կարեւորութիւնը կը պատկանի Զգայուն Բնութեան կամ Զգացմանց և Կամքին: Ամենէն կարեւորն են ասոնք, որովհետև ասոնք են որ մարդու կեանքը կը կառավարեն, նկարագիրը կը կազմեն, և իր ձակատագիրը կը հաստատեն ո՛չ միայն այս աշխարհիս, այլ և յաւիտենականութեան մէջ: Դասատուն ուրեմն հոգ տանելու է ֆիզիքական առողջութեան և իմացական զարգացման և զանց ընելու այն, որ միայն կրնայ արժէք ու արժանապատուութիւն տալ մարդկային կեանքի: Զանց ընելու է այն որ միայն փափաքելի կ'ընծայէ դաստիարակութիւնը թէ՛ անհատին և թէ՛ պետութեան համար:

Աշխարհի կարծիքը այս կէտին մասին գրեթէ միաձայն եղած է բոլոր դարերուն մէջ: Միայն ներկայ ժա-

մանակիս մէջ է որ ս'ր և է մէկը փաստաբանած է բարոյական և կրօնական հրահանգութեան ջնջումը դպրոցներուն մէջ: Բարոյական դաստիարակութիւնը ընդհանրապէս նկատուած է իբր գլխաւոր նպատակը դպրոցին: Բայց ներկայ ժամանակիս մէջ դաստիարակութիւնը Պետութեան վարչութեան տակ մտած է աւելի քան Եկեղեցւոյ, և կրօնական դաստեանդութեանց զանազանութիւնը, և կրօնական ազատութեան մասին առ հասարակ ընդունուած սկզբունքներն նոր խնդիր մը յարուցած են, ինչ բարոյական կամ ինչ կրօնք պէտք է սորվեցնել դպրոցներուն մէջ: Յրամասայի որոշումն է և ո՛չ մէկ կրօնք և ո՛չ մէկ բարոյական, ի բաց առեալ քաղաքական բարոյականը կամ քաղաքացւոյն առ Պետութիւնն ունեցած պարտաւորութիւնը: Անաստուածութեան յաղթանակն է այս, և իր նետեանքը պիտի ըլլայ Հասարակապետութեան կործանումը, ինչպէս Իմաստակներուն անաստուածական վարդապետութեանց նետեանքը եղաւ Յունաստանի Հասարակապետութեանց կործանումը:

Մինչդեռ պարտաւոր ենք մերժել այսպիսի որոշում մը իբր հակառակ Բնութեան, միեւնոյն ժամանակ ճանչնալու ենք թէ կարելի է խառն դպրոց մը կառավարել ճիշդ նոյն սկզբունքներով՝ որոնցմով կը կառավարուի վարժարան մը, ուր ուսանողներն բոլորն ալ նոյն հաւատքին կը պատկանին: Այդպիսի վարժարանի մը մէջ կարելի է սորվեցնել ոչ միայն Բարոյական և կրօնք, այլև Եկեղեցւոյ վարդապետութիւնները: Խառն դպրոցի մը մէջ այս ո՛չ արդարանալի է և ո՛չ գործնական: Այս դժուարութեանն խուսափելու մէկ եղանակն է մասնաւոր դասատու մը կարգել իւրաքանչիւր դասաւանդութեան համար, բայց այս ընդհանրապէս անգործադրելի է, և բաց աստի, բարոյական կրթութիւնը կ'անջատէ ընդհանուր կրթութեանն այնպիսի կերպով մը, որ անոր կա-

2143 - 2012

րեւորութիւնը և ուսանողին վրայ ունեցած ազդեցութիւնը կը ջնջէ:

Երբ ուսանողներն բոլորն ալ քրիստոնեայ են, բայց տարբեր եկեղեցիներէ, այդպիսի դժուարութեան մը տեղի չը կայ: Բոլորն ալ կ'ընդունին բարոյականի նոյն սկզբունքները, և բոլորն ալ համաձայն են այն էական ու հիմնական ճշմարտութեանց մասին, որք վարդապետութիւնն են Նոր կտակարանին: Այս բաւական բարոյական հրահանգութիւն մ'է դպրոցի համար:

Եկեղեցւոյ վարդապետութիւններն կրնան ուրիշ տեղ աւանդուիլ, և դպրոցին մէջ հարկ չ'է արտատանել բառ մ'իսկ, որ կրնայ ս'ր և է ուսանողի շիւրջազգածութիւնը վիրաւորել: Գալով ոչ քրիստոնեայ ուսանողներուն՝ ասոնք ստիպուած են Քրիստոնեայ դպրոցի մը մէջ լսել կրօնական դասաւանդութիւններն, որք համաձայն չ'են իրենց հաւատքին: Բայց պէտք չ'է որ երբէք իրենց հաւատքին վրայ նախատինք կամ յարձակում լսեն: Պէտք է միշտ յարգանքով վարուիլ իրենց հետ և զգալ տալ իրենց թէ գործնական բարոյականի մեծ սկզբունքները հասարակաց ժառանգութիւնն են ամէն անոնց որք կը հաւատան Աստուծոյ և կը հաւատան անձնական պատասխանատուութեան առ Նա: Այսպիսի պարագաներու մէջ տեղի չը կայ ս'ր և է լուրջ դժուարութեան:

Անաստուածին պարագան բոլորովին տարբեր է: Անոր հետ ալ պէտք է մարդասիրաբար ու յարգանքով վարուիլ: Պէտք չ'է նախատել զինքը և իր վրայ յարձակիլ, բայց նաև պէտք չ'է ս'ր և է ջանք խնայել ցոյց տալու իրեն իր մոլորութիւնը, քանզի Աստուծոյ վախը իմաստութեան սկիզբն է և անաստուածութիւնը կործանարար է բոլոր բարոյական կրթութեան: Ուրիշ պայմանով չը պիտի ընդունէի անաստուածին զաւակը նոյն իսկ ազգային վարժարանի մը մէջ: Պիտի պնդէի պար-

զապէս թէ անասունաձուլութիւնը վտանգ մ'է պետութեան, որ պարտաւոր է իր բոլոր բարոյական ազդեցութիւնն գործածել բարոյականը և կրօնքը քաջալերելու և զարգացնելու, ի մասնաւորի մանուկներու կրթութեան մէջ:

Ըսածներէս կը հետեւի անշուշտ թէ դասատուն պարտի ըմբռնել և գործադրել բարոյականի այն սկզբունքներն, զորս կը ջանայ իւր աշակերտներուն մէջ զարգացնել: Հարկ չ'է որ աստուածաբան մը ըլլայ, բայց ՀԱՐԿ է որ ըլլայ բարի մարդ մը, որուն բարոյական կարողութիւնները ուղիղ կերպով մշակուած ու զարգացած են, որովհետեւ ո՛չ ոք կրնայ սորվեցնել ինչ որ ինքը չը գիտեր: Լոկ ձեւական բարոյական կրթութիւնը անօգուտ է. ըստ ինքեան անբարոյական բան մ'է, որովհետեւ անկեղծ չ'է, և տղան կրնայ միշտ շուտով նշմարել կեղծաւորութեան ու խաբէութեան ո՞ր և է հետք իր դասատուին մէջ: Բարոյականի մէջ օրինակը աւելի զօրաւոր է քան խօսքը:

Այս կէտին վրայ մեր ըսածներն ամփոփելով՝ դըպրոցին ամենէն կարեւոր գործն է դպրոցականին ֆիզիզական, իմացական և բարոյական կարողութիւնները մշակել ու զարգացնել: Այս կարողութիւնները կան մանուկին մէջ: Աստուծոյ պարգեւն են անոնք: Դասատուին գործն է ի յայտ բերել զանոնք, մշակել, համեաբաշխութեան մէջ դնել, կանոնաւորապէս զարգացնել, և այսպէս կարողացնել մանուկը օգտակար հանդիսացնել ինք զինքն ըստ կարելոցն:

Այս զարգացումը իրագործելու միջոցին գալով՝ բաւական է ըսել հոս թէ մեր կարողութիւնները զարգացնելու միայն մէկ միջոց ծանօթ է մեզ, և այդ ալ մարդանքն է: Այս այնքան ճշմարիտ է բարոյական որքան իմացական կարողութեանց մասին: Ինչպէս Արիստոտէլ

կը քարոզէր աւելի քան երկու հազար տարի առաջ այն է առաքինի մարդը, որ մարզանքի կամ վարժութեան միջոցաւ՝ բարին գործելու սովորութիւնն ստացած է: Այնքան ճշմարիտ է այս մտաւորական կարողութեանց մասին որքան ֆիզիզական ոյժերուն: Յիշողութիւնը կամ դատողութիւնը կը մշակենք գործածելով դայն, ճիշդ ինչպէս բազուկին մկանները կը զօրացնենք զայնս գործածելով: Ուրիշ ճամբայ չը կայ:

Բ. Մինչև հոս դաստիարակութեան միայն մէկ նպատակին նկատմամբ խօսեցանք: Ամենէն կարեւորն է այս նպատակը, բայց ո՛չ միակը դպրոցական դաստիարակութեան: Կայ ուրիշ մ'ալ, զոր շատեր, ի մասնաւորի անոնք որ դաստիարակեալ չ'են, կը նկատեն իբր միակ նպատակը դաստիարակութեան: Այն է օգտակար ծանօթութիւն հաղորդել, ծանօթութիւն՝ որ գործնական արժէք ունենայ տղուն՝ իր հացը ձարելու համար, ծանօթութիւն՝ որ կրնայ ըսուիլ թէ զրամի արժէքն ունի: Առեւտրական վարժարաններ, արուեստական վարժարաններ, և չափով մ'ալ. բոլոր բժշկական, օրէնսդիտական և այդ կարգի այլ վարժարաններ դաստիարակութեան այս մասին առաջնութիւն կուտան: Զոր օր. գեղադրութիւն, տոմարակալութիւն, վաճառականական թուաբանութիւն կը սորվեցուին տղուն՝ զինքը վաճառականութեան պատրաստելու դիտաւորութեամբ: Եթէ այս ճիւղերը լաւ սորվի, դպրոցէն ելած ատեն կրնայ վաճառականի մը գրասենեակին մէջ ձեռք ձգել ամսական մը, զոր չը պիտի կրնար ստանալ առանց այս ծանօթութեան, որքան ալ կատարեալ ըլլար իր մտաւոր կրթութիւնը:

Ամէն ոք կ'ընդունի թէ դաստիարակութիւնը միանգամայն ծառայելու է թէ՛ մտքին կարողութիւններն կրթելու ու թէ՛ օգտակար ծանօթութիւն հաղորդելու. բայց այսու հազերձ, մեծ անհամաձայնութիւն մը կը

տիրէ այս երկու նպատակներուն կարեւորութեան մասին :
 Կան երկու հակառակ վարդապետութիւններ, որք
 աշխարհս երկու կուսակցութեանց բաժնած են երկար
 ժամանակէ ի վեր, բայց որք մասնաւոր առաջնութիւն
 մը ստացած են վերջին տարիներու մէջ : Մին կը կոչուի
 Դասական կամ Կրթական վարդապետութիւն, միւսն ալ
 Իրապաշտական կամ Օգտապաշտական վարդապետութիւն
 և ասոնց երկուքին մէջտեղը կան կարծիքի զանազան
 տեսակներ, որք միոյն կամ միւսին կը յարին :

Դասական վարդապետութիւնը կը պնդէ թէ դաս-
 տիարակութեան նպատակն այն է որ անհատը տիրանայ
 ֆիզիքական, իմացական և բարոյական կորովի : Եթէ
 մարդս ուժով է ըստ բաւականին, կրնայ ընել ինչ որ ալ
 ըլլայ, և դպրոցական դաստիարակութեան նպատակն է
 ուժը զարգացնել : Կը պնդէ թէ կեանքի ո՛ր և է շրջա-
 նակի մը համար լաւագոյն պատրաստութիւնը ո՛չ թէ
 օգտակար իրողութեանց ծանօթութիւնն է, այլ միտք մը՝
 որ կրթուած է դիմագրաւելու բոլոր պատահականու-
 թեանց : Այդպիսի միտք մը պատրաստ է տիրանալու ա-
 մէն օգտակար ծանօթութեան՝ որուն կը կարօտի ո՛ր և է
 արուեստի մէջ, ամենայն դիւրութեամբ և առանց ժա-
 մանակի ո՛ր և է իրական կորուստի, և գործնական կեան-
 քի կարօտութեանց պահանջումներէն ստացած այսպիսի
 ծանօթութիւն մը անհունս աւելի արժէք ունի, քան ո՛ր
 և է տեսական ծանօթութիւն, զոր մարդ կրնայ վարժա-
 րանին մէջ ստանալ :

Այս վարդապետութիւնը չ'ուրանար կեանքի գործ-
 նական բնութիւնը, ո՛չ ալ թէ մարդ կը կարօտի գործ-
 նական դաստիարակութեան մը, բայց կը պնդէ թէ՛ ա-
 մենէն գործնական, ամենէն օգտակար դաստիարակու-
 թիւնը այն է, որ կը մարդէ և կը զարգացնէ մարդուս
 կարողութիւնները և զօրաւոր ու ձեռներէց կ'ընէ զայն :

Այս վարդապետութեան կուսակիցները ընդհանրա-
 պէս դասական ուսմանց դիմում ըրած են, Յունարէնի
 և Լատիներէնի, իբր լաւագոյն եղանակը մտաւոր մար-
 զանքի, և ուստի դասական մշակութիւնը ընդհանրա-
 պէս էական մասը նկատած են դասական կրթութեան :
 Բայց իմաստասիրութիւն, չափազիտութիւն, պատմու-
 թիւն և ուրիշ ուսումներ ալ էական համարած են զայն
 կատարելագործելու համար :

Իրապաշտական վարդապետութիւնը թէ և չ'ուրանար
 թէ աստիճան մը կրթութիւն անհրաժեշտ է, կը պնդէ
 սակայն թէ դաստիարակութեան առաջին նպատակն է
 մտքին մէջ օգտակար ծանօթութիւն, նիւթական իրո-
 ղութեանց ծանօթութիւնն համբարել : Ընդհանուր գա-
 ղափարն այն է թէ կեանքը գործնական է, ու դաս-
 տիարակութիւնն ալ պէտք է գործնական ըլլայ, և ու-
 սանողը գործնական կեանքի պատրաստուի : Մարդոց
 մեծագոյն մասին փափաքը չ'է նշանաւոր ուսանող ըլ-
 լալ, իրենց փափաքն է նշանաւոր վաճառական, ար-
 ուեստագէտ ըլլալ, և իրենց ուսումներն ալ պէտք է որ
 իրենց այս փափաքին ծառայեն : Ինչ որ իրենց պէտք է,
 կ'ըսուի, իրենց արուեստին հետ կապակցութիւն ունեցող
 իրողութեանց ծանօթութիւնն է : Ինչ օգուտ պիտի ու-
 նենայ վաճառականին կամ նոյն իսկ պետական մարդուն
 Լատիներէն և Յունարէն կամ Այճեպրան ու վերլուծա-
 կան երկրաչափութիւն սորված ըլլալն : Ինչո՞ւ այնքան
 թանկագին ժամանակ պիտի վատնեն այնպիսի ուսում-
 ներու համար, որք չ'են կրնար գործնական կեանքի
 պատշաճեցնել զինքը երբէք : Դաստիարակութիւնը պէտք
 է գիտական ըլլայ, վաճառականական և ճարտարագոր-
 ծական : Նպատակը պէտք է ըլլալ օգտակար ծանօթու-
 թիւն հաղորդել, և տալ այնպիսի կրթութիւն մը, որ
 այս դրութիւնը կը պահանջէ դիպուածաբար, կրթու-

Թիւնն ՚ի մասնաւորի այն կարողութեանց, որք զմեզ յարաբերութեան մէջ կը դնեն նիւթական աշխարհի հետ:

Նոր չ'է դաստիարակութեան այս վարդապետութիւնը: Պէյքըն, Լօք, Ռուսօ, Քօմնէնիւս, Փեսթալօծի, բոլորն ալ քիչ կամ շատ իրապաշտական տեսութիւնը պաշտպանեցին: Բայց ներկայ ժամանակիս մէջ, ի մասնաւորի վերջին տարիներուս մէջ է որ ամենէն աւելի ուշադրութիւն գրաւած է այն, և Հէրպէթ Սքէնսըր է անոր մեծագոյն ջատագովը: Այս դպրոցին այժմու ներկայացուցիչներուն համոզումն այն է թէ դաստիարակութիւնը գլխաւորաբար գիտական ըլլալու է, և գործնական օգուտի մը ծառայելու է բացարձակապէս:

Այս վարդապետութեան ջատագովութեան արդիւնքներէն մին այն եղած է որ բազմաթիւ արուեստանոցներ հաստատուած են ամէն երկրի մէջ, շատ մը երկիրներու հանրային վարժարաններու մէջ մաս մը արուեստական դաստիարակութիւն ներմուծուած է, և կարգ մը երկրորդական վարժարաններու ու համալսարաններու ուսմանց ծրագիրը փոփոխութիւններ կրած է:

Գերմանիոյ մէջ երկու դրութիւնները կը գործեն քով քովի պետական և քաղաքապետական վարժարաններու մէջ: Նոյնը մասամբ կը տեսնուի նաև Ռուսիոյ մէջ, թէև դպրոցական դրութիւնը հոն այնքան յաճախ կը փոփոխուի, որ մարդ չը կրնար որ և է բանի իբր օրինակ յիշել զայն: Գերմանիոյ մէջ գիմնազիոնները, պետական վարժարանները գրեթէ բացարձակապէս նուիրուած են դասական ու չափազիտական ուսմանց, մինչդեռ քաղաքապետական իրագիտական վարժարանները գլխաւորաբար գիտական ու գործնական են: Այս երկու դրութիւնները քով քովի ապրած են շատ մը տարիներէ ի վեր և լաւ մը փորձուած թէ՛ Գերմանիոյ և թէ՛ Ռուսիոյ մէջ: Համալսարանական ու զինուորական հեղինա-

կութեանց համոզումն այն է թէ իրագիտական վարժարաններու չըջանաւարտները որոշ կերպով ստորին են գիմնազիոններու չըջանաւարտներէ: Ո՛չ այնքան լաւ սպայ կրնան ըլլալ, ո՛չ ալ այնքան լաւ արուեստագէտ:

Օգտակար իրողութեանց պարզ ծանօթութիւնը յարմար չ'ընեն զմարդ ս'ը և է դիրքի համար, մինչդեռ լաւ կըթուած միտքը կը կարողացնէ զինքը թէ՛ դիւրութեամբ ստանալու ինչ ծանօթութիւն որ էական է, և թէ՛ միանգամայն այդ ծանօթութիւնը գործնականապէս ի կիրարկանելու իր արուեստին մէջ, ինչ որ ալ ըլլայ այդ արուեստը: Ամէն տեսակ արուեստանոցներ և մասնագիտական վարժարաններ անհրաժեշտ են անտարակոյս: Եւ ո՛չ մէկ ջատագով դասական վարդապետութեան կը կարծէ թէ մարդ կրնայ առաջնակարգ բժիշկ կամ փաստաբան կամ մեքենագէտ ըլլալ առանց մասնաւոր պատրաստութեան այդ գործին համար, բայց իր համոզումն այն է թէ արուեստանոց կամ մասնագիտական վարժարան մտնելէ առաջ, դաստիարակութեան նպատակը չ'է օգտակար ծանօթութիւն ստանալ, այլ մտքին կարողութիւնները մշակել: Այս պէտք է ըլլայ նպատակը նախնական և երկրորդական վարժարաններուն այսինքն հասարակ դպրոցներու, քոլէճներու, գիմնազիոններու կամ լիսէններու, և այն մարդիկը որ այս վարժարաններուն կրթութիւնն ստացած են, առաջնակարգ դիրքերը պիտի գրաւեն բոլոր արուեստներուն և ասպարէզներու մէջ:

Այս եղած է անտարակոյս աշխարհիս փորձառութիւնը մինչև հիմա: Եւրոպիոյ բոլոր երկիրներուն առաջնակարգ մարդիկը բոլոր ասպարէզներուն մէջ ընդհանրապէս խօսելով՝ այսպիսի դաստիարակութիւն մ'առած են:

Բայց մինչդեռ կ'ընդունինք թէ դասական վարդապետութիւնը անտարակոյս ճշմարիտ վարդապետութիւնն է դաստիարակութեան, կրնանք տակաւին խոստովանիլ

Թէ իրապաշտ վարդապետութիւնն ալ արժանի է մեր ուշադրութեան գէթ մէկ կէտի մը մէջ : Կրնանք ընդունիլ թէ զարգացում և կրթութիւն դաստիարակութեան ճշմարիտ վախճանն են, և տակաւին հարցնել թէ արդեօք լոկ դասական դաստիարակութեան հին գաղափարը ճշմարիտ գաղափար մ'է կամ ո՛չ : Լատիներէնէ և Յունարէնէ զատ չը կան ուրիշ ուսումներ որ կրնան նոյն նպատակին ծառայել : Իմ հաւատքս այն է թէ գիտութիւնը իրաւամբ տեղ մը գրաւած է իրեն նոյն իսկ դաստիարակութեան զուտ կրթական դրութեան մը մէջ, և կարգ մը պարագաներու մէջ արդի լեզուներու և գրականութեան ուսումն ալ կրնայ կրթութեան այնքան յաջող միջոց մ'ըլլալ որքան Լատիներէնը ու Յունարէնը : Իմ հաւատքս է նմանապէս թէ Իմաստասիրութեան ուսումը, յարմար շրջանին մէջ, լաւագոյն եղանակն է մտքին կարողութիւնները զարգացնելու : Չափազիտութեան ու Պատմութեան մասին հարկ չեմ համարիր խօսիլ :

Իմ կարծիքս այն է թէ ուսման լոկ դասական ընթացքը և լոկ գիտական ընթացքը երկուքն ալ անյաջող պիտի ըլլան ամբողջ մարդը զարգացնելու : Իրապաշտները գնահատելի ծառայութիւն մը մատուցին աշխարհի մասնանիշ ընելով ընդարձակագոյն մշակութիւն մը քան լոկ դասական մշակութիւնը. և իրենց վարդապետութեան գէթ այս մասը կրնանք շնորհակալութեամբ ընդունիլ : Ճիշդ գիտութեանց ուսումը, նիւթական իրողութեանց զգուշաւոր գննութիւնը, այս իրողութեանց դասակարգութիւնը և բնութեան օրէնքներուն հետազօտութիւնը անսարակոյս կը զարգացնեն մտքին կարգ մը կարողութիւնները, զոր դասական ուսումները հազիւ կրնային գործունէութեան մէջ գնել, ու որք զանց առնելու չ'են : Գիտութիւնն ուրեմն իր տեղն ունենալու է մեր դաստիարակութեան դրութեան մէջ և կարեւոր տեղ

մը, ո՛չ թէ որովհետեւ գիտական իրողութիւններ աւելի գործնական արժէք մ'ունին ուսանողին համար, այլ որովհետեւ մտքին ամբողջական զարգացման կը նպաստէ :

Այս տեսակէտէն չ'է որ իրապաշտները կը պաշտպանեն իրենց դրութիւնը, բայց իմ հաւատքս այն է թէ այս է ճշմարիտ տեսակէտը : Չ'եմ կրնար անկեղծութեամբ ըսել թէ այն գիտական ծանօթութիւնները, զորս Բուլէճի մէջ ստացայ, աւելի գործնական արժէք մ'ունեցած են ինձ համար քան ուրիշ ծանօթութիւններ :

Աւելի երջանիկ և աւելի օգտակար չ'եղայ գիտնալով թէ ջուրը թթուածինէ ու ջրածինէն բաղադրուած է քան գիտնալով թէ Ուէլինկթըն շահեցաւ Վաթերբոյի ճակատամարտը կամ թէ՛ ուղղանկիւն եռանկիւնի մը մէջ հակուղիղին քառակուսին հաւասար է միւս երկու կողմերուն քառակուսիներուն : Պէտք չ'է մոռնալ թէ մեր խօսքն հոս գիտական գիւտերուն աշխարհիս մատուցած գործնական ծառայութեանց վրայ չ'է, այլ միայն գիտութեան արժէքին վրայ իբր միջոց դաստիարակութեան դպրոցին մէջ : Գիտութիւնը ունի իր տեղը ու իր արժէքը : Կ'ընդունինք զայս սրտագին, այլ նոյնքան սրտագին կը ժխտենք գիտական իրապաշտին պահանջը թէ գիտութիւնը միակ կամ ամենէն կարեւոր միջոցն է դաստիարակութեան : Դաստիարակութեան նպատակն է զարգացնել, որքան կարելի է, ամբողջ մարդը, և գիտական կրթութիւնը առանձինն կարող չ'է ընել զայս : Չը հասնիր բարոյական բնութեան, չը զարգացնէր մարդկային հոգւոյն այն բարձրագոյն կարողութիւնները, որք բարին, ճշմարիտն ու գեղեցիկը կը նկատեն, որ զմարդ կը բարձրացնեն նիւթական աշխարհէն վեր, որուն մէջ կապրի, և կը յայտնեն իրեն ինչ որ անտեսանելի է ու յաւիտենական : Չը պատրաստէր զինքը ապրելու նոյն իսկ այս աշխարհիս մէջ, ուր մարդկային երջանկութիւնը կը պա-

հանձնէ բան մը բարձրագոյն և լաւագոյն գիտական իրողութիւններէն, կամ այն Գիտական Տգիտութիւնէն, որ Զրգիտականութիւն կը կոչէ ինքզինքը: Լոկ դասական դաստիարակութիւնն կարելի է որ զմարդ տարօրինակ կերպով տգէտ թողու մեր դարուն գիտական գիւտերուն և ընթացիկ հարցերուն մասին, բայց չ'օտարացներ զինքը Մարդկութեան մեծագոյն և ազնուագոյն բաներէն: Զը մարեր իր համակրութիւնն իր ընկերներուն նկատմամբ: Զընք զինքը հնապարձ և ինքնահաւան: Պատճառ չըլլար իրեն ուրանալու զԱստուած և դարերու իմաստութիւնը արհամարհելու: Թէև պաշտօնան չեմ լոկ դասական դաստիարակութեան, այսու ամենայնիւ հազար անգամ նախապատիւ կը համարեմ զայն լոկ գիտական դաստիարակութիւնէն: Բայց ստիպուած չ'ինք այդպիսի ընտրութիւն մը ընելու: Կրնանք հաւատար արդարութեամբ վարուիլ երկուքին հետ ալ, և զանոնք միացնել այնպէս որ բոլոր կարողութեանց ամբողջական զարգացումն ու կրթութիւնը ապահովենք: Մեր պարտքն է անտարակոյտ այնպէս մարդիկ մեր ուսանողները, որ պատրաստ ըլլան գիտական մարդիկ ըլլալու, եթէ փափաքին, կամ գէթ կարող ըմբռնելու և զնահատելու գիտական խորհրդածութեանց արժէքը:

Թերեւս շատ հեռացած երեւիմ մեր առաջադրեալ նիւթէն, որ է երկրորդ նպատակը դպրոցական դաստիարակութեան, այսինքն հրահանգութիւնն օգտակար գիտելիքներու մէջ: Բայց դիւրին չ'է այս երկրորդ կէտը քննել առանց ուշագրութիւն հրաւիրելու դաստիարակութեան տարբեր վարդապետութեանց, որք այս նիւթին հետ սերտիւ կապակցեալ են, և որք զաշխարհ կը յուզեն այժմ:

Կ'ընդունիմ թէ հրահանգութիւնն օգտակար գիտելիքներու մէջ էական թէև ո՛չ ամենէն կարեւոր մասն է

դպրոցական դաստիարակութեան: Հաւանականաբար նուազ կարեւոր է մեր ընդհանրապէս կարծածէն ալ: Հաւանականաբար՝ ինչ որ ընդհանրապէս օգտակար գիտելիք կը կոչուի, կը մոռցուի, և կը ստիպուինք դարձեալ սորվիլ զայն դպրոցէն դուրս, կամ ընաւ գործնական օգուտ մը չ'ունի մեր հացը ճարելու մէջ. թէև կրնայ տարբեր կերպերով նպաստաւոր ըլլալ մեր երջանկութեան, ու ընկերութեան մէջ մեր դիրքը բարձրացնել իբր խելացի, դաստիարակեալ մարդիկ:

Նախնական դպրոցներու ուսումները, զոր օրինակ, Ընթերցում, Գիր, Թուարանութիւն, Աշխարհագրութիւն և այլն, երբեմն յարգի կը նկատուին իրենց կարեւորութեան պատճառաւ իբր օգտակար գիտելիքներ: Այս գործնական արժէքն ունին արդարեւ, բայց այն մտաւոր կրթութիւնը զոր մանուկը կ'ընդունի զանոնք սորվելով, վերջապէս ամենէն կարեւոր առաւելութիւնն է նախնական դպրոցին: Երկրորդական դաստիարակութեան մէջ մարդիկ առ հասարակ օգտակար գիտելիքներու կարգը պիտի դասեն արդի լեզուները, Պատմութիւն, չափական գիտութեանց մէկ քանի ճիւղերը, գիտութիւնները ու թերեւս ճարտասանութիւնը և Քաղաքական Տնտեսութիւնը: Կ'ընդունիմ թէ այս ուսումանց հետեւող ո՛ր և է մէկը կրնայ այնպիսի ծանօթութիւններ ստանալ, որ կրնան ապագային մէջ օգտակար ըլլալ իրեն՝ դրամական արժէք մ'ունենալու իմաստով: Բայց եթէ առնենք ո՛ր և է անհատ ուսանող մը և հետեւինք իրեն իր ասպարէզին մէջ, պիտի տեսնենք որ շատ աննշան մէկ մասը նոյն իսկ մեր այս օգտակար համարած գիտելիքներուն, զորս այս ուսումներէն քաղած է, գործնական արժէք մ'ունի իրեն՝ իր գործին մէջ:

Ասկէ շատ աւելի ընդարձակ իմաստով մը կրնանք նկատել օգտակար գիտելիքին տեղը դաստիարակութեան

մէջ : Կրնանք օգտակար գիտելիքներուն կարգը դասել ամէն ծանօթութիւն , զոր դաստիարակեալ մէկը պարտի ունենալ կարողացնելու համար զինքը , ո՛չ միայն շահիլ իր ապրուստը , այլ և ըլլալ Ընկերութեան օգտակար մէկ անդամը , իր ժողովրդեան մէկ առաջնորդը , իր ցեղին բարերարը : Եթէ այս լայն իմաստով նկատենք օգտակար գիտելիքի խնդիրը , պիտի գտնենք որ այս գիտելիքները քիչ շատ կը պարունակուին նոյն իսկ այն ուսմանց մէջ , որոնց կը հետեւինք գլխաւորաբար կըրթութեան տեսակէտով , և պիտի տեսնենք թէ այդպիսի ծանօթութիւն էական է կարողութեանց զարգացման ու կըրթութեան համար :

Լոկ դասական մշակութեան ջատագոյնները կը պընդեն թէ ծանօթութիւնը Յունաստանի և Հռոմայ ոսկեղէն դարերուն , հին օրերու մեծ իմաստուններուն վարդապետութեանց , մարդկային խորհուրդի և մարդկային կեանքին յառաջդիմութեան , լեզուի և արուեստի կատարելագործութեան , աւելի օգտակար է քան ո՛ր և է գիտական կամ արուեստական ծանօթութիւն : Իրաւունք ունենան կամ ոչ , սա ստոյգ է թէ շատեր ցայսօր կը ստանան այդպիսի ծանօթութիւն մը , որ հինն է այն մտաւոր կըրթութեան , որ դասական մշակութեան արդիւնքն է : Առանց ծանօթութեան կըրթութիւն կարելի չ'է : Նոյն իսկ Զեւական Տրամաբանութիւնը և գուտ չափական գիտութիւնները ստացական ծանօթութեան վրայ հիմնուած են , և գէթ օգտակար են իբր հիմ մտաւոր կըրթութեան :

Աւելի տեսութիւն մը պիտի ըլլար այս լայն տեսութիւնը , բայց ընդհանրապէս դաստիարակութեան վրայ ճառող հեղինակներ օգտակար գիտելիք ըսելով կը հասկընան ինչ որ մէկ կամ ուրիշ կերպով դրամական արժէք մ'ունի , և այս գաղափարն է որ ես այժմ ունիմ ինկատի :

Այդպիսի գաղափար մը ինկատի ունենալով էր որ նշանաւոր հեղինակ մը կ'ըսէր թէ Համալսարանը տեղ մ'է , ուր ոչինչ օգտակար կը սորվեցուի :

Ըսուած է յաճախ թէ Քօլէճի մը արժանապատուութեանն անվայել է օգտակար գործնական բան սորվեցընել . թէ դաստիարակութիւնը ո՛ր և է առնչութիւն չունի դրամ ջանելու խնդրոյն հետ : Իմ կարծիքս այն է սակայն թէ մաս մը օգտակար գիտելիք էական է մեր կարողութեանց կատարեալ զարգացման համար : Վարժարանի մը արժանապատուութիւնն անվայել չ'է աղջիկներուն կար կարել և կերակուր եփել սորվեցնել , ո՛չ ալ Քօլէճի մը արժանապատուութեան հակառակ է սղու մը Առեւտրական Թուաբանութիւն կամ մեքենական գործիքներ գործածել սորվեցնել : Այդպիսի ծանօթութիւնը դաստիարակութեան ամբողջութիւնը չէ , ո՛չ ալ անոր ամենէն կարեւոր մասը , բայց ըստ իմ կարծեաց , պատճառ մը չը կայ որ այսպիսի ծանօթութիւններ իրենց տեղը չ'ունենան նոյն իսկ բարձրագոյն վարժարաններու մէջ :

Վտանգը չափազանց ընդարձակ տեղ մը յատկացընելուն մէջն է : Ինչպէս արդէն ըսինք ի սկզբան , դըպրոցը մեր դաստիարակութեան մէկ փոքր մասը միայն կուտայ մեզ , և ինչ բան որ դպրոցէն դուրս կը ստանանք , ընդհանրապէս օգտապաշտ տեսակէն է , ընդհանրապէս կը պատկանի գործնական կեանքի , ինչպէս մենք սովոր ենք կոչել զայն : Մեր հացը ճարելու հարկը , աշխարհի մէջ յառաջ երթալու և դրամ շահելու փափաքը , ահա այս է բնութիւնն մեծագոյն մասին այն աղջեցութեան , որ զմեզ կը շրջապատէ մեր գործնական կեանքին մէջ ամէն օր : Եթէ նոյն աստիճանին ստորնացնենք դպրոցն ալ և հարստութիւն դիզելու միջոցներն հայթայթելու վայր մ'ընենք միայն զայն , ջնջած պիտի ըլլանք իր գլխաւոր արժէքը : Այսպիսի արդիւնքի մը եր-

կրեւն է որ ծնունդ տուած է այն գաղափարին թէ դպրոցին արժանապատուութեան անվայել է օգտակար գիտելիքներ սորվեցնել բնաւ :

Մինչև ցարդ դպրոցը գլխաւոր պաշտպանն եղած է կրօնքի, բարոյականի, գեղարուեստի, իմաստասիրութեան և կեանքի բոլոր բարձրագոյն ու ազնուագոյն զբաղումներուն : Անդադրում բողոք մ'եղած է այն գաղափարին դէմ թէ նիւթական հանգիստը և նիւթական պերճանքը գլխաւոր վախճանն են կեանքի : Սորվեցուցած է ուսանողին թէ իր միտքը աւելի արժէք ունի քան իր մարմինը, և իր հոգին՝ աւելի քան դրամը : Կեանքի ամենէն աւելի դիւրագգամ չըջանին մէջ՝ տպաւորած է անոր մտքին վրայ թէ ինքն ունի իր ներքը իմացական և բարոյական ուժեր, որք ընդունակ են զարգանալու, և որք աւելի արժէք ունին իրեն քան ուրիշ ո՛ր և է բան աշխարհիս մէջ, որք, ի մի բան, ճշմարիտ կեանքը կը կազմեն : Իր խորհուրդներն Փիլիքական կեանքէն ու այդ կեանքին զանազան փառասիրութիւններէն դարձուցած է բարձրագոյն և լաւագոյն բանի մը :

Երբ դպրոցը կը դադրի ընելէ դայս, երբ կը կորսընցնէ իր ազդեցութիւնը, և կը թերանայ այս տպաւորութիւնը գործել ուսանողին վրայ, երբ պարզապէս մարդարան մը կ'ըլլայ շուկայի գործառնութեանց համար, բամպակի գործարանէ կամ մանրավաճառի մը խանութէն տարբեր բան մ'եղած չըլլար : Դադրած կ'ըլլայ իր դաստիարակելու կոչումը :

Երբ մեր արդի քաղաքակրթութեան մէջ Անաստուածութիւնն ու Նիւթապաշտութիւնը յաջողին դպրոցը ստորնացնելու իրենց ջանքին մէջ, դաստիարակութեան կոչումը ո՛չ եւս արժանի պիտի ըլլայ մեծ մարդոց փառասիրութեան : Արհեստ մը պիտի ըլլայ միայն, և վճարուած ամսաթոշակին համեմատութեամբ պիտի ըլլայ իր

հրապոյրն ալ : Այդպէս չ'է այժմ, և այդպէս չ'է եղած անցեալին մէջ : Ասպարէզ մ'է, որ աշխարհիս այնուազոյն մարդիկներէն ոմանք հրապուրած է և արժանի եղած է ամենէն բարձր ու ամենէն մաքուր փառասիրութեան : Կան անտարակոյս շատ դասատուներ, որք արհեստի մը պէս կը նային իրենց գործին վրայ կամ սարելու միջոցի մը պէս, բայց միշտ եղած են շատեր որք նոյն իսկ թէև աննշան ու աղքատ, ըմբռնած են իրենց կոչումը և անոնց նուիրած են ինքզինքնին Առաքեալնեւրուն ու մարտիրոսներու արժանի անձնուրացութեամբ մը :

Հոս Արեւելքի մէջ եղած են մարդիկ, որոնցմէ ումանք դեռ ողջ են, որք նոր կեանք մը ներշնչած են հարիւրաւոր երիտասարդներու, և փոխած են բովանդակ ոգին այն քաղաքներուն ուր պաշտօն վարած են : Ես անձամբ տեսած եմ տարրեր աղգայնութիւններէ ծերունի դասատուներ, և ունկնդրած իրենց՝ խորին յարգանօք, երբ իրենց աշխատութեանց վրայ կը խօսէին այնպիսի եռանդով մը, որ իրենց տարիքին տկարութիւնը մոռցնել կուտար իրենց վայրկեան մը : Ճշմարիտ դասատուն, որքան ալ փոքր ըլլայ իր դիրքը Ընկերութեան մէջ, կը կատարէ գործ մը՝ որ արժանի է ամենէն մաքուր ու ամենէն աղնիւ փառասիրութեան : Մնամհ հոգիներ կը կրթէ ու կը ձեւակերպէ :

Եւ այս կը թելադրէ ինձ ընդհանուր եզրակացութիւնն իմ գաղափարներուս դաստիարակութեան ընտելութեան և նպատակին մասին :


Դաստիարակութեան նպատակն է ամբողջ մարդը զարգացնել, մարդ պատրաստել . մանուկին սորվեցնել իր ճշմարիտ առնչութիւնը այն աշխարհին հետ, յորում կ'ապրի, և Աստուծոյ հետ՝ որ իր Արարիչն է, զարգացընել իր կարողութիւնները այնպիսի եղանակաւ մը, որ համերայն ըլլան իր ձակատագրին հետ . և համակիր Աս-

տուժոյ կառավարութեան հետ: Ոչինչ կայ մեծ աշխարհիս մէջ, ոչինչ որ ունենայ ինքնածին ու անկախ արժանիք, բայց միայն մարդ, և մարդուն այ մտնութիւնն ու արժանիքը իր հոգեկան ու խնայական բնութեան մէջ է: Աշխարհս իր բոլոր ուժերովն ու կարելիութիւններովն ստեղծուեցաւ իր գործածութեան համար, և ժամանակիս բոլոր նիւթական գիւտերն ու հնարքներն այնչափ միայն արժէք ունին, որչափ կրնան մարդկային բնութեան զարգացման ծառայել: Շատ քիչ նշանակութիւն ունի մէկու մը ըսելը՝ ես արհեստաւոր եմ, ես վաճառական եմ, ես հարուստ եմ, կամ աղքատ եմ, փաստաբան եմ, կամ նոյն իսկ գիտուն, դասատու, հեղինակ կամ արուեստագէտ: Ասոնք ամենքն ալ ստորագաս և դիպուածական բաներ են: Եթէ կրնամ ըսել ես մարդ եմ, ճշմարիտ մարդ, յայնժամ կը ճանչնամ ինքզինքս իբր գերագոյն արարածը, իբր բոլոր արարչագործութեան վախճանն ու նպատակը, ստեղծուած Աստուծոյ պատկերովն և առարկայն իւր անհուն սիրոյն: «Մարդս գեր ի վերայ է բոլոր մարդկային ձեւակերտներէն, բոլոր մարդկային հաստատութիւններէն, թէ՛ անոնց վախճանն է և թէ՛ միանգամայն անոնց նպատակակէտն ու փառքը:» Անոր համար աշխարհս ստեղծուեցաւ, անոր համար հրեշտակները սպասարկու հոգիներ են, անոր համար Քրիստոս մեռաւ, անոր առջև սիրոյ յաւիտենական կեանքի մը տեսիլն ու կարելիութիւնն պարզած է Աստուած:

Դաստիարակութեան գլխաւոր առարկայն, բարձրագոյն նպատակն է այս մարդկային բնութեան ուժերն ու կարելիութիւններն կրթել ու զարգացնել, այնպէս որ կարենայ ինքզինքն ճանչնալ, ըմբռնել իր ճշմարիտ առնչութիւնը նիւթական աշխարհի հետ, ժառանգել իր թագաւորութիւնը, և ժամանել այն բարձր ճակատագրին, որուն համար ստեղծուեցաւ: Եթէ դպրոցին կեդրոնական

նպատակը մարդկութիւնն է, մարդկութեան ալ կեդրոնական իրողութիւնը նկարագիրն է: Ազնիւ, անկախ, Աստուծոյ ու մարդուս ծառայութեան նուիրուած նկարագիր մը միակ մեծ նպատակն է բոլոր ուղիղ դաստիարակութեան: Այսպէս կրթուած սղան կրնայ երկրագործ ըլլալ, կամ վաճառական կամ քաղաքագէտ, բայց ասոնցմէ զատ խիստ գերազանց բան մը պիտի ըլլայ, նաև ՄԱՐԴ պիտի ըլլայ:

Այս է դաստիարակութեան ճշմարիտ մտատիպարը, ճշմարիտ նպատակը դպրոցին, և բոլոր միւս նպատակներն ստորադաս պէտք է ըլլան ասոր: Լաւագոյն կարելի դրութեամբն և լաւագոյն դասատուներովն իսկ՝ այս մտատիպարն ընաւ չը պիտի իրագործուի լիովին գործնականապէս, այնպէս որ՝ կարող ըլլայ այսպիսի նկարագիր մը արտադրելու: Բազմաթիւ են հակառակորդ ազդեցութիւններն դպրոցէն դուրս, և նոյն ինքն ուսանողին սրտին մէջ: Մանուկը մարդուն նման ազատ է չարը ընտրելու փոխանակ բարին: Կրնայ դիմադրել ամէն բարի ազդեցութեան և կործանիլ դասատուին աչքին տակ՝ հակառակ զինքը փրկելու համար եղած ամէն ջանքի: Այս է տխուր փորձառութիւնը ամէն դասատուի, ամենէն տխուրը իր բոլոր փորձառութիւններէն: Այս է փորձառութիւնը նոյն ինքն Մեծ վարդապետին, իւր ընտրած առաքեալներէն մին մատնիչ եղաւ: Բայց այս ճախողուածները պէտք է աւելի սերտիւ փարիլ տան մեզ մեր մտատիպարին, և աւելի զգուշաւոր ընեն զմեզ մ՛ր և է դրութեան մասին, որ կը ձկտի նիւթը մտքէն, և նիւթականը հոգեւորականէն վեր բարձրացնել:



Գ Լ ՈՒ Ն Բ.

ՅՈՒՆԱԿԱՆ ԵՒ ՀՈՌՎՄԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱԹԻՒ պատճառներ կան մասնաւոր հե-
տաքրքրութեամբ նկատելու դաստիարակութեան
այն դրութիւնները, որք Յունաստանի և Հռովմի քա-
ղաքակրթութիւնը զարգացուցին:

Մեր արդի դաստիարակութիւնը երկար ժամանակ
Յոյն և Հռովմէական հեղինակներու ուսումնասիրութեան
մէջ կը կայանար գլխաւորաբար: Այս հեղինակներուն
ծանօթութիւնը տակաւին էական կը նկատուի բարձրա-
գոյն մշակութեան, և շատերու կողմանէ՝ իբր միակ մի-
ջոցը մտաւոր կարողութիւնները յաջողութեամբ զարգա-
ցնելու:

Իաց աստի, Յունաստանի և Հռովմի քաղաքակր-
թութիւնը կը ճանչնանք իբր հիմ մեր քաղաքակրթու-
թեան, և շատ նկատումներով՝ մերինէն աւելի հիմնայի,
կը զգանք թէ հնութեան այս մեծ խորհողներուն կը
պարտինք մեծ մաս մը մեր ներշնչումին արուեստի և
գրականութեան ինչպէս նաև կառավարութեան և իմաս-

տասիրութեան մէջ, և բնականաբար կը հարցնենք թէ
ինչպէ՞ս այնքան մեծ եղան անոնք: Ինչպէ՞ս դաստիա-
րակութեան որ աշխարհի դաստիարակները եղան իրենք
ալ: Ի՞նչ էր գաղտնիքը իրենց դրութեան:

Այս հարցումին պատասխանը շատ դիւրին ըլլալու
է կը կարծենք: Իրենց բուն գրութեանց միջոցաւ այն-
քան ընտանի ենք իրենց կեանքերուն, գործերուն և պատ-
մութեան որ պէտք է կարող ըլլանք իրենց դաստիա-
րակութեան դրութիւնը ըմբռնել լիովին: Իայց զարմա-
նալին այն է որ դժուար է գտնել անոր մէջ որ և է բան
մը, որ մասնաւորապէս արժանի ըլլայ մեր ուշադրու-
թեան, և շատ մը կէտեր դժուար է հասկնալն անգամ:

Յունական պատմութեան այն դարաշրջանը որ զմեզ
մասնաւորաբար կը հետաքրքրէ, այն է որ արտադրեց
այն մեծ մարդիկը, որոնց գործը կ'ուսումնասիրենք և
որոնց անունները դեռ ընտանի են մեզ ամենուս. իմաս-
տասէրներն, թատերգակներն, արուեստագէտներն և
պետական մարդիկը, որք Քրիստոսէ իբր չորս հարիւր
տարի առաջ ապրեցան, այն ժամանակամիջոցին որ ու-
կեղէն դարն էր Յունաստանի:

Ի՞նչպէս դաստիարակութեան այս մարդիկը:

Պէտք է դիտել նախ և առաջ թէ ասոնք ապրեցան
այնպիսի դարու մը մէջ, երբ դեռ հանրային դաստիա-
րակութեան գաղափարը կը պակսէր, երբ գերի էր ժո-
ղովրդեան գանգուածը, և սակաւաթիւ էին քաղաքա-
ցիները: Տակաւին ուսմկավարութեան մը տակ, ուր իւ-
րաքանչիւր անհատ քաղաքացի ամբողջացուցիչ և գոր-
ծոն մէկ մասն էր պետութեան, երբ չը կար գաղափարը
անհատական ազատութեան, այլ պարզապէս պետու-
թեան ազատութեան, և դարձեալ՝ ուր պետութիւնը
այնքան փոքր էր որ բոլոր քաղաքացիները կրնային մէկ
տեղ մը գումարուիլ ի միասին հանրային բարեկաւու-

Թեան մասին խորհրդակցելու համար, և ամէնքն ալ մէկզմէկ կը ճանչնային անձնապէս, և դարձեալ՝ բաց աստի, ուր իւրաքանչիւր փոքր պետութիւն յարաբերութեան մէջ էր բազմաթիւ ուրիշ պետութիւններու հետ միեւնոյն ցեղէն, միեւնոյն լեզուէն և գրեթէ յար և նման նկարագրով:

Այս պարագաները ըստ ինքեան հաւանականաբար աւելի նպատակցին Յունաստանի մեծ մարդոց կրթութեան և զարգացման քան որ և է մասնաւոր դպրոցական դաստիարակութիւն, և նոյն ինքն դպրոցական դաստիարակութիւնն ալ այս արտասովոր պարագաներուն պատշաճեցուած էր:

Ամերիկայի մէջ ունինք քիչ շատ ատոր նման քաղաքային կառավարութիւն մը: Քաղաքին բոլոր քաղաքացիները մէկտեղ կը հաւաքուին քաղաքին վերաբերեալ գործերուն, ծախքերուն, տուրքերուն եւայլնի վրայ խորհրդակցելու և գանձք կարգադրելու համար: Երբ տղայ էի, ես միշտ ներկայ կը գտնուէի, և տակաւին կ'երթամ ներկայ ըլլալ այդպիսի ժողովներու, երբ Ամերիկա կը գտնուիմ:

Այնպէս կը յուսացուի որ Անգղիոյ նոր օրէնքները պիտի ծառայեն միեւնոյն նպատակին, պիտի ծառայեն դաստիարակելու ժողովուրդը կառավարական, հանրային բարոյականի, հանրային առողջութեան եւայլն, բոլոր մեծ խնդիրներուն մէջ:

Տակաւին կար դպրոցական դաստիարակութիւն մը, որուն ամենամեծ կարեւորութիւն կ'ընծայէին Յոյները: Ազնիւ և ճշմարիտ մտատիրպար մ'էր այդ դաստիարակութեան նպատակը՝ ընդհանրապէս խօսելով: Իր նպատակն էր մարդել, կրթել և զարգացնել բնական կարողութիւնները, արտադրելու համար այնպիսի մարդիկ, որ արժանի ըլլան պետութեան: Զանց չ'էր ընել որ

Քիզիզական, ո՛չ իմացական և ո՛չ բարոյական կարողութիւնները, այլ կը նկրտէր զարգացնել բովանդակ մարդը:

Յունական դաստիարակութեան Պլատոնի հետեւեալ նշանաւոր նկարագրութիւնը գաղափար մը կուտայ թէ ինչպէս կ'ըմբռնէին այդ դաստիարակութեան նպատակը:

«Դաստիարակութիւնը և յորդորը մանուկներու նոյն իսկ առաջին տարիներէն կը սկսին և մինչև կեանքին վերջը կը շարունակուին: Մայր, դայեակ, հայր և դաստիարակ իրարու հետ կը կուռին մանուկին կրթութեան վրայ՝ զիրենք հասկնալ սկսելուն պէս: Մանուկը չը կրնար բան մ'ընել կամ բան մ'ըսել ինքնիրեն: Անոնք ցոյց պիտի տան իրեն թէ իրաւացի է այս, անիրաւ՝ միւսը. սուրբ է այս և այն՝ անսուրբ, ըրէ՛ գայս և ետ կեցի՛ր անկէ: Եւ եթէ հնազանդի՛ լաւ. իսկ եթէ ոչ, ուղղութեան կը բերեն զինքը սպառնալիքներու և հարուածներու միջոցաւ:»

«Այսուհետև կը զրկեն զինքը դասատուներու, պատուիրելով անոնց որ հոգ տանին իր վարք ու բարքին նոյն իսկ աւելի քան իր ընթերցանութեան ու երաժշտութեան: Եւ դասատուներն ալ իրենց եղած պատուէրին համեմատ կը վարուին: Եւ երբ մանուկը իր գրերը կը սորվի և կը սկսի գրուածը հասկնալ, ինչպէս առաջ միայն խօսուածը կը հասկնար, իր ձեռքին մէջ կը դնեն մեծ բանաստեղծներուն գործերը, զորս դպրոցին մէջ կը կարդայ: Ասոնց մէջ կը գտնուին շատ խրատներ և հին համբաւաւոր մարդոց շատ պատմութիւններ ու գովեստներ, զորս գոց սորվի կը պահանջուի իրմէ, որպէս զի բարի նախանձով հետեւող ըլլայ անոնց և փափաքի անոնց նմանիլ: Դարձեալ, քնարին դասատուն նմանապէս կ'աշխատի որ իր մատաղատի աշակերտը ծանրագլուխ ըլլայ և չարութիւն չ'ընէ: Եւ երբ քնարը սորվեցունեն իրեն, կ'սկսին իրեն ծանօթացնել գործերը աւելի ընտիր

բանաստեղծներու որք քնարերգակ բանաստեղծներ են : Եղանակներ կը յօրինեն անոնց և տղաքներ կ'ընտանեցնեն անոնց ներդաշնակութեան և կշռութեան , որպէս զի սորվին աւելի ազնիւ , ներդաշնակ և կշռաւոր ըլլալ , և այսպէս աւելի յարմար՝ խօսքի և գործի , որովհետև մարդուս կեանքին ամէն մէկ մասն ալ կը կարօտի ներդաշնակութեան և կշռութեան : Ապա զանոնք մարմնամարդի դասատուին կը զրկեն , որպէս զի իրենց մարմինները լաւ եւս ծառայեն առաքինի մտքին , և իրենց մարմններու տկարութիւնը պատճառ չըլլայ իրենց երկչոտութեամբ վարուելու ո՞ր և է առթիւ :»

«Երբ մկաններուն գործը աւարտի , պետութիւնը զարձեալ կ'ստիպէ զիրենք օրէնքները սորվիլ , և այդ օրէնքներուն և ոչ թէ իրենց քմահաճոյից համեմատ ապրիլ : Եւ ճիշդ ինչպէս գիր գրել սորվելու ատեն գրավարժութեան դասատուն նախ գրոցով գիծեր կը քաշէ մանուկ սկսնակին օգնելու համար , և գրի տախտակը իրեն կուտայ և կը պատուիրէ որ գծուած գիծերուն հետեւի , այսպէս ալ քաղաքը կը գծէ օրէնքներ , որք հին ժամանակներու բարի օրէնագէտներու հնարքներն են , և այս օրէնքները երիտասարդին կը տրուին որ իր առաջնորդն ըլլան իր ընթացքին մէջ թէ՛ իբր իշխող և թէ՛ իբր իշխուող» :

Սովորատի ժամանակ թէ՛ մասնաւոր և թէ՛ հասարակաց դպրոցներ կային Աթէնքի մէջ : Ասոնք ցերեկեայ վարժարաններ էին , թէև այնպէս կ'երեւի թէ իմաստասէրներուն սովորութիւնն էր իրենց ամենէն խոստմնալից աշակերտներն իրենց տունը՝ քովերնին պահել ժամանակին մեծագոյն մասը :

Շատ վիճաբանութեան նիւթ եղած էր թէ ո՞րն էր մանուկին դպրոց մտնելու յարմար տարիքը , և տարբեր կարծիքներ կային այդ մասին ինչպէս կան հիմա : Այդ

տարիքը չորսէն եօթն էր : Առտուն կանուխ կ'սկսէր դպրոցը և մանկավարժը կամ մանկածուռն (փետակօկոս) դպրոց կը տանէր մանուկները : Տուն կ'երթային նախաձաշի համար , և ապա դարձեալ դասատուիւն կուեննային կէս օրէ առաջ : Արիստոփանէսի խօսքին նայելով՝ աշակերտները դպրոց կ'երթային մերկ , նոյն իսկ ամենէն ցուրտ օդի ատեն . և դպրոցին մէջ ալ գեանին վրայ կը նստէին : Կէս օրէն վերջ գիմնադիոնը կամ մարմնամարզարանը կ'երթային մանկածուռն հետ՝ խաղալու և մարմնամարզութիւններ ընելու համար : Երեւցածին նայելով՝ այն ատեն ալ ունէին զրեթէ միեւնոյն խաղերը՝ զորս մեր տղաքները կը խաղան հիմա :

Հաւանական է որ այս դպրոցի դասատուները շատ քիչ թոշակ կ'ընդունէին և շատ յարգանք ալ չէին վայելեր : Մէկը վարժապետ կոչելը շատ հեռի էր իրեն պատիւ համարելէ և մանկածուն ալ գերի մ'էր : Բայց հետըզհետէ այս դպրոցները բարեկարգուեցան . ունեցան լաւագոյն շէնքեր , աւելի կան կարասի , նուազ ծեծ և աւելի ուսողութիւն : Վարժապետին զիրքը աւելի պատուաւոր եղաւ . և մասնաւոր դասատուներ , որ իմաստակ կը կոչուէին , մեծ գումարներ կ'ընդունէին հարուստներու զաւակներուն կրթութեան համար : Բայդ դատաբար քիչեր կը յաճախէին իմաստասիրութեան բարձրագոյն դպրոցները . բայց յաճախ այդ դպրոցներուն դասընթացքը տասն և հինգ կամ քսան տարի կը շարունակուէր : Արիստոփանէ կ'ըսէ թէ երբ մարդ մը երեսուն և հինգ տարեկան ըլլայ , այն ատեն միայն իր կեանքի զբաղումը սկսելու յարմար տարիքին հասած կ'ըլլայ :

Պրատտիկ կարծիքը այն ըլլալ կը թուի թէ՛ և ո՛չ մէկ մանուկ պէտք է ստիպել ուսանիլ և թէ միայն ամենէն խոստմնալից ուսանողներէն սակաւաթիւ ընտրեալները նախնական դաստիարակութենէն աւելի ընդունելու

են: Բայց այս, ինչպէս ուրիշ խնդիրներու նկատմամբ կ'երեւի թէ կարծեաց նոյն տարբերութիւնը կար նոյն ատեն, որ կայ հիմա Եւրոպիոյ մէջ: Մինչդեռ ոմանք դպրոցի մէջ բոլոր պատիժներուն դէմ կ'առարկէին և դասատուին յանցանքը կը համարէին, եթէ մանուկը իր ուսումներէն չ'ախորժէր. ուրիշներ խստութեան կողմնակից էին, և կ'ուզէին որ դաւազանը մանուկին միտքը արթնցնելու ծառայէր:

Բայց ինչ որ Յունական դաստիարակութեան մէջ արժան է մեր հետաքրքրութեան այս երկրորդական մանրամասնութիւնները չեն, այլ այն խնդիրը թէ ի՞նչ կ'ուսանեին, ի՞նչ միջոցներ կը գործածուէր դպրոցներուն մէջ Յոյն ժողովրդեան զարգացման համար:

Հազիւ կրնանք մեր աչքերուն հաւատալ, երբ կը կարդանք թէ Յունաստանի մէջ դաստիարակութեան երեք գլխաւոր ճիւղերն էին Մարմնամարզ, Երաժշտութիւն և Ընթերցանութիւն, և թէ և երբ մօտէն քննենք թէ ի՞նչ նիւթեր կը պարունակէր այս ճիւղերէն իւրաքանչիւրը, մեր դարմանքը կը նուագի, տակաւին դժուարութիւն կը կրենք հասկնալու համար երաժշտութեան տրուած այս արտաքոյ կարգի կարեւորութիւնը:

Ըստ կարի ջանանք բացատրել ուսման այս բաժանումները մի առ մի:

Ա. Մարմնամարզ. — Յայտնի է թէ ֆիզիզական կրթութիւնը խիստ կարեւոր տեղ մը կը գրաւէր Յունական դաստիարակութեան մէջ, և մարմնոյն ուժն ու գեղեցկութիւնը առաջնակարգ յատկութիւններ կը նկատուէին: Սովորութիւն էր նոյն իսկ Աթէնքի մէջ կամ մեռցնել կամ իրենց բազդին թողուլ այն երախաները, որ տկար կամ խեղանդամ կը ծնէին, և կարողները ամենէն կանուխ տարիքէն սկսեալ՝ կրթել մարմնամարզական կրթութեան մէջ, որուն համար մասնաւոր դպրոց-

ներ և մասնաւոր դասատուներ կային՝ Փաշեւրաս տղայոց և Գիւննազիուսն ալ երիտասարդներուն համար: Հրապարակային մեծ խաղերուն համար ուրիշ կրթութիւն կար. և ուրիշ կրթութիւն մ'ալ զինուորական ծառայութեան համար: Այս բոլոր ֆիզիզական կրթութեան շարժառիթը կը թուի եղած ըլլալ այն գաղափարը թէ իւրաքանչիւր քաղաքացի զինուոր է, և պէտք է կարող ըլլայ պատերազմի և ձեռք ձեռքի կռուելու յոգնութեանց տոկալ: Անտարակոյս կար նաև գեղասիրական շարժառիթ մը, սէրը անձին գեղեցկութեան և մկաններու զարգացման, որ այն մերկութեան օրերուն մէջ աւելի ակներև էր քան մեր օրերուն մէջ, երբ մարդիկ աւելի ուշադրութիւն կուտան շքեղ հանդերձներու քան բարեկազմ կուրծքի կամ բազուկի ու սրունքի խոշոր մկաններու: Պղատոնէն զատ ուրիշ Յունական հեղինակներուն մէջ չատ քիչ հետք կը գտնեմ ֆիզիզական զարգացման մէկ ուրիշ շարժառիթին, որուն վրայ այնքան կը խօսուի մեր ժամանակին մէջ — ֆիզիզական առողջութեան անհրաժեշտ ըլլալը մտաւոր և բարոյական կատարեալ զարգացման համար:

Պղատոն յստակ կերպով մատնանիշ կ'ընէ այս գաղափարը:

Արիստոտէլ կ'ըսէ թէ, մարմնամարզական կրթութեան նպատակն է փայտաբիր հայթայթել: Բայց կ'ընդունի այն իրողութիւնը թէ այդպիսի կրթութիւն մը յաճախ կը վնասէ մարմնոյն և կը տկարացնէ միտքը: Շատ խմաստութեամբ զիտել կուտայ թէ միտքը և մարմինը չեն կարող միեւնոյն ժամանակ գործել. քանզի մարմնոյն աշխատանքը կ'արգիլէ մտքին յառաջդիմութիւնը և մտքինն ալ՝ մարմնոյն:

Այնպէս կ'երեւի թէ Յունաց մէջ խնդիր մը կար մարմնամարզական կրթութեան թէ՛ արժէքին և թէ՛ շարժառիթին մասին:

Ինչ որ ալ ըլլար սակայն շարժառիթը , ստոյգ է թէ Յոյները շատ աւելի ուշադրութիւն կուտային ֆիզիքական կրթութեան քան զոր կուտան մարդիկ մեր օրերը աշխարհի ո՛ր և է մասին մէջ : Անգղիոյ և Ամերիկայի տղոց չափ ըմբշական խաղեր չ'ունէին , բայց շատ աւելի կանտնաւոր մարմնամարզական կրթութեան մը կ'ենթարկուէին :

Բ. Երաժշտութիւն . — Արդի հեղինակները դժուարութիւն կը կրեն բացատրելու երաժշտութեան դերը Յունաց մէջ : Շատեր այնպէս ենթադրած են թէ երաժշտութիւնը կը պարունակէր Մուսայից պաշտպանած բոլոր արուեստները , այսինքն բանաստեղծութիւն , գեղարուեստ , գրականութիւն և գիտութիւն , ինչպէս նաև ինչ որ մենք հիմա կը հասկնանք ձայնական և գործիական երաժշտութիւն ըսելով : Այս գաղափարը ընդունուած է գլխաւորաբար այն նկատողութիւնով որ անհաւատալի կերեւէր որ երաժշտութիւնը ամենէն կարեւոր տեղը գրաւէր դաստիարակութեան մէջ :

Բայց իմ կարծիքս այն է թէ այս տեսութիւնը չ'արդարանար ո՛ր և իցէ գիտողութիւններով , զոր կը գտնենք Յոյն հեղինակներուն մէջ : Երբ Պլատոն և Արիստոտել դաստիարակութեան վրայ կը ճառեն , յայտնի է թէ երաժշտութիւն ըսելով երաժշտութիւն միայն կը հասկընան և ուրիշ ոչինչ : Արիստոտէլ Բաղաքականութեան վրայ գրած գործին մէջ կ'ըսէ .

«Գրեթէ չորս նիւթեր կան զորս սովոր են մանուկներուն սորվեցնել . Ընթերցում , Մարմնամարզ , Երաժշտութիւն , որոնց թուոյն վրայ ոմանք կ'աւելցնեն Նկարչութիւն *** : »

«Գալով երաժշտութեան ոմանք թերևս տարակոյս մը ունենան իրենց մտքին մէջ , քանի որ մարդիկ առհասարակ հաճոյքի սիրոյն համար կը գործածեն զայն : Բայց

անոնք որ ի սկզբանս՝ դաստիարակութեան մէկ կէտն ըրեր են զայն , գիտէին թէ Բնութիւնը կը պահանջէ որ ո՛չ միայն զբաղեալ ըլլանք պատշաճօրէն , այլև կարող ըլլանք վայելել մեր կեանքը պատուաւոր կերպով : *** Բայց դիւրին գործ չէ որոշակի մատնանիչ ընել թէ ի՞նչ ազդեցութիւն ունի երաժշտութիւնը , ո՛չ ալ թէ ի՞նչ պատճառներով գործածելու է զայն մարդ . թէ՛ արդեօք զբոսա՞նք կամ իբր կաղզուրիչ , քունի և գինիի նման . թէ արդեօք ունի՞ առաքինութիւն արտադրելու կարողութիւնը : *** Կամ թէ արդեօք ունի՞ իր օգտակարութիւնը մեր կենցաղավարութեան մէջ և առաջնորդ մ'է խոհմութեան » :

Երկար խորհրդածութիւններէ վերջ՝ կ'եզրակացնէ թէ այս երեք նպատակներուն ալ կը ծառայէ : Ապա կ'սկսի ցոյց տալ թէ ի՞նչ գործիքներ և ի՞նչ երգեր պէտք է սորվիլ և թէ՛ ի՞նչ է բարոյական ազդեցութիւնը երաժշտութեան տարբեր տեսակներուն : Կ'առարկէ սրնգին իբր անբարոյական գործիք մը որ կիրքերը գրգռելու կը միտի , և նաև կը տձեւցնէ երեսը : Կ'առարկէ նաև քնաքին ու տաւիղին :

Ապա՝ կը խօսի ներդաշնակութեան ու կշռութեան և Տօրինական , Լիդիական և Փոփոկեան երաժշտութեան բարոյական ու հրահանգիչ ազդեցութեան վրայ :

Եւ ո՛չ ուրեք իր գրութեանց մէջ կը նշմարենք բան մը , որ ցոյց տայ թէ երաժշտութիւն ըսելով մեր հասկըցածէն տարբեր բան մը կը հասկնայ : Ամէն ուրեք քննադատութիւն մ'է երաժշտական գործիքներու և երգերու :

Պլատոն ալ հաւասարապէս որոշ գաղափարներ արտայայտեր է . «Ներդաշնակութիւն և կշռութիւն կը թափանցեն գաղանի տեղերն հոգւոյն որուն սերախ կը կառչին շնորհք բերելով իրենց շարժումներուն մէջ , և շնորհալի ընծայելով հոգին անոր , որ ուղիղ՝ կերպով

դաստիարակեալ է, և անշնորհ՝ եթէ սխալ կերպով դաստիարակուած է, և դարձեալ որովհետև այն որ այս ներքին էակին ճշմարիտ դաստիարակութիւնը ընդունած է ամենայն ճարտարութեամբ պիտի նշմարէ զանցառութիւնները ու թերութիւնները արուեստին ու Բնութեան մէջ, և ճշմարիտ ճաշակով մինչդեռ կը փառաբանէ Բարին, բերկրութեամբ կը նկատէ և իր ներքին էութեան մէջ կ'ընդունի զայն և ինքն ալ բարի ու ազնիւ կ'ըլլայ. իրաւամբ պիտի արհամարհէ և ատէ չարը այժմ իր մատաղ հասակին մէջ, նոյն իսկ երբ դեռ անտեղեակ է անոնց պատճառին, և երբ բանականութիւնը կը հասնի, պիտի ճանչնայ ու ողջունէ զինքը իբր բարեկամ մը, որուն իր դաստիարակութիւնը ընտանեցուցած է զինքը երկար ժամանակէ ի վեր:»

Ապա՝ տարբեր երաժշտական գործիքներու և երաժշտութեան տարբեր տեսակներուն արժանիքներուն վրայ կը խօսի երկարօրէն: Սրինգը թուրութեան ու ապակաշութեան գործիքն էր. քնարը՝ ճշմարիտ իմաստութեան ու բարոյականի:

Խոյս տալու է նոր տեսակ երաժշտութիւններ մուծելէ, քանի որ կարելի չէ երբէք երաժշտութեան ոճերն խառնակել առանց քաղաքին ամենէն կարեւոր հաստատութեանց վրայ ազդելու: Երաժշտութիւնով է որ մեր պահակները կանգնելու են իրենց պահականոցը. որովհետև հոն է որ օրինազանցութիւնը զրբութեամբ ներս կը սողոսկի անտես, զբօսանքի կերպարանքով և որ և է վեաս չը հասցնելու խոստումներով: Տոկուն, հաստատուն կուտան մը. գտնելով՝ լռիկ կերպով մը կը սպրդի բարուց ու վարուց մէջ: Անկէ դուրս կը խոյանայ մեծագոյն թափով և կը մտնէ փոխադարձ դաշնադրութեանց մէջ. և դաշնադրութիւններէ յառաջ կ'երթայ յարձակիլ օրէնքներու ու սահմանադրութեանց վրայ. ի յայտ բե-

քելով իր ծայրայեղ լրբութիւնը, մինչև վերջապէս կը կործանէ ամէն ինչ, թէ՛ հանրային և թէ՛ անհատական:

Այս բոլոր չարիքը կը ծագի պարզապէս նոր ոճով երաժշտութիւն ներմուծելէն:

Այս քաղուածներէս կրնանք եզրակացնել թէ Յոյները՝ երաժշտութիւն ըսելով կը հասկնային, ճիշդ ինչ որ մենք կը հասկնանք, և թէ դաստիարակութեան էական մասը կը նկատէին զայն:

Յունական երաժշտութեան նկարագրին մասին շատ բան չենք գիտեր. ի բաց առեալ թէ մերինէն աւելի պարզ էր թէ՛ իր կազմութեան և թէ՛ գործածուած գործիքներու թիւին մէջ:

1894ին էր որ հին յունական երաժշտութեան մէկ կտորն գտնուեցաւ, առաջին անգամ, Աթէնքի մէջ: Այս կտորն թէ՛ բառերն ունէր և թէ՛ երաժշտական խաղերն: Համբաւաւոր երաժիշտ մը Փարիզի մէջ յաջողեցաւ կարգաւ այս խաղերը, և այս կտորը Աթէնքի մէջ ներկայացուեցաւ մասնաւոր նուագախումբի մը կողմէ: Փոքրագոյն բանալիին վրայ յօրինուած էր այս երաժշտութիւնը. քանի մը տարօրինակ և անակնկալ մասերով, բայց ընդհանրապէս խօսելով՝ ակնկալուածին չափ տարբեր չէր արդի երաժշտութենէն:

Այս յոյժ շահեկան գիւտը թերեւս պիտի ազացուցանէ վերջապէս ինչ որ յաճախ թելադրուած է թէ՛ հին երաժշտութիւնը տակաւին կ'ապրի Յունաստանի հովիտներուն և գիւղացիներուն երաժշտութեան մէջ:

Դաստիարակութեան մէջ գործածուած գործիքներն էին քնարը որ ի սկզբան կը շինուէր լարերը պրկելով կրիային վերին կեղեւին ներսի կողմը: Հետզհետէ աւելի բարդ կերպարանք մը առաւ և եօթնէն տասը լար ունէր և մէկ տեսակ մինչև տասնեւհինգ: Ուրիշ մէկ գործիքն էր նրբասրինգը, զոր պէտք էր ուղիղ բռնել, լայն բե-

րան մը ունէր, և իր եղանակները կ'արտադրէր ճօճացող լեզուակի մը միջոցաւ, որ այդ բերնին մէջ կը գտնուէր: Ասկէ զատ կար նաև սրինգը, կրկնակ նրբասրինգը, փանդիւր և ուրիշներ, որոնցմէ ոմանք զպրոցներու մէջ չ'էին գործածուեր:

Գծուարութիւնը հասկնալ է թէ ինչպէս այս գործիքները գործածելը և երգելը երգելը իբր դաստիարակութեան անջնքան մէկ կարեւոր միջոցը կ'ենթադրուէր: Ասոր բացատրութեան մէկ թելադրութիւնը կը գտնենք Արիստոտելի խօսքերուն մէջ զորս արդէն յիշեցինք: Աթէնք լեցուն էր գերիներով, ազատներուն թիւը փոքր էր, թերեւ 15000—20000. և աշխատութիւնը անարգանք մ'էր ազատ քաղաքացիին համար: Քաղաքացին պէտք էր զինուոր ըլլար, և ասոր համար կը պատրաստուէր մարմնամարզական դաստիարակութեամբ: Երաժշտութիւն կը սորվէր ժամանակը անցնելու համար իր պարսպոյ ժամերուն մէջ, մինչ գերիները աշխատութեամբ կը զբաղէին:

Բայց, բաց աստի, յայտնի է թէ երաժշտական ուսումը մտաւոր կրթութեան կարեւոր մէկ միջոցը կը նկատուէր, ինչպէս Պլատոն կ'ըսէր. ո՛չ միայն կրթութիւն մը ականջին ու ձեռքին համար, այլ հոգւոյն համար: Իր կարծիքն այն էր հաւանականաբար թէ չափին, կշիռին և ձայնի ներդաշնակութեան մէջ կար բան մը, որ սերտ կապակցութիւն մ'ունէր ուղիղ և արամբանական խորհուրդի հետ, և թէ երաժշտութիւնը կը յուզէր հոգւոյն այն խորհրդաւոր խորութիւնները, զոր զգայնութիւն կը կոչենք, և հոգին համերաշխութեան մէջ կը գնէր գունդերուն երաժշտութեան հետ և կը կարողացնէր զայն Անտեսանելին ըմբռնել:

Թէև երաժշտութիւնը այդպիսի կարեւոր տեղ մը չը գրաւեր արդի դաստիարակութեան մէջ, և արդի երա-

ժշտութիւնը առհասարակ շատ քիչ մտքերու հասկանալի է, տակաւին կրնանք ընդունիլ այն իրողութիւնը. թէ երաժշտութեան ուսումը մտաւոր կրթութիւն մ'է և ազդեցութիւն մ'ունի բարոյական նկարագրի վրայ: Չինաստան ինձ ծանօթ միակ երկիրն է, ուր տակաւին կը նկատուի այն իբր կարեւոր մասը դաստիարակութեան: Բայց ամենքս ալ փոքր ի շատէ զգացած ենք իր ազդեցութիւնը և իրողութիւն մ'է թէ կան շատ մը կրօնական յուզումներ, որ միայն երաժշտութեամբ կրնան արտայայտուիլ: Իրողութիւն մ'է նաև թէ երաժշտութեան զօրութիւնը երբեմն փոխած է ճակատամարտի մը ճակատագիրը նոյն իսկ արդի ժամանակաց մէջ, զինուորին քաջութիւնը վերակենդանացնելով և իր հոգին ներշնչելով:

Գժբաղդարար ես ինքս երաժշտագետ չ'եմ, բայց բաւական տեղեկութիւններ ունիմ երաժշտութեան մասին գնահատելու համար այն իրողութիւնը թէ՛ Րոպէրթ-Քուլէճի երաժշտական ճիւղին մէջ վերջին տարիներս եղած յառաջդիմութիւնը ամենէն կարեւոր բարեփոխութիւններէն մին է մեր վարժարանին մէջ: Ըստ բաւականին տեսած եմ անոր ազդեցութիւնը համոզուելու համար թէ վաղեմի Յոյները իրաւունք ունէին դաստիարակութեան էական մէկ մասը նկատելու զայն, և թէ չափէն աւելի անտես եղած է Անգլիական և Ամերիկեան վարժարաններու մէջ:

Գ. Անքերցում. — Դաստիարակութեան երրորդ բաժանումն է այս ըստ Արիստոտելի: Կը պարունակէ կարգալ, գրել, հաշուել և բանաստեղծներն ուսումնասիրել: Շատ նման է այս նախկին Ամերիկեան Նախնական Դըզրոցներու դաստիարակութեան, որ կը բաղկանար կարգալէ, գրելէ, թուարանութենէ և Աստուածաշունչի ուսումէն: Հոմերոս էր Յունաստանի Աստուածաշունչը: Վիճաբանուած ինդիլր մ'էր Պլատոնի ժամանակ և նոյն

խակ անկէ առաջ թէ արդեօք յարմար էր որ սղայք ուսանին, Հոմերոսի, Եսիդոսի և նորագոյն բանաստեղծներուն ողբերգութիւններն ու կատակերգութիւնները: Քսենոփոն և Պլատոն կը դասաւարտեն զանոնք, որովհետեւ կը ձգտին սխալ գաղափար մը տալ Աստուածներուն նկատմամբ, և նկարագրել կ'ապականեն. բայց տարակոյս չը կայ թէ իրենց բանաստեղծներուն ուսումը կարեւոր մէկ մասն էր իւրաքանչիւր Յոյնի դաստիարակութեան: Եւ այս բանաստեղծներէն կը ջանային սորվիլ թէ՛ կրօնք և թէ՛ բարոյականութիւն: Իմաստասէրներուն առարկութիւններն արդարացի էին: Հոմերոսի և Եսիդոսի աստուածները կը գործեն ամէն ոճիւր, որ դասաւարտելի կը համարուի մարդոց մէջ, և յարգանաց արժանի կը հանդիսանային միայն իրենց գերագոյն գիտութեան ու զօրութեան համար: Կրնային վախ ազդել, այլ ո՛չ մեծարանք: Բայց հակառակ իմաստասէրներուն, մանուկները կ'ուսանէին բանաստեղծները, և զանոնք ունէին իւր իրենց առաջնորդը բարոյականի և կրօնքի մէջ:

Կրնանք փոքր ի շատէ հասկնալ այն բանաստեղծներուն ազդեցութիւնը, որովհետեւ Հոմերոսի շքեղ դիւցազներգութիւնները ներշնչած են մարդիկ մեր օրերուն մէջ ալ. բայց յոյժ աւելի մեծ եղած ըլլալու էր իրենց ազդեցութիւնը Յունական նկարագրին վրայ:

Հոմերոս երգեց այնպիսի ոճով մը որ ունէր իր մէջ Յունաց համար ներշնչում մը որ չը կրնար ունենալ մեզ համար, և Ողիմպոսի բոլոր աստուածները Յունաստանի կը ծառայեցնէր: Յունաստանի համար էր որ անոնք գոյութիւն ունէին: Այսպէս Հոմերոս, զոր Յոյն պատանին զոց գիտէր, կը սորվեցնէր անոր այն տեսակ բարոյականը, որ Յունական պետութեան հիմն էր: Ինչ որ դիւցաբանութիւն և կռապաշտութիւն է մեզ համար, իրականութիւն մ'էր իրեն: Ինչ որ պարզ բանաստեղծութիւն

մը և գրականութիւն մ'է մեզ համար, կեանք ու ներշնչում էր իրեն, և անտարակոյս մեծ դեր մը կը կատարէր իր նկարագրին կազմութեան մէջ:

Հաւանականաբար Յոյներուն մեծագոյն մասը ուրիշ դպրոցական դաստիարակութիւն չունէին ի բաց առեալ ինչ որ կը պարունակուէր այս երեք բաժանումներուն մէջ. Մարմնամարզ, Երաժշտութիւն և Ընթերցանութիւն, բայց յայտնի է թէ կային կարգ մը բարձրագոյն վարժարաններ և նաև անհատական դասատուներ, որք այս տարիքներէն աւելի առաջ կը սանկին իրենց ուսանողները: Առաջին կանոնաւոր վճարեալ դասատուները, նախնական դասատուներէն վեր, Իմաստակներն էին, և մասնաւոր աշակերտներու դասեր կ'աւանդէին զանազան նիւթերու վրայ. Ճարտասանութեան կամ խօսելու արուեստին մէջ, որ մասնաւոր գործնական արժէք մ'ունէր: Բայց իմաստակները զանց կ'ընէին կանխագոյն դաստիարակութեան ամենէն էական սկզբունքը. որ է թէ բարոյականը նախնական և ամենէն կարեւոր վախճանն է դպրոցական կրթութեան: Կը հեզնէին բարոյականը և նոյն իսկ անոր հիւսերը քանդեցին:

Կը տեսնենք սակայն որ Պլատոն իր գաղափարական դրութեան մէջ կը յանձնարարէ կարգ մը ուսումներ արդէն յիշուածներէն զատ. չափական գիտութիւնները զոր օրինակ, ի մասնաւորի Երկրաչափութիւնը, և տարակոյս չը կայ որ իր և ուրիշ իմաստասէրներու հիմնած դպրոցներուն մէջ, ուրիշ ուսումներ ալ կ'աւանդուէին. թէև պէտք է յիշել հոս թէ կ'ակնկալուէր որ անոնք որ իմաստասիրութեան այս դպրոցները կը յաճախէին, չափահաս մարդիկ ըլլային 25—35 տարեկան, որք սորված ըլլային ամէն ինչ որ կարելի էր սորվիլ դպրոցական և զինուորական ծառայութեան մէջ:

Արիստոտէլի գործերուն քննանի եզրղները գիտեն

որ բազմաթիւ գանազան նիւթեր ուսումնասիրեց, և գրեթէ քանի մը գիտութիւններ հիմնեց, բայց վարժարանի մէջ չէր որ սորվեցաւ: Անոնք արդիւնքն են իր ինքնաշխատ դաստիարակութեան իր ապագայ կեանքին մէջ, և ո՛չ ինչ որ սորվեցաւ Պղատոնի քով Ակադեմիին մէջ:

Ըստ Պղատոնի, բոլոր ուսումներէն ամենէն կարեւորը Տրամասութիւնն (Dialectus) էր, որուն միայն՝ ամբողջ նինգ տարի պէտք է յատկացնել: Տրամասութիւն ըսելով պէտք է հասկնալ ուղիղ տրամախոհութեան արուեստը իր ընդարձակ իմաստով, կարողութիւնը գտնելու և ճանչնալու ճշմարտութիւնը իր էութեան մէջ: Իմաստասիրութիւն բառին մեր հասարակ գործածութիւնը մասամբ մը կը համապատասխանէ Պղատոնի Տրամասութեան. բայց ըստ Պղատոնի Իմաստասիրութիւնը իր բարձրագոյն իմաստովը Տրամասութեանէն վերջ գալու է: Տասը տարի գիտութիւններն և նինգ տարի Տրամասութիւն ուսանելէ վերջ, պէտք է տասնևհինգ տարի անցնէ հանրային ծառայութեան մէջ, և այն ատեն կըրնայ սկսիլ Իմաստասէր ըլլալ: «Մինչև որ այս փորձէն չ'անցնի և ինքզինքն առաջնակարգ ցոյց չը տայ թէ՛ գործի և թէ՛ ծանօթութեան մէջ, չը կրնար իր հոգւոյն աչքը դարձնել զէպի վեր և նկատել նոյն ինքն Բարին, որ տիեզերական ազբիւրն է լուսոյ: Յայնժամ առօրեայ կեանքի ստուերներն ու պատկերները պիտի ստանան իրենց ճշմարիտ նշանակութիւնը, որովհետև անոնց մէջէն և անոնց վերև պիտի տեսնէ այն իրականութիւնները, զորս կ'անդրադարձնեն: Առանձին գիտութիւնները ո՛չ եւս երազի մէջ պիտի խօսին, այլ իրենցմէ վեր մատնանիչ պիտի ընեն իրեն արթնութեան տեսիլը Բարձակ էակի մը:»

Ասիէ վերջ Յունական պատմութեան մէջ չատ աւելի

ընդարձակ դասընթացք մը ընդունուեցաւ և ընդհանրացաւ Յունաստանի և Հռովմի մէջ: Մինչև Միջին Դարերը տեւեց այս: Ընդհանրական (Encyclical) Դաստիարակութիւն կը կոչուէր և կը պարունակէր Էօթանասուն ճիւղեր ու նախ կը բաժնուէր Եռապատիկին, այսինքն (1) Քերականութիւն, (2) Ճարտասանութիւն, (3) Տրամասութիւն: Եւ ապա Գառապատիկին, այսինքն (4) Թուաբանութիւն, (5) Երաժշտութիւն, (6) Երկրաչափութիւն, (7) Աստեղագիտութիւն: Օտար լեզուներու ուսումը անծանօթ էր Յունաստանի մէջ, և քիչ անգամ Հռովմի մէջ ալ Յունարէնէն աւելին կ'ըլլար: Դաստիարակութեան այս Ընդհանրական դրութիւնը կ'երեւի թէ ծագում առաւ Աղեքսանդրիայէն Եգիպտոսի մէջ, և հինաւուրց Յունական դաստիարակութեան հետ չունի այնպիսի աղբրս մը, որ անհրաժեշտ ընէ մեզ նկատողութեան առնել զայն հոս:

Այս չէր կրթութիւնը այն Յոյներուն, որոնց անունները ընտանի են մեզ, և որոնց գործերը կ'ուսումնասիրենք:

Ընդհանուր Տեսութիւն. — Եթէ ընդհանուր ակնարկ մը ձգենք այն սկզբունքներուն վրայ, որք հիմը կը կալմեն Յունական դաստիարակութեան, կը գտնենք նախ՝ որ իր գաղափարականին մէջ դասական էր աւելի քան իրապաշտական: Կը ջանար մարդիկ և զարգացնել կարողութիւնները, նախ և առաջ բարի քաղաքացի պատրաստել, հուժկու, առողջ մարմնով, կորովի մտքով և մաքուր բարոյականով: Պղատոն ի մասնաւորի կը դասապարտէ մարմնամարզները, որոնց նպատակն է միայն պատրաստել մարմնամարզիկներ, զորս կ'արհամարհէ: Մարմնամարզներն, կ'ըսէ, այնպիսիք պարտին ըլլալ, և միայն այնպիսիք որ յարմար են մարմնոյն և մտքին ընդհանուր առողջութիւնը զարգացնել: Ըստ ինքեան

արժէք չունի մարմնամարզը: Եթէ հոգ չը տարուի՝ կրնայ նոյն իսկ վնասակար ըլլալ, բայց սահմանուած է մարզել և զարգացնել հոգւոյն ներդաշնակութիւնները: Այսպէս նաև միւս ուսումները, օգտակար են միայն այնչափ՝ որչափ մարդկային բնութիւնը կը զարգացնեն և կը պատ-
 բաստեն զմարդ ճշմարտութիւնը ճանչնալու, բարի քա-
 ղաքացի ըլլալու, և ուղիղ կերպով մտնելու ուրիշ աշ-
 խարհի մը կեանքին մէջ, ուր մեր դաստիարակութիւնը պիտի շարունակուի աւելի նպաստաւոր պարագաներու մէջ:

Յունական դաստիարակութեան վարդապետութիւնը ուղիղ էր նաև ուրիշ յոյժ կարեւոր կէտի մը մասին: Բարոյական կրթութիւնը կը նկատէր ս'չ միայն էական այլ և գլխաւոր վախճանը դաստիարակութեան: Իմաստակներն էին որ այս երկու կէտերուն մէջ ալ խոտորեցան գաղափարականէն: Յոյն իրապաշաներն էին անոնք: Մի քանի պատուաւոր բացառութիւններով՝ անոնք անտես ըրին կամ մերժեցին բարոյական կրթութիւնը և իրենց մասնաւոր նպատակն էր սորվեցնել ինչ որ դրամական արժէք ունէր, ի մասնաւորի ծարտասանութիւն կամ խօսելու արուեստը:

Բայց այս անշուշտ կը պահանջէր հարեւանցի ծանօթութիւն մը զանազան նիւթերու: Մարդ չը կրնար խօսիլ, եթէ բան մը չունի վրան խօսելու, և այս իմաստակները իրենց աշակերտներուն միտքը խճողեցին օգտակար համարուած գիտելիքներով: Հաւանականաբար, իմաստակները ներկայացուածին չափ ստորին չէին, և թերեւս ալ յաջող դասատուներ էին: Յունական լեզուն անշուշտ շատ բան կը պարտի իրենց, բայց անոնք բաժնուեցան դաստիարակութեան Յունական հին գաղափարականէն և օգտապաշտ դաստիարակութեան մը վերածեցին զայն:

Արժան է դիտել թէ ի բաց առեալ իմաստասիրա-

կան փոքրիկ դպրոցները, Յունաստանի մէջ ոչինչ կար որ մեր բարձրագոյն կամ համալսարանական կրթութեան համապատասխանէր: Համալսարան մը կայ արդի Աթէնքի մէջ, բայց այդպիսի համալսարան չը կար Սոկրատի և Պլատոնի Աթէնքին մէջ: Թերեւս համալսարանի հազարաւոր ընթերցաւարտներ կան այժմու Աթէնքի մէջ, բայց Փերիկլէսի օրերը կար հոս հոն միայն առանձին անհատ մը, որ մարմնամարզէ, երաշուութենէ և ընթերցանութենէ աւելի բան մը սորված ըլլար: Տակաւին Աթէնքի փառքը չէ Գէորգ թագաւորին իշխանութեան ատեն, այլ Փերիկլէսի և Սոկրատէսի օրով: Ասոնց պէս մարդիկ չը կան այսօր Յունաստանի մէջ, թէև կան շատեր որք Փերիկլէսէն և Պլատոնէն տասն անգամ աւելի «օգտակար գիտելիքի» տէր են: Յայտնի է թէ կրնան մեծ մարդիկ ըլլալ առանց Համալսարանի ու Համալսարաններ առանց մեծ մարդիկներու. և թէնի պէս ականաւոր մէկը թելադրած է այն հարցը թէ արդեօք արուեստի և գիտութեան հաղարաւոր պատկաւորք այնքան արժէք ունին պետութեան մը համար, որքան սակաւաթիւ իմաստասէրներ, և բնականաբար կը հարցնէ թէ ի՞նչ պիտի ըլլայ վիճակը պետութեան մը՝ որ կը բաղկանայ քօլէճներու ընթերցաւարտներէ, որոնցմէ ս'չ մին յօժար պիտի ըլլայ կեանքի աղտոտ գործը կատարելու:

Ասկէ չը հետեւի թէ համալսարանները արժէք չունին: Բայց անոնք կը վերաբերին յետագայ դարերու բարդ քաղաքակրթութեան աւելի քան Յունական քաղաքի ընկերութեան պարզ կեանքին: Յունաստանի պարզ դաստիարակութիւնը պատշաճ էր այն դարուն և տեղւոյն պարագաներուն: Սկզբունքները ուղիղ էին, և այս սկզբունքները գործադրելու միջոցներն ալ լաւագոյնն էին զոր ունէին, բայց անկարելի պիտի ըլլար մեզ ետ երթալ իրենց դրութեան: Մեր քաղաքակրթութիւնը

աշխարհաքաղաքացիական է և բարդ, ընդարձակուած է մեր գիտութեան հորիզոնը: Աստուածային յայտնութիւն մ'է մեր կրօնքը: Մեր ապրելու բովանդակ դրութիւնը փոխուած է, անխուտափելի էր մեր դաստիարակութեան դրութեան ալ փոխուելն: Հակառակ Յունական ազդեցութեան, փոփոխութիւնը սկսաւ Հռովմի մէջ և յառաջ գացած է հետզհետէ:

Պէտք է խոստովանիլ սակայն թէ մեր բարդ դրութիւնը տակաւին հասած չէ՝ այնպիսի կատարելութեան մը որ արդարացնէ զմեզ դատապարտել Հին Յունաստանի դրութիւնը, և մէկ տեսակէտով պարտաւոր ենք զգուշաւոր հետեւող ըլլալ անոր: Քանի որ մարդս նոյնը կը մնայ էականապէս, պատճառ չը կար բաժնուելու անոց հիմնական սկզբունքէն թէ կարողութեանց զարգացումը նախնական նպատակն է դաստիարակութեան, և իր գաղափարական վախճանն է կատարեալ մարդն արտադրել: Այնքան ճշմարիտ է այս հիմա որքան 2300 տարի առաջ:

Հարկ չէ Հռովմէական դաստիարակութեան վրայ ճառել ընդ երկար: Հռովմի այն մեծ մարդիկը, որոնց գործերը կ'ուսումնասիրենք, Յունական դաստիարակութիւն մ'ընդունած էին և իրենց դասատուները Յոյներ էին, որոնց լեզուն սորված էին:

Այս կրթութիւնը աւելի ընդարձակ էր, ինչպէս արդէն ըսինք, քան Աթէնքի կրթութիւնը Սոկրատի օրով: Ընդհանրական դաստիարակութիւնն էր իր ուսման եօթը ճիւղերովը: Բայց անկէ զատ շատ ժամանակ կը արուէր Յունական լեզուի և Յոյն իմաստասէրներու գործերուն ուսման: Մեծ Հռովմայեցոց մեծագոյն մասը կամ Ստոյիկեան էին, Եպիկուրեան և կամ Սկիպտիկեան: Նոր ոչինչ աւելցուցին իմաստասիրութեան մէջ, միայն հետեւող եզան յետագայ ժամանակի իրենց Յունական դպրոցներուն:

Յունական դաստիարակութեան մանրամասնութիւնները կրնան մեզ կարծել տալ թէ վտիտ ու անգոհացուցիչ էր այն: Աղջկանց դաստիարակութիւն չը կար, ո՛չ ալ դաստիարակութիւն կար ժողովրդեան մեծ զանգուածին համար, որ գերի էին: Չը կար ուսումը օտար լեզուներու և օտար գրականութեան, ո՛չ Գիտութիւն կար և ո՛չ Պատմութիւն, շատ քիչ Չափական Գիտութիւն, ի բաց առեալ բացառիկ պարագաները. Մարմնամարդ, Երաժշտութիւն և Ընթերցանութիւն էին միակ ուսումները: Ո՛վ որ դաստիարակութեան այսպիսի դրութիւն մը առաջարկէր արդի ո՛ր և է պետութեան համար, խելագար պիտի համարուէր, և տակաւին չհնք կարող խուսափիլ այն իրողութենէն թէ այս դրութեան տակ երեւցան մարդիկ որք յայնմհետէ մինչեւ ցայսօր դասատուներն եղած են աշխարհի, մարդիկ՝ որոնց անունները տակաւին ընտանի են ամեն դպրոցական-տղայի, իբր ամենէն մեծ մարդիկը, զորս աշխարհ արտադրած է երբէք: Այս կրնայ առեղծուած մը թուիլ մեզ: Բայց թերեւս կայ իր մէջը դաս մը, զոր արժան է նկատել:

Այդ դասը կրնայ այս ըլլալ թէ, եթէ ուղիղ է դաստիարակութեան ընդհանուր նպատակը. եթէ իր նպատակն է ո՛չ միայն պարզապէս գիտելիքներ հաղորդել, այլ աւելի եւս մարդուն բոլոր կարողութիւնները հրահանգել և զարգացնել. այնքան փոյթ չէ թէ յիշէ կ'ուսանի մարդ, այլ թէ յիշչպիս կ'ուսանի: Նշանաւոր անձ մը կ'ըսէր դեռ անցեալ օր թէ շատ չպիտի ցաւէր եթէ իր բոլոր գիտցածը կորսնցնէր, եթէ միայն կարենար պահել մտաւոր կրթութիւնը, մտքին այն կորովը, որ աճած էր իր դաստիարակութեամբ: Արդարև, մենք դպրոցին մէջ մեր սորվածներէն մեծագոյն մասը կը մտնանք, և կը պահենք միայն այն մտաւոր ուժերն, որք զարգացած էին այս նիւթերուն ուսումովը:

Իմ անձնական կարծիքս այն է թէ, մինչ չենք կրնար ընդունիլ Յունական դաստիարակութեան մանրամասնութիւնները, մենք մեր կողմանէ հակառակ ծայրայեղութեան դացած ենք և արդի դպրոցները կը փորձեն չափէն աւելի նիւթեր սորվեցնել: Աշակերտին միտքը յաճախ կը ցրուի և կը չփոթի աւելի քան թէ կը զարգանայ և կը զօրանայ իրեն աւանդուած նիւթերուն բազմութենէն: Իմ հաւատքս այն է թէ վերջ ի վերջոյ աւելի պարզ դասընթացքի մը պիտի վերադառնանք, նուազ ուշադրութիւն պիտի ընծայենք լոկ ծանօթութեան և աւելի՛ բոլոր կարողութիւնները զգուշութեամբ կրթելու:

Արդի դաստիարակութեան մէջ կայ ուրիշ ձգտում մ'ալ, որ խոտորում մ'է հին Յունական գաղափարականէն: Իմաստակներուն դարէն և ոգիէն ներշնչուած է աւելի: Ձգտում մը կայ դաստիարակութիւնը նկատելու իբր էապէս իմացականութեան կրթութիւնը, անտես ընելով բարոյական կարողութիւնները: Ինչպէս տեսանք, հին Յունական գաղափարը ասոր հակառակն էր: Առաջին տեղը կուտար բարոյական կրթութեան, և ամենէն կարեւորն կը համարէր զայն: Հարկ չէ յարել թէ այս ներկայ ձգտումը այնքան հակառակ է Քրիստոնէութեան որքան զասական Յունաստանի դատողութեան: Մեր Քրիստոնէական հաւատքը ինչպէս մեր բանականութիւնը, կը պահանջէ որ մեր դաստիարակութիւնը աւելի Քրիստոնէական ըլլայ: Եթէ դադրի այսպիսի Քրիստոնէական դաստիարակութիւն մ'ըլլալէ, այդ այնքան մեծ կորուստ մը պիտի ըլլայ մեր դարուն, ինչպէս Իմաստակներուն դաստիարակութիւնը եղաւ Հին Յունաստանի:



Գ Լ ՈՒ Խ Գ.

ԼԱԻ ԴԱՍՏՏՈՒԻՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԵՍ դաստատուները այնքան հազուագիւտ են որքան մեծ մարդիկ ուրիշ ասպարէզներու մէջ: Ետտ քիչ փաստաբաններ կան կամ բժիշկներ կամ կղերականներ կամ գիտնականներ, որք նոյն իսկ ազգային համբաւ մը չսահած ըլլան, և խիստ հազուադէպ է որ և է մէկու մը համար որ և է ասպարէզի մէջ աշխարհահռչակ համբաւ մը ստանալ: Այդպիսի համբաւ մը շահող մէկը կամ հանճար մ'է, կամ աշխարհի ուշադրութեան առարկայ եղած է բարեբաստիկ դիպուածի մը միջոցաւ: Այդպիսի դիպուած մ'է, զոր օրինակ որ Տօք. Մաքէնզիի անունը զուգորդած է Գերմանիոյ գահաժառանգին (*) անուան հետ: Նոյնն է նաև դաստատուներու մասին:

Բայց մինչդեռ սակաւաթիւ են համբաւաւոր դաստատուները, բազմաթիւ են լաւ դաստատուները, և ո՛չ ոք պարտի ձեռնարկել այս կամ ուրիշ որ և գործի եթէ միտքը դրած չէ յաջողութեամբ կատարել զայն, եթէ ոչ խարդախ մ'է. և ազէկ պիտի ըլլար, եթէ օրէնքը պատժէր դաստատուներու ձախաւեր պաշտօնավարութիւնը, ինչպէս կը պատժէ բժիշկները: Խեղճ դաստատու անէծք

(*) Ներկայ կայսեր հայրը Ծ. Թ.

մ'է աւելի քան օրհնութիւն մը հասարակութեան մը համար: Իր ձեռքին տակ կը մեծնան սերունդ մը մարդոց որ իր տուած կրթութիւնովը պիտի մշատելին և տխրածնան: Ո՛չ ոք դասատուութեան ձեռնարկելու է, եթէ հաստատապէս որոշած չէ լաւ դասատու մ'ըլլալ:

Բայց ի՞նչ է որ կը պահանջուի լաւ դասատուէ մը: Ի՞նչ են իր կոչման էական յատկութիւնները: Այս է այն խնդիրը, որուն մասին կուզեմ խօսիլ այս ճառին մէջ:

Ա. — Պէտք է որ ինքը բարի մարդ մ'ըլլայ: Չար մարդը չը կրնար երբէք լաւ դասատու մ'ըլլալ: Կրնայ ուսեալ ըլլալ, կրնայ դասատուութեան տեսլականին ընտանի ըլլալ, կրնայ բարոյականութիւն քարոզել իր ուսանողներուն, բայց անյաջող պիտի ըլլայ անտարակոյս: Եթէ դաստիարակութեան առաջին նպատակը նկարագրին զարգացումն է. դասատուն ինքը պէտք է որ տէրն ըլլայ այդ նկարագրին, զոր կը փափաքի իր ուսանողներուն անձին մէջ զարգացնել: Իր օրինակը խիստ աւելի ազդեցութիւն պիտի ունենայ քան իր խօսքերը: Տղաքները աւելի կը նային թէ ի՞նչ պիտի մէկն է դասատուն և ի՞նչ են իր գործերը, քան թէ իր ըսածներուն: Եթէ գինետունները կը յաճախէ, խաղամուտութեան սրահները կամ վատահամբաւ տուններ, քիչ ատենէն այդ տեղերուն մէջ պիտի հանդիպի իր աշակերտներուն: Եթէ անասուած մ'է, թէ և Քրիստոնէականի դասեր աւանդէ, իր աշակերտները անասուածութիւն պիտի սորվին և ո՛չ թէ Քրիստոնէութիւն: Անխուսափելի է այս և այնքան ակներև, որ աւելի լուսաբանութեան չը կարօտիր: Դուք ալ, ես ալ ասոր բազմաթիւ գործնական ապացոյցները տեսած ենք: Եւ նոյնը ճշմարիտ է ամէն երկրի մէջ:

Բ. — Ո՛չ միայն դասատուն պարտի առաքինի մարդ մ'ըլլալ իր բուն կեանքին մէջ, այլ և յաջող ըլլալու համար, իր գործին սկսելու է ուղիղ շարժառիթներով:

Շատ դասատուներ իրենց ասպարէզը կը մտնեն ճիշդ իբր թէ արհեստաւոր կամ վաճառական ըլլային, լոկ իբր իրենց ապրուստը շահելու միջոց մը նկատելով զայն: Այս ըստ ինքեան պախարակելի շարժառիթ մը չէ: Մեր պարտքն է մեր ապրուստը շահիլ. և երիտասարդը, որ կեանքի մէջ կը թեւակոխէ, պարտի նկատողութեան առնել զայս: Ո՛չ ալ անիրաւ կամ անպատիւ բան մ'է արդար հատուցում պահանջել դասատուութեան համար: Մարդս իր գործովը պիտի ապրի, թէ փաստաբան ըլլայ, կղերական կամ դատաւոր: Եթէ դասատուներուն թոշակ չը վճարուէր, շատ քիչ դասատուներ պիտի ըլլային աշխարհիս մէջ: Ես չեմ ճանչնար ո՞ր և է դպրոցի դասատու, որ ձրի կ'աշխատի:

Բանաւոր է որ ամէն երիտասարդ ինկատի առնէ վճարումի խնդիրը, երբ դասատու ըլլալ կը խորհի: Բայց ցորչափ այս է միակ կամ գլխաւոր շարժառիթը, որուն ազդեցութեան տակ կը գտնուի, երբէք լաւ դասատու մը չը պիտի ըլլայ: Նոյն իսկ այն բժիշկը կամ փաստաբանը որ ստակէ զատ ուրիշ բան չը հոգար, արհամարհանքի արժանի կը նկատուի իրաւամբ, որչա՛փ աւելի կղերականը կամ դասատուն: Պէտք է մարդ սէր ունենայ իր կոչման համար իբր կոչում, և անկէ աւելի՞ գընահատում մը իր կոչման բարոյական վախճանին, որ է բարիք գործել: Աստուծոյ կամ մարդուն սէրը, կամ երկուքն ի միասին, պէտք է ըլլան գլխաւոր շարժառիթը դասատուին սրտին մէջ, եթէ ո՛չ ընսու լաւ դասատու մը չը պիտի ըլլայ: Պէտք է տեսնէ և հաւատայ թէ չը կայ ուրիշ կոչում մը՝ որ մեծագոյն պատեհութիւն ընծայէ բարիք գործելու, և պէտք է որ ներշնչուի բարիք գործելու փափաքով, եթէ ո՛չ, աւելի աղէկ է որ երթայ գերի մ'ըլլայ: Եթէ դասատուն բարձր շարժառիթով մը ներշնչուած չէ, իր կեանքը թշուառ կեանք մ'է:

Ենթադրելով այժմ թէ մեր ապագայ դասատուն բարի մարդ մ'է, և իր կոչումը ընտրած է բարձրագոյն շարժառիթներով, մտքի և սրտի ի՞նչ մասնաւոր յատկութիւններ մշակելու է իր յաջողութիւնն ապահովելու համար: Իմ պատասխանս այն է թէ՛

Գ. — Դասատուն պէտք է հասկնայ իր գործին բնութիւնը և նպատակը: Պէտք է ունենայ յստակ գաղափար մը թէ ի՞նչ է որ կուզէ կատարել: Ի՞նչ պիտի խորհինք այն մարդուն նկատմամբ, որ նաւու մը հրամայել պիտի ձեռնարկէ, և ոչինչ գիտէ Նաւուզղութեան մասին, և չը գիտեր իսկ թէ դէպ ի ուր կ'երթայ՝ նաւը: Յիմար պիտի համարինք այդպիսի մէկը, և անտեղի բան մը պիտի ըլլար պաշտօնապէս օրէնք մը հաստատել թէ նաւապետները պէտք է տեղեակ ըլլան Նաւուզղութեան և գիտնան թէ ո՞ւր կ'երթան: Բայց դժբաղդաբար դասատուներու նկատմամբ անհրաժեշտ է ճիշդ այսպիսի օրէնք մը հաստատել: Որովհետև ի՞նչ որ չը պատահիր նաւերու մասին, շարունակ կը պատահի դպրոցներու մէջ: Դասատու կը կարգուին այնպիսի մարդիկ, որոնց մտքէն անգամ անցած չէ թէ ի՞նչ է դաստիարակութեան նպատակը: Այդպիսի մարդիկ կրնան հասարակ նաւավարի մը գործը կատարել, կրնան հրամաններու հնազանդել և տեսակ մը դասախօսութիւն ընել, բայց դասատու անուան արժանի չեն:

Դ. — Դասատուն ո՛չ միայն ընդհանուր գաղափար մը ունենալու է դաստիարակութեան վախճանին մասին, այլ նաև կատարեալ և ճշգրիտ գիտութիւնն այն նիւթին, զոր կ'առաջադրէ ուսուցանել: Կրնան ըլլալ բացառիկ պարագաներ, երբ անհրաժեշտ կ'ըլլայ դասատուի մը համար դաս տալ նիւթի մը վրայ, զոր մասամբ միայն գիտէ: Ես ինքս Ֆրանսերէն և Գերմաներէն դաս տուած եմ նախապատրաստական կարգերու: Բայց այդպիսի դա-

աստուութիւն մը երբէք գոհացուցիչ չէ, և միայն բացառիկ պարագաներու մէջ պէտք է կատարուի:

Դասատուները երբեմն այնպէս կը կարծեն թէ, եթէ իրենց կարգէն պահանջուած իւրաքանչիւր դասը իրենք ալ սորվին հեռզհետէ, այդչափը միայն բաւական է ո՞ր և է նիւթի վրայ դասախօսելու: Աղկէ աւելի մեծ սխալ մը չը կրնար ըլլալ երբէք, և կարգը անտարակոյս պիտի նշմարէ իր դասատուին տգիտութիւնը և արհամարհէ զինքը: Անտարակոյս պիտի խնդրեն բացատրութիւններ՝ զորս ինքն կարող չէ տալ, և պիտի գործէ սխալներ՝ որք ծաղրելի պիտի ընեն զինքը անոնց աչքին և քանդեն իրենց յարգանքը իր մասին:

Բայց լոկ աշխարհավարութեան խնդիր մը չ'է այս: Անիրաւ և անպարկեշտ բան մ'է սորվեցնել ձեռնարկել ինչ որ ինքն ալ չը գիտեր: Կեղծ դրամ անցնելու կը նմանի: Խարդախութիւն և խաբէութիւն մ'է: Եթէ երբէք անհրաժեշտ ըլլայ ժամանակի մը համար, պէտք է լիովին և անկեղծօրէն բացատրել զայն կարգին: Եթէ արդարացի է արուած պատճառը, պիտի գոնէ յարգեն դասատուն իբր մարդ, եթէ չը յարգեն իսկ իր դասատուութիւնը: Միշտ ամօթով և ցաւով է որ կը լսեմ թէ Ռօպրթ-Բօլէճի ընթերցաւարտ մը ձեռնարկած է դասախօսել ինչ որ գիտեմ թէ ինքն ալ չը հասկնար: Ես յանցապարտ կ'զգամ ինքզինքս միշտ անոնց համար:

Պէտք է յիշել նաև թէ ո՞ր և է նիւթի մը վրայ դասադիրքի մը պարունակութիւնը միայն գիտնալը նիւթը գիտնալ ըսել չ'է: Բնաւ չը գիտնալէն լաւագոյն է, բայց բաւական չ'է: Դասատուն շատ աւելի բան գիտնալու է քան ինչ որ կը գտնուի իր գործածած դասագրքին մէջ. եթէ ո՛չ չը կրնար մեծ դասատու մը ըլլալ: Կարող պէտք է ըլլայ լուսաբանելու, բացատրելու և ընդլայնելու դասագիրքը ամէն քայլի: Պիտի ստիպուի ընել զայս, և

եթէ տգէտ է ինքն, կրնայ իր աշակերտները այլանդակ կամ նոյն իսկ վտանգաւոր սխալներու առաջնորդել :

Ե. — Դասատուն պէտք է ուսանող մ'ըլլայ, անդադար նորոգելով և ընդարձակելով իր գիտութիւնը :

Գիտութիւնը նման չ'է դրամի, զոր կը շահին, արկղի մը մէջ կը պահես և հոն կը մնայ : Անդադար նորոգուելու կը կարօտի : Երբ դաստիարակեալ մէկը կը դադրի ուսանելէ, տակաւ առ տակաւ ազդեցութեան մէջ կը ընկղմի. ճիշդ ինչպէս երբ մէկը կը դադրի իր միանները գործածելէ, տակաւ առ տակաւ կը կծկուին, կը սլակակնան և կը տկարանան : Եթէ գինիի տակաւ մը բանաս, և թողուս որ դուրս հոսէ, որչափ ալ լաւ ըլլայ գինին, տակաւը շուտով պիտի պարսպուի, եթէ բերանէն չը լեցնեն այնքան շատ որքան յատակէն կը հոսէ : Այսպէս է նաև միտքը, իր կորովը անվթար պահելու միակ միջոցը զայն գործածելն է, և գիտութեան պաշարը պահելու միակ միջոցը զայն անդադար նորոգելն է : Դասախօսութիւնը ինքնին հիմնայի կրթութիւն մ'է, բայց պէտք է դասախօսողը անխոնջ ուսանող մ'ըլլայ նաև, եթէ ոչ պարզ մեքենայ մը կ'ըլլայ, որ դասերը կ'աղայ, ինչպէս աղօրիքը ալիւր կ'աղայ : Որովհետև դասատուները յաճախ ենթակայ կ'ըլլան այս դժբաղդ ունակութեան, Փետակօկ (Մանկավարժ) բառը փոխած է իր իմաստը և փոխանակ պատուարեր բառ մը ըլլալու անպատիւ բառ մ'եղած է, այնպէս որ նախատինք մ'է փետակօկ կոչել սր և է մէկը : Կը նշանակէ բթամիտ, ձեւապաշտ իմաստակ մը, դաս տուող մեքենայ մը :

Երբ կ'ըսեմ թէ դասատուն պէտք է նաև ուսանող մ'ըլլայ, ըսել կ'ուզեմ թէ ոչ միայն պարտի իր դաս տուած նիւթը, այլ նաև ուրիշ նիւթեր ուսանիլ : Իմաստակ մը կրնայ շարունակ իր դաս տուածը ուսանիլ, բայց տակաւին լոկ մեքենայ մ'ըլլալ, բայց դասատուն

պէտք է ունենայ կենդանի կապակցութիւն մը այն իմացական աշխարհին հետ, որուն մէջ կ'ապրի, և այս ալ կարելի է միայն ուշադրութիւն ընծայելով իր ասպարէզէն տարբեր նիւթերու. իր ժամանակին մեծ մասը ուրիշ նիւթերու ուսումնասիրութեան յատկացնելով : Որովհետև մարդը դասատուէն աւելի մեծ է, պարտաւոր է համակիր հաղորդակցութիւն ունենալ մարդկութեան հետ և մարդկային խորհուրդի ընդհանուր հոսանքին հետ :

Զ. — Դասատուն պէտք է համակիր ըլլայ : Պէտք է համակիր ըլլայ իր աշակերտներուն խորհուրդներուն, զգացմանց, ուրախութեանց և նեղութեանց : Պէտք է սիրէ զանոնք և ինքզինքը սիրելի ընէ անոնց : Բնական տարբերութիւն մը կայ մարդոց մէջ այս մասին : Ոմանք համակիր տրամադրութիւններով կը ծնին, իրենց ընկերներուն սիրտը կը շահին առանց ջանքի, ուրիշներ ի լնէ անհրապոյր կը թուին : Անտարակոյս կանուխ տարիներու ընտանեկան դաստիարակութիւնն ալ կարեւոր դեր մը կը կատարէ այս մասին : Եթէ մէկը չը կրնար համակիր ըլլալ, եթէ միշտ բռնութեամբ պիտի իշխէ, աւելի լաւ է որ դասատու չըլլայ ըստ : Բայց այս տրամադրութիւն մ'է զոր մարդիկ առ հասարակ կրնան մշակել և զարգացնել, եթէ ուզեն : Դասատուն որ իր գործին յարած է բարիք գործելու փափաքով, երիտասարդներու նկատմամբ ունեցած սիրովը, դաստիարակութեան նպատակին մասին իր ունեցած ուղիղ ըմբռնումովը, ընդհանրապէս դժուար չը գտներ այս ոգին մշակել : Կը սիրէ իր աշակերտները դեռ զանոնք չը տեսած, և բնական հետեւանքն կ'ըլլայ համակրութիւն, և հաճոյակատար սէր : Հեղինակ մը կ'ըսէ. «Դասատուութիւնը ազնուագոյն կոչումն է, բայց դժնդակագոյն արհեստը : Ո՛չ ոք կրնայ յուսալ յաջողիլ անոր մէջ, եթէ իր բոլոր հոգին չը դնէ անոր մէջ, և դրական հաճոյք մը չը գտնէ, երբ կը դիտէ արթնցող

ուշադրութիւնը և փայլուն գոյնը մանուկի մը, որոյ մտքին մէջ նոր ճշմարտութիւն մը կը ծագի, կամ որուն մէկ թագուն կարողութիւնը կը սկսի գործել: Չը կայ աւելի հաճոյալի կոչում մը անոնց համար որ կը սիրեն զայն»: Եւ եթէ մէկը այսպէս կը սիրէ զայն, զիւրին է իրեն կատարեալ համակրութիւն տածել իր աշակերտներուն նկատմամբ, անոնց բարեկամն ու օգնականն ըլլալ աւելի քան թէ կաշկանդող մը:

Է. — Դասատուն պէտք է շրջահայեաց ըլլայ: Պէտք է որ ունենայ ինչ որ Ֆրանսացիք կը կոչեն *savoir-faire*, կարողութիւն արագօրէն նշմարելու թէ ի՞նչ կը պահանջեն անմիջական պարագաները, և ըստ այնմ շարժելու: Եթէ կինը շատ անգամ այր մարդէն աւելի զիւրաւ կրնայ կառավարել անզուսպ դպրոց մը, պատճառներէն մին այն է որ կինը ի բնէ մարդէն աւելի ունի այս պահանջուած կարողութիւնը: Պարագաները պատշաճօրէն գործածելու առանց այս կարողութեան, դասատուն անյաջող պիտի ըլլայ անպատճառ. եթէ նոյն իսկ քաղաքին ոստիկանութիւնը իրեն օգնութեան կանչէ: Կան շատեր որ ուրիշ ամէն կերպով կարող դասատուներ են, բայց անյաջող կ'ըլլան բոլորովին պարզապէս այս յատկութենէն զուրկ ըլլալուն համար: Տղաքները տարօրինակ կենդանիներ են, և անակնկալ բաներ կը պատահին միշտ դպրոցի մը մէջ: Ընդհանրապէս չարակամութիւն չէ այս պատահածներուն ներքին շարժառիթը, այլ միայն անպատշաճ խաղասիրութիւն. բայց դասատուն այս պարագաներուն մէջ պէտք է զիտնայ այնպէս վարուիլ որ կարգ ու կանոն անխախտ պահէ, և միանգամայն տղայոց համակրութիւնը չը կորսնցնէ: Այս նիւթիս պիտի վերադառնանք, երբ դպրոցական կարգապահութեան վրայ խօսինք: Միակ կէտը զոր կուզեմ մասնամիջ ընել հոս այն է թէ այս էական յատկութիւն մ'է. և թէ և մասամբ

մը բնազդ մ'է, բնական պարզեւ մը, տակաւին կրնան զայն մշակել և ստանալ նոյն իսկ անոնք, որք շատ քիւռնին զայն ի բնէ:

Ասոր համար, պէտք է մարդկային բնութիւնը ճանչնալ. և դասատուն՝ պէտք է ճանչնայ մանուկին մարդկային բնութիւնը: Որչափ աւելի լաւ հասկնայ անոնց շարժառիթները, անոնց տեսակէտները. և անոնց վրայ ազդեցութիւն ի գործ դնելու լաւագոյն եղանակներն, այնքան աւելի յաջողութեամբ պիտի կառավարէ զանոնք:

Ը. — Դասատուն պէտք է տէր ըլլայ հանգարտ և անխուով բնաւորութեան, և ընդ նմին՝ անսահման համբերութեան: Բնաւորութիւն և համբերութիւն կրնան առանձինն նկատուիլ, քանի որ քանի մը տեսակէտներով կը տարբերին իրարմէ, բայց հանգարտ բնաւորութիւն և համբերութիւն, զիւրագրգիռ բնաւորութիւն և անհամբերութիւն համընթաց են ընդհանրապէս:

Ինքզինքն զսպելն պարտաւորութիւն մ'է զոր ամենքս ալ ունինք առ մեզ և առ Աստուած: Այս պարտաւորութիւնը աւելի զգալի է անոնց համար, որք ուրիշներ ունին իրենց իշխանութեան տակ, զոր օրինակ. սպաններ, ծնողքներն ու դասատուներն: Այս ամենէն կարեւոր դասերէն մէկն է, զոր սորվեցնելու ենք անոնց որ մեր ձեռքին տակ են. մին է ամենէն էական յատկութիւններէն զոր ջանալու ենք անոնց մէջ զարգացնել, և միայն օրինակով կրնանք սորվեցնել զայն: Եթէ մենք կարող չենք ինքզինքնիս զսպել, և տեղի կուտանք բարկութեան, երբ գրգռուինք, մեր ստորակարգեալներն ալ նոյնը պիտի ընեն հակառակ մեր բոլոր յորդորներուն: Դիւրագրգիռ կամ անհամբեր մէկը յարմար չէ դասատու ըլլալու: Աւելի մեաս պիտի գործէ քան բարիք:

Պէտք է ըսել սակայն միեւնոյն ատեն թէ շատեր զիւրագրգիռ և անհամբեր են ի բնէ, բայց հակառակ

ընաւորութիւնը կարելի է ստանալ հարկ եղած ճիգն ընելով: Այս ընաւորութիւնը գրեթէ այնքան էական է կեանքի ուրիշ ասպարէզներու որքան դասատուութեան մէջ: Այս խնդրոյն մէջ մեծ դեր մ'ունի այն կրթութիւնը զոր մեր ծնողք տուած են մեզ մեր մատաղ հասակին մէջ, բայց որ և է տարիքի մէջ ամէն ոք կրնայ, յաղթել այս տկարութեան: Շատ դժուարին է առաջին անգամ, և թերեւս ի սկզբան ուրիշ բան չենք կրնար ընել բայց միայն մեր ակոթները սեղմել և լուռ կենալ, երբ բարկացած ենք: Բայց եթէ այսքան յառաջ գացած ենք պիտի տեսնենք որ պատերազմին կէսը և աւելին շահուած է արդէն: Համբերութիւն հանդէպ անմտութեան, անհոգութեան և սգիտութեան, անսպառ համբերութիւն, այնքան դիւրին չէ ստանալ զայն: Այս դաս մ'է զոր դասատուն պիտի սորվի կրկին և կրկին իր բոլոր կեանքին միջոցին: Միշտ ենթակայ ենք մոռնալութէ ինչ որ ակնհար և պարզ է մեզ համար, բողոքովին նոր է ուսանողին համար: Կը մոռնանք թէ սրչափ ժամանակի կարօտեցանք մենք ալ հասկնալու համար ինչ որ գիտենք: Դժուարին է ինքզինքնիստ զայտոյ տեղը դնել: Բայց մեր պարտքն է այդ: Մեր պարտքն է համակրել իրեն իր նեղութեանց մէջ և համբերութեամբ վարուիլ իրեն հետ: «Խրատ խրատի վրայ, խրատ խրատի վրայ, հրաման հրամանի վրայ, հրաման հրամանի վրայ, քիչ մը հոս քիչ մը հոն» և այսպէս մինչեւ վերջը: Այս պէտք է ըլլայ դասատուին նշանաբանը, և որքան ալ բթամիտ ըլլայ աշակերտը, պէտք է համբերութեամբ վարուիլ անոր հետ: Ուրիշ միջոց չը կայ իր իսկ կարողութիւնները զարգացնելու:

Թ. — Դասատուն պէտք է եռանդուն ըլլայ: Պէտք է իր ամբողջ սիրան ու կեանքը դնէ իր գործին մէջ: Այս է միակ միջոցը աշակերտին եռանդը գրգռելու:

եթէ աշակերտը զուրկ է եռանդէ ու հետաքրքրութենէ շատ քիչ բան սորվելու կարող է, բայց կարելի չէ հետաքրքրութեան ու եռանդի հոգին դնել իր մէջ բռնութեամբ: Պէտք է դասատուէն փոխանցուի այն իրեն անգիտակցաբար:

Այս յատկութիւնը մասամբ բնական է դասատուին: Կան մարդիկ որ չ'են կրնար բնաւ եռանդոտ ըլլալ: Օձի պէս պաղարիւն են, և երբէք չ'են կրնար յաջող դասատու ըլլալ: Բայց այս յատկութիւն մ'է, զոր իւրաքանչիւր դասատու մշակելու և զարգացնելու է իր մէջ: Ոմանք շատ կը յաջողին ոմանք քիչ, բայց գրեթէ ամէն ոք կրնայ քիչ շատ յաջողիլ: Գործի մը մէջ եռանդոտ ըլլալու համար, պէտք է դնահատել անոր կարեւորութիւնը և սիրել զայն իր բուն արժանիքին համար: Դասատուն պէտք է համակրութեամբ կապուի իր աշակերտներուն հետ: Պէտք է սովորի այնպէս զգալ դասարանին մէջ իբր թէ իր աշակերտներուն կեանքը դասը հասկնալէն կախումն ունենար: Առ ժամն իր կեանքին մեծագոյն գործը նկատելու է զայն, և մոռնալու է ուրիշ ամէն ինչ: Այն դասատուն որ կրնայ ընել զայս, կրնայ ամենէն անհրապոյր ուսումը հետաքրքրական ընել թէ իրեն և թէ իր աշակերտներուն: Ան որ չը կրնար ընել զայս, անկարող պիտի ըլլայ իր աշակերտաց հետաքրքրութիւնը արթնցնելու ո՛ր եւ է ուսման մէջ:

Իմ հաւատքս այն է թէ ի՛նչ յաջողութիւն որ ունեցած եմ իբր դասատու, այս յատկութիւնը մշակելուս կը պարտիմ զայն գլխաւորաբար: Կը դիտեմ որ իմ դասերուս մէջ ցոյց տրուած հետաքրքրութիւնը միշտ համեմատական է իմ զգացած հետաքրքրութեանս: Եթէ իմ դասիս երթամ իմ միտքս ուրիշ բանով մը զբաղած, շատ չանցած կը սթափիմ աշակերտներուն անհանդարտութենէն ու անուշադրութենէն, և այս այսպէս է իմաստասիրու-

Թեան Պատմութեան ինչպէս Անգղիերէն դասին մէջ :

Երբ ուսանողները այս ոգին տեսնեն դասատուին մէջ, յօժար են ներել գրեթէ ս'ր և է սխալ որ կրնայ գործել : Կը զգան որ իր սիրտն իրենց հետ է, բարեկամ մը և օգնական մ'է և ոչ ընական թշնամի մը :

Կրնայի յաջող դասատու մը ըլլալու համար պահանջուած այս յատկութեանց վրայ ուրիշ բաներ ալ աւելցնել, խօսիլ զոր օրինակ ի մէջ այլոց, իր անձին վրայ վստահելու կարկուտութեան մասին : Բայց չ'եմ ուզեր այս ասպարէզը այնքան դժուարին ներկայացնել ձեզ որ անաբեկած խոյս տաք անկէ : Ինչ որ ըսի բաւական է ձեր մտքին վրայ տպաւորելու այն իրողութիւնը թէ հեշտին գործ մը չ'է, որուն կրնանք առանց լուրջ նկատողութեան ձեռնարկել, պարզապէս իբր միջոց մը դրամ շահելու :

Ըսել չ'եմ ուզեր թէ անպատշաճ է երիտասարդի մը ուսուցչութեան ձեռնարկելն իբր առժամանակեայ ասպարէզ մը երկու երեք տարուան կամ նոյն իսկ աւելի կարճ ժամանակամիջոցի մը համար, եթէ ուղիղ ոգիով սկսի իր գործը, միտքը դնելով ինքզինքը այդ ասպարէզին նուիրել, որչափ ատեն որ անոր մէջ կը գտնուի, և եթէ անհրաժեշտ յատկութիւնները ունի, կրնայ յաջողիլ և օգտակար դասատու մ'ըլլալ :

Պիտի ունենայ թէ՛ երիտասարդ և թէ՛ աղ դեռ նոր դպրոցէն ելած ըլլալու առաւելութիւնը, այնպէս որ դիւրին պիտի ըլլայ իրեն համակրիլ իր աշակերտներուն և անոնց դժուարութիւնները գնահատել : Իր գործը նաև նորութեան հրապոյրն պիտի ունենայ, և այսպէս հետաքրքրական պիտի ըլլայ իրեն :

Նկատելու ուրիշ կէտ մ'ալ այն է թէ ուսուցչութիւնը լաւագոյն եղանակն է ուսանելու : Երիտասարդ դասատուն պիտի շուտով նշմարէ թէ նիւթ մը սորվե-

ցընելն իբր ուսուցիչ՝ ըստօրովին տարբեր գիտութիւն մը կը պահանջէ քան այդ նիւթին վրայ իբր աշակերտ իր առօրեայ դասն կրկնելն դասատուի մը առջև : Երիտասարդի մը մտքին կրթութեան համար դասաւանդելէ լաւագոյն միջոց չը կայ, եթէ հաւատարմութեամբ կատարէ զայն :

Քանի մը տարի դասախօսելն ունի ուրեմն իբրև կեանքի պատրաստութիւն իր օգուտներն որք երիտասարդը կ'արդարացնեն ձեռնարկել զայն, եթէ իր փափաքն է այդ : Բայց ամէն ինչ որ այս ճառիս մէջ ըսած եմ, իրեն կը պատկանի նոյնքան, որքան մէկու մը որ դասատուութիւնը ընտրած է իբր իր կեանքի ասպարէզը :



ԳԼՈՒԽ Դ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱԽՈՍԵՆԼՈՒ նիւթին անցնելէ առաջ, հարկ է խօսիլ դպրոցը կառավարելու նիւթին վրայ, որ նախագաս է քանի մը պատճառներով: Դըպրոցին բարեկարգութիւնը ինքնին ամենակարեւոր միջոց մ'է աշակերտը դաստիարակելու, և իւրաքանչիւր դասատու ի հարկէ կառավարիչ մ'է նախ՝ և ապա դասախօս: Անբարեկարգ դպրոցը անառակութեանց դպրոց մ'է և ո՛չ թէ դաստիարակութեան հաստատութիւն մը: Դասատուն պէտք է որ կերպով մը յաջողի կարգ կանոն պահել և յարգուիլ, եթէ ո՛չ չը կրնար դասախօսել:

Դպրոցական կարգապահութեան կան երկու ընդհանուր տեսութիւններ, որք կրնան թերեւս պատշաճօրէն կոչուիլ Պրանտական և Անկլօ-Սաքսոնական, և որովհետեւ այնքան բան կախումն ունի այս տեսութիւններէն մին կամ միւրն ընդունելէն, յարմար է ընդհանուր խընդիրը նկատել նախապէս:

Պրանտական տեսութիւնը մանուկը էապէս չար կը համարի և անընդունակ բարի շարժառիթներով գործելու, եթէ ինքն իրեն թողուի: Այնպէս կ'ենթադրէ թէ եթէ մանուկը ինքն իրեն ձգուի, չարութիւն պիտի գործէ անխուսափելիօրէն: Հետեւաբար յարածուն հսկողութիւն մ'ընելու է իր վրայ գիշեր և ցերեկ: Սերտաբանին մէջ, զբօսատեղւոյն մէջ, ննջարանին մէջ, նոյն իսկ արտաքնոցին մէջ դասատուն կամ հսկող պաշտօնեայն իրեն հետ պէտք է ըլլայ: Պատեհութիւն ունենալու չէ իր պատասխանատուութեամբ գործելու ո՛ր և է պարագայի տակ: Իր բովանդակ կեանքը դասատուին ուղղակի հսկողութեան տակ պէտք է ըլլայ: Համոզումն այն է թէ այսպէս փորձութենէ զերծ պիտի ըլլայ, և բարի ունակութիւններ ստանայ:

Անկլօ-Սաքսոնական տեսութիւնը բոլորովին հակառակն է Փրանտականին: Ծննել չ'է իր նպատակը, այլ կրթել: Չ'ուրանար թէ եթէ մանուկը ինքնիրեն ձգուի, հաւանականաբար պիտի մտորի: Մանուկն ինքն իրեն թողուլ չէ իր նպատակը: Բայց կը ջանայ անոր բարոյական բնութիւնը բարոյական ազդեցութեանց միջոցաւ զարգացնել, անոր խիղճը արթնցնել և ուղղել, սորվեցնել իրեն բարին գործել, որովհետեւ իր խիղճը կը վկայէ թէ բարի է: Այս կերպով կը մշակէ ո՛չ միայն արտաքին ու ձեւական ունակութիւններ, այլ այն նկարագիրը, որ հիմն է բոլոր գործերու: Ընդարձակ ազատութիւն մը կը թողու ուսանողին, և կարելի եղածին չափ քիչ խիստ հսկողութիւն կ'ընէ անոր վրայ: Կանոններ կը սահմանէ և անհնազանդութիւնը կը պատժէ. բայց սակաւաթիւ ըլլալու են այս կանոնները և կարելի եղածին չափ վստահութիւն պէտք է ունենալ աշակերտին արժանապատուութեան և արդարասիրութեան վրայ:

Իմ կարծիքս այն է թէ դպրոց կառավարելու այս երկրորդ տեսութիւնն է ուղիղը, և նախ անոր համար որ աշակերտը կեանքի կը պատրաստէ: Երբ դպրոցը կը թողու, իր ետև կը թողու նաև դասատուն ու հսկողը, և ստիպուած է անկախօրէն՝ իր պատասխանատուութեամբ գործել: Պէտք է որ դպրոցը այս անկախ կեանքին համար կրթէ զինքը: Անկլօ-Սաքսոն դրութիւնը կը ծառայէ, բայց Ֆրանսական դրութիւնը չը ծառայեր այս նպատակին: Դպրոցականը ի սկզբանէ սորված է իր պատասխանատուութեամբ գործել դպրոցին մէջ, իր խելճը կրթուած է, և նաև սորված է գործել հետեւանքներն ունենալով ի նկատի: Յրանսական դրութեան տակ իր հսկողը ատել և անկէ վախնալ միայն սորված է և ընել ինչ որ կը ստիպեն զինքը ընել: Իր բարոյական նկարագիրը զարգացած կամ հրահանգուած չ'է, այլ ընդհակառակը տկարացած է անգործութեամբ:

Եթէ երկու դրութեանց արդիւնքները բաղդատենք, պիտի գտնենք որ իրօք աւելի մոլութիւն կայ Յրանսական քան Անգլիական և Ամերիկեան դպրոցներուն մէջ, և այս մոլութիւններն ալ աւելի կործանիչ ընտելիւն մ'ունին: Յրանսական դրութեան տակ կայ արտաքին երեւոյթ մը կարգաւորութեան և զինուորական կարգապահութեան որ միւս դրութեան տակ չ'երեւիր, բայց աւելի արութիւն, աւելի անկեղծութիւն, աւելի մաքրութիւն կայ այս միւս դրութեան մէջ: Ուսանողները աւելի կը յարգեն իրենք զիրենք, աւելի կը վստահին իրենք իրենց, և ունին տեսակ մը նկարագրի կորով, որ կը պակսի Յրանսական դրութեան տակ:

Այս դրութեան և ո՛չ մին կրնայ ուսանողին բարի նկարագիրն ապահովել: Անուղղայ, չար սղաքներ պիտի ըլլան երկու դրութեանց մէջ ալ: Բայց որչափ որ ես կարող եղած եմ դիտել, Անկլօ-Սաքսոն դրութիւնը շատ

աւելի յաջող է խղճամիտ, բարոյական մարդիկ պատրաստելու մէջ:

Թէ ճիշդ մինչև ո՞ր աստիճան այս Անկլօ-Սաքսոն սկզբունքին հետեւելու է գործնականօրէն, այդ կախումն ունի դպրոցին պարագաներէն, դպրոցականներուն տաքիքէն, երկրին սովորութիւններէն և շատ մը ուրիշ բաներէ: Ինչ որ Արիստոտէլ կ'ըսէ քաղաքական կառավարութեան մասին, հաւասարապէս ճշմարիտ է նաև դըպրոցի կառավարութեան մասին: «Խնդիրը գաղափարական դպրոցի մը վրայ չ'է, բայց ինչ որ ամենէն աւելի օգտակար է սրուած պայմաններուն մէջ»: Յրանսականը բացարձակ դրութիւնն է: Ամերիկայի մէջ կան դպրոցներ ուր զուտ ուսման վարութեան դրութիւնն է որ կը ախրէ, բայց ընդհանրապէս Անկլօ-Սաքսոն դրութեան տակ դպրոցները միջին ճամբու մը կը հետեւին: Բացարձակութիւնը վնասակար է. բայց թէ որչափ առաջ պէտք է երթանք դէպ ի դպրոցական ուսման վարութիւն այդ կախումը պիտի ունենայ մասնաւոր պարագաներէ և մանաւանդ դպրոցին աստիճանէն, թէ արդեօք Նախնական, Երկրորդական կամ Մասնագիտական դպրոց մ'է:

Միտք պահելով այս սկզբունքը թէ դպրոցի կառավարութեան նպատակը բարեկարգութիւնն է և անկախ անձնավստահ նկարագրի կազմութիւնը, կրնանք հիմա աւելի մասնաւոր խնդիրներ քննելու անցնիլ:

Ա. — Դպրոցի մը կանոնները պէտք է կարելի եղածին չափ սակաւաթիւ ըլլան. բայց ինչ կանոն որ սահմանուի, պէտք է զայնս ճշգրտութեամբ գործադրել: Ատենօք գիտէի դպրոց մը, ուր վաթսուն և եօթը կանոններ կային, և իրիկունը ամէն մէկ ուսանողէ կը պահանջուէր տեղեկութիւն տալ թէ այս կանոններէն ո՞րեւէ մէկը զանց առնուած էր օրուան միջոցին: Այս օրինակ մ'էր չափազանց կառավարչութեան և թէ՛ կը սրտնեղէր,

թէ՛ կը ստորնացնէր աշակերտները: Կարգ մը կանոններ ըլլալու են. բայց աւելի վտանգ կայ չափազանց շատ քան թէ չափազանց քիչ կանոններ ունենալու: Օրէնքներու բազմութիւնը յանցանքները կը բազմացնէ:

Հարկ չը կայ դպրոցին մէջ կրկին սահմանելու այն օրէնքներն զորս Աստուած, Պետութիւնն ու Ընկերութիւնը սահմանած են արդէն: Այս օրէնքներն արդէն գոյութիւն ունին դպրոցականներու և դասատուներու համար, և թէ և դասատուն մերթ կը պարտաւորուի դիմում ընել անոնց. և կամ գործադրել տալ զանոնք, տակաւին փափաքելի է որ հասկցուի որոշակի թէ անոնք դպրոցական օրէնքներ չեն, այլ բարձրագոյն օրէնքներ, որոնց պարտի ամէն ոք հնազանդիլ: Հարկ չէ նոյնիսկ այսպիսի օրէնքներ դնել զոր օր. «թէ ամէն աշակերտ պարտի հնազանդիլ իր դասատուին, և յարգանք վարուիլ անոր հետ»: Ողջմտութիւնը արդէն կը պահանջէ զայս, և աշակերտներն զիտեն զայն բնազդմամբ:

Դպրոցական կանոններն ըլլալու են միայն անոնք որ անհրաժեշտ են կարգաւորութեան և պատշաճութեան նոյն իսկ դպրոցին մէջ, անոնք որ անհրաժեշտ են դպրոցական պարտաւորութիւններն կանոնաւորապէս և անվըրդով կատարելու համար: Այս կանոններն կրնան տարբերիլ դպրոցին պարագայից և աշակերտաց քաղաքակրթութեան և լուսաւորութեան աստիճանին համեմատ:

Բայց ինչ որ ըլլան այս օրէնքներն, պէտք է որ անոնք, ինչպէս Աստուծոյ, Պետութեան և Ընկերութեան այն օրէնքներն որք դպրոցական կրթութեան շրջանակին մէջ կրնան մտնել. գործադրուին զգուշութեամբ: Միակ կանոն մը որ անգործադրելի կը մնայ կը տկարացնէ դասատուին հեղինակութիւնը, և պատճառ կ'ըլլայ որ բոլոր կանոններն անկարեւոր երեւին:

Ասով ըսել չ'եմ ուզեր թէ խելացութիւն է դասա-

տուին համար անանելն ամէն ինչ որ կ'անցնի կը դառնայ իր դպրոցին մէջ: Կրնայ յաճախ աւելի շահաւոր ըլլալ իրեն համար և դպրոցին համար, եթէ խոյս տայ զիտնալէ կարգ մը բաներ, որ դպրոցական կանոններու կը վերաբերին և ո՛չ թէ բարոյական: Ինչ որ ըսել կ'ուզեմ այն է թէ և ո՛չ մէկ օրէնքի յայտնի զանցաւորութիւնը ներելի ըլլալու է, և երբ բարոյական օրէնքն է որուն դէմ կը մեղանչուի, երբէք անտես ընելու չ'է զայն:

Բ.—Արժան է առանձինն նկատել նաև սակարուներ թէ պէտք չ'է սահմանել ո՛ր եւ է օրէնք և պէտք չ'է սպառնալ ո՛ր եւ է պատիժ, զորս կարելի չ'է գործադրել առանց լուրջ դժուարութեան:

Այդպիսի օրէնքներ միշտ ազդելու մ'են տկարութեան և անկարգութեան: Ինչ որ կը հրամայուի, թերեւս արդարացի է ըստ ինքեան և յոյժ փափաքելի, բայց եթէ զայն գործադրել տալու միջոցը կը պակսի ինձ, պէտք չ'է ո՛ր եւ է օրէնք սահմանեմ անոր նկատմամբ: Զոր օրինակ, եթէ կանոն մը դնեմ թէ սերտողութեան սրահին մէջ աղմուկ ըլլալու չ'է, պարտաւոր եմ սրահին մէջ կարգել հսկող մը, որ գործադրել պիտի տայ դրած կանոնս, եթէ ո՛չ, որքան ալ փափաքելի ըլլայ այդ կանոնը, տակաւին լոկ մեռեալ տառ մը պիտի ըլլայ, և իմ հեղինակութիւնս ալ այդ պատճառաւ պիտի տկարանայ: Ինչ որ կրնամ ընել անվրաս այդպիսի պարագայի մը մէջ է դիմում ընել աշակերտաց պարտաւորութեան ու պատշաճութեան զգացմանց, և իրենց պատուոյն վըստահիլ: Չ'եմ կրնար օրէնք մը դնել և պատիժ սպառնալ: Նոյնը ճշմարիտ է նաև օրէնքներու զանցաւորութեան դէմ սպառնացուած պատիժներուն մասին: Աշակերտի մը հայրը անգամ մը ըսաւ ինձ իր տղուն ներկայութեանը թէ ինձ իշխանութիւն կուտար Վտոխորի մէջ իր որդին խղդրելու, եթէ այս ինչ յանցանքն գործէր:

Այս ըսելով կը յուսար տղան անաբեկել, բայց տղան չ'անաբեկեցաւ բնաւ, որովհետեւ շատ լաւ գիտէր թէ չ'էի կրնար այդ սպառնալիքը գործադրել: Դասատու մը գիտեմ որ անդադար կը սպառնար իր աշակերտնեւրուն մորթը հանել ողջ ողջ, բայց ո՛չ ոք լսեց թէ երբէք փորձեց զայն: Աւելի խելացութիւն է սպառնալիք չ'ընել բնաւ. քան թէ ասոնց պէս սպառնալիքներ ընել, որք յայտնի կերպով անգործադրելի են, և ծաղրելի կ'ընեն զքեզ աշակերտաց առջեւ:

Գ. — Դասատուն պէտք է ցոյց տայ թէ ինքն ալ մեծ կարեւորութիւն կ'ընծայէ օրէնքներուն:

Ընդհանուր իրողութիւն մ'է որ ամէն փորձառու դասատուի ծանօթ է, թէ աշակերտը ամէն օրէնքի կուտայ նոյն կարեւորութիւնը, զոր կը տեսնէ թէ դասատուն կուտայ: Եթէ դասատուն լրջութեամբ կը նկատէ զայն, նոյնը պիտի ընէ և աշակերտը, մինչդեռ ամենէն աննշան կանոնը կարելի է ամենէն կնքեւորը ցոյց տալ, եթէ դասատուն այդպիսի կարեւորութիւն մ'ընծայէ անոր: Եթէ կանոն մը կայ դրուած թէ ամէն աշակերտ իր կօշիկներն մաքրելու է սրահը մտնելէ առաջ, դասատուն կրնայ այդ կանոնը տասնարանեայ պատուիրանքներուն չափ կարեւոր ցոյց տալ, եթէ յաճախ խօսի անոր վրայ, և զգուշութեամբ գործադրել տայ զայն:

Այս իրողութիւնը հիմնուած է մարդկային բնութեան մէկ սկզբունքին վրայ, և կարեւոր է որ դասատուն ըմբռնէ զայն և ըստ այնմ գործէ, ո՛չ իբր պատճառ մը աննշան կանոններ դնելու, այլ իբր ազահով միջոց մը կարեւոր կանոնները գործադրել տալու:

Դ. — Որչափ որ կարելի է պէտք է դնել այնպիսի օրէնքներ, զորս ու չիմ աշակերտներն արժանի պիտի համարեն իրենց յարգանքին:

Միշտ կարելի է աշակերտներուն բացատրել թէ

ինչո՞ւ կարգ մը օրէնքներ անհրաժեշտ են, որովհետեւ չեն կրնար միշտ դպրոցի մը պէտքերը գնահատել, բայց միշտ մեծ առաւելութիւն մ'է աշակերտաց դասողութիւնը և խիղճը քու կողմը շահիլ: Միշտ կ'արժէ ժամանակ տալ բացատրելու թէ ինչո՞ւ այս կամ այն կանոնը դրուած է. և իրենց բարեացակամութեան դիմում ընել ուղղակի: Իրենց պարտաւորութիւնը կրնայ ըլլալ հնազանդիլ օրէնքին անոր հարկաւորութիւնը տեսնեն կամ ո՛չ, բայց իմաստուն հնազանդութիւնը միշտ լուսագոյն և աւելի կատարեալ է քան կուրօրէն հեղինակութեան հպատակիլն: Եթէ քու օրէնքներուդ մեծագոյն մասին պատճառը կը տեսնեն, ալ աւելի յօժար պիտի ըլլան հպատակելու անոնց, զորս կարող չեն հասկնալ:

Այս դրութիւնը նաև կրթութիւն մ'է որ աշակերտը կը պատրաստէ իր կեանքին աշխարհի մէջ: Որովհետեւ հոն անդադար հարկ պիտի ըլլայ գործել իր բանակա՞նութեան կամ այլոց հեղինակութեան հպատակելով, և եթէ կ'ապրի երկրի մը մէջ, ուր ժողովուրդն ինքը կը սահմանէ իր օրէնքները, պիտի սորվի գնահատել կարեւորութիւնը սահմանելու այնպիսի օրէնքներ, որք բոլոր մարդոց հաւանութեան կրնան արժանանալ: Այս առաւելութիւն մ'է ուրեմն թէ՛ աշակերտին և թէ՛ դասատուին համար: Չը սորվեցնեն իրեն անաստեղ, երբ կարող չէ հասկնալ, այլ յաւէտ յարգել ամէն օրէնք, որովհետեւ բանականութեան վրայ հիմնուած է:

Ե. — Դասատուն պարտի խոյս տալ անհարկի բաղխումներ ունենալէ իր աշակերտներուն հետ: Ճիշդ հոս ամենէն աւելի կը կարօտի այն յատկութեան, որոյ մասին խօսեցայ իմ վերջին ճառիս մէջ, շրջանայեցութիւն կամ savoir-faire:

Դպրոցի կառավարութեան մէջ դժուարութեանց մեծագոյն մասը ծագումն կ'առնէ ո՛չ թէ ուսանողներուն

բացարձակ չարակամութիւնէն, այլ խաղախորութիւնէն անդգուշութիւնէն, և կամ կատակախորութիւնէն, որ բնածին է ամէն աղու մէջ: Երբ այսպիսի դժուարութիւն մը անգամ մը սկսած է, դասատուն թերեւս այնպիսի ընթաց մը կը բռնէ որ ուղղակի և բուռն բաղխում մը կ'ունենայ աշակերտին հետ: Այս կերպով հակառակութեան կը գրգռուի աշակերտը, և կը մղես զինքը դիմադրելու քեզ որչափ որ կը համարձակի: Կը ստիպես զինքը ընելու բաներ, զորս ընելու դիտաւորութիւն չունէր ի սկզբան: Ուժի/փորձի մը կը փոխուի քու և իր մէջտեղ, փորձ մը ուր չը գիտցուի թէ ո՞վ պիտի ըլլայ յաղթական. եթէ արտաքսելու ծայրայեղ միջոցին չը դիմես, և այդ միջոցն ալ քու ձեռքդ չէ շատ անգամներ:

Եթէ այդպիսի բաղխումէ մը խուսափելու ճարտարութիւնն ունենաս, և կարգապահութիւնն ու հնազանդութիւնը ապահովես, առանց կուռլլ ստիպուելու, դուն ինքդ խոյս տուած ես նեղութիւնէ և աշակերտին ալ մեծ բարիք մը ըրած:

Պատերազմին մէջ խելացութիւն չէ թշնամիին վրայ ճակատէն յարձակիլ, երբ կրնաս կողմնակի շարժում մը ընելով ստիպել զինքն նահանջել: Նոյնը ճշմարիտ է նաև դպրոցին մէջ: Եթէ շահաւոր ըլլար դասատուին իր աշակերտներուն հետ բաղխում ունենալ, կրնար ամէն օր ունենալ զայնս: Բայց շահաւոր չէ, դժբաղդութիւն մ'է, նոյն իսկ երբ դասատուն յաղթական է: Կան բաղխումներ, որոցմէ խուսափիլ կարելի չէ. բայց արդարանալի չէ ունենալ բուղխումներ, որոցմէ կարելի էր խոյս տալ ճարտարութեամբ, առանց դպրոցին կարգապահութեան վնասելու:

Ատենոք կը ճանչնայի բրօֆէսօր մը, որ երբ օր մը իր դասարանը մտաւ սագ մը գտաւ իր աթոռին կապուած, մինչդեռ բոլոր աշակերտները իրենց տեղերը նստած էին: Կրնար այնքան լուրջ խնդիր մը ընել զայն

որ պատճառ ըլլար այդ կարգին կէսը քօլէճէն արտաքսելու, և ոչ ոք պիտի կարենար պախարակել զինքը: Բայց փոխանակ ասոր. նախ սագին նայեցաւ և ապա աշակերտներուն, և ըսաւ.

«Երիտասարդ պարոններ, կը տեսնեմ որ ձեզ համար խիստ կարող դասատու մը ընտրած էք: Մնաք բարով ուրեմն»: Անկէ զատ ուրիշ խօսք չեղաւ երբէք. բայց կարգը գնահատեց բրօֆէսօրին ճարտարութիւնը և ինչպէս նաև կատակարանութիւնը, և այնուհետև ալ չը նեղեցին զինքը:

Մէկ մարդու մը ճարպիկութեան օրինակն է այս: Բայց չենք կրնար ընդհանուր կանոն մը ներկայացնել թէ ինչպէս բաղխումէ մը խոյս տալու է: Վայրկենին ներշնչումը պիտի որոշէ զայն. և իւրաքանչիւր պարագայ առանձինն պիտի կարգադրուի: Միակ կանոնն է խոյս տալ բաղխումէ, երբ կարելի է առանց դպրոցին կարգապահութեան վնասելու:

Զ. — Գպրոցական կառավարութեան ամենէն էական սկզբունքներէն մէն է աշակերտները զբաղ պահել. իրենց ձեռքերը զբաղեցնելու բաւականաչափ գործ յանձնել իրենց:

Հին առածը թէ «Սատանան անգործ ձեռքերու համար չարիք մը կը գտնէ ընելու». ո՛չ ուրեք այնքան ճշմարիտ է որքան դպրոցին մէջ: Գրեթէ միշտ անգործ տղաքներն են որ ամենէն աւելի նեղութիւն կուտան դասատուին: Որքան ալ ծոյլ ըլլան, տակաւին միշտ անհանդարտ են, և եթէ օրինաւոր կերպով մը չը զբաղեցուն. չարութիւն գործելու պիտի սկսին անպատճառ: Յովսէփ Լանքասթըրը դպրոցի կառավարչութեան հիմնական մէկ սկզբունքը կը նկատէր այս թէ «Ամէն տղայ բոլոր ժամանակը ընելու է բան մը և զայն ընելու շարժառիթ մը ունենալու է»: Խաղի ժամեր, տարբեր տե-

յակ աշխատութիւններ կրնան ըլլալ, բայց ինչ որ ալ ըլլայ ժամանակը գործածուելու է շահագրգիռ եղանակաւ մը. եթէ ոչ դժուարութիւններ պիտի ծագին:

Այս անհրաժեշտ կանոն մ'է ի մասնաւորի նախնական դպրոցներու մէջ, ուր աշակերտները փոքր են, անվարժ և անկարող իրենք իրենց գործ գտնելու. բայց նոյն կանոնը կը պատշաճի նախ յառաջացեալ և մասնագիտական վարժարաններու: Զբաղ պահեցէ՛ք ձեր աշակերտները: Որչափ ատեն որ զբաղին, նեղութեան պատճառ չը պիտի ըլլան:

Է. — Որչափ որ կարելի է դասատուն դպրոցին բարձրագոյն կարգերուն համակրութիւնը և օգնութիւնը վայելելու է իր վարչութեան մէջ:

Անգղիական Ռեզիպի դպրոցին համբաւաւոր ակտուշը Տօք. Առնօլտ կըսէր թէ իր դպրոցը կը կառավարէր բարձրագոյն կարգին ձեռքով. և արդարև կարգապահութեան մեծագոյն մասը յանձնուած էր խնամքին այս կարգին, որ իր խրատներուն համեմատ կը շարժէր:

Սակաւաթիւ դպրոցներու մէջ միայն գործնական է այսքան առաջ երթալ, բայց սկզբունքը բարձրագոյն կարեւորութիւն մ'ունի: Որչափ ատեն որ դասատուն բարձրագոյն կարգերուն համակրութիւնն ու օգնութիւնը կը վայելէ, ոչինչ ունի վախնալու: Իրենց ազդեցութիւնը. եթէ իմաստութեամբ և լուելեայն գործածուի, ամբողջ դպրոցին վրայ կը տարածուի անպատճառ:

Դասատուն պարտի նաև իր հետ ունենալ միշտ բարձրագոյն կարգերուն սէրը և վստահութիւնը: Կարող ըլլալու է վստահիլ անոնց, և նեղութեան վայրկեաններու մէջ մտերմարար յայտնել իրենց իրաց վիճակը, և զգալ առ թէ կը վստահի իրենց: Եթէ կարող չէ ընել զայս, յայտնի է թէ յաջողած չէ զարգացնել անոնց նկարագիրը ըստ արժանւոյն. մինչ իր ազդեցութեան տակն էին:

Գրեթէ ամէն դպրոցի մէջ բարձրագոյն կարգերուն այս ազդեցութիւնը տեսակ մը բաց գաղտնիք մ'ըլլալու է դասատուին և կարգերուն միջև. ազդեցութիւն մը՝ որ միւս կարգերը պիտի զգան առանց գիտնալու, թէ սերկէ կուգայ: Այս կերպով նախանձ և անհաճոյ զգացում չը պիտի պատճառէ կարգերուն իրարու հետ ունեցած յարաբերութեանց մէջ:

Դասատուն, որ այսպիսի զգացումներ կը քաջալերէ, որ իր դպրոցը կը կառավարէ բռնապետական սկզբունքին համաձայն. «Բաժնէ և պիտի տիրես». խիտտ աղետալի սխալ մը կը գործէ: Դպրոցին մէջ բոլոր նախանձ ու բաժանում մըստակար են աշակերտներու և դժբաղդութիւն մը դասատուին համար:

Բայց այն ազդեցութիւնը որոյ մասին կը խօսիմ հոս, անձնական, բարեկամական ազդեցութիւնն է, զոր շափահաս տղաքներն ի գործ կը դնեն փոքրերուն վրայ, և որ բարեացակամութիւն կ'ենթադրէ երկուստեք:

Ը.— Որչափ որ կարելի է դասատուն իր ուսանողներուն հետ իբր անհատ վարուելու է, և ոչ հաւաքաբար:

Այս սկզբունքը ճշմարիտ է բոլոր առնչութեանց մասին դասատուին և աշակերտին մէջ: Որչափ աւելի լաւ հասկնայ անհատական բնաւորութիւնները, այնքան աւելի օգտակար կրնայ ընել ինքզինքը: Դասարանին մէջ զոր օր. ոմանք մտրակուելու պէտք ունին, ոմանք սանձուելու, ոմանք քաջալերութեան կը կարօտին, ուրիշներ՝ իրենց մնապաշտութենէն ազատուելու: Սրագ, սուր հարցումներ լաւագոյն են ոմանց համար, և համբերատար բացատրութիւններ այլոց համար: Այսպէս է նաև կրթութեան մասին. սիրալիբ, համակրալիբ բառ մը բաւական է մէկ տղուն համար, խիտտ յանդիմանութեան մը կը կարօտի ուրիշ մը: Քանի որ անհատական նկարագիրն է զոր կը ջանանք զարգացնել, իւրաքանչիւր

տղայի իրաւունքն է որ դասատուն իրր անհատ վարուի իր հետ :

Շատ աւելի դիւրին է նաև անհատաբար վարուիլ անոնց հետ քան հաւաքաբար : Ըմբոստութեան և խռովարարութեան ատեն , տղայք միմեանց քաջութիւնն ու հպարտութիւնը կը գրգռեն . բայց երբ տղան երես առ երես գայ դասատուի մը հետ , զոր կը սիրէ ու կը յարգէ , շատ տարբեր կերպով կը նայի իրաց վրայ : Միտքը կը բերէ նաև թէ , եթէ տուն /դիւրի , երես առ երես պիտի գայ իր հօրը և բարեկամներուն հետ առանձինն և առանց միւս տղայոց պաշտպանութեան , և թէ իր հայրը դասատուին՝ և ո՛չ թէ իր ընկերներուն տեսակէտէն պիտի նկատուի , ինչդիրը :

Այս բոլորը ժամանակ կ'առնէ և շատ աւելի ծանր աշխատութիւն կը նշանակէ դասատուին համար , բայց ի վերջոյ արդիւնքը ցոյց պիտի տայ թէ շատ աւելի օգտակար եղած է աշակերտներուն հետ անհատաբար քան ուրիշ կերպ վարուիլը :

Թ. — Դպրոցին բովանդակ վարչութեան յատկանիշն ըլլալու են միակերպութիւն , անկողմնակալութիւն , և հաւասար արդարութիւն :

Այս է գլխաւոր գաղտնիքը յաջող վարչութեան : Դասատուն պարտի արդար և անկողմնակալ ըլլալ , եթէ ոչ պիտի չը յարգուի իր աշակերտներէն . և եթէ միակերպութիւն չըլլայ , աշակերտները շփոթութեան մէջ պիտի մնան և չը պիտի գիտնան թէ ինչ ակնկալելու են դասատուէն : Այնքան յայտ յանդիման սկզբունք մ'է այս որ հարկ չ'է անոր վրայ ծանրանալ :

Փ. — Վերջապէս դպրոցին յաջող կառավարչութիւնը մեծապէս կախումն ունի նաև կանոնաւոր կազմակերպութենէն : Այս կը պարունակէ դասարաններու կարգադրութիւնը և աշակերտներուն տեղաւորումը , ուսանող-

ներուն դասակարգութիւնը իրենց ուսմանց մէջ , աշխատութեան բաշխումը դասատուներուն մէջ , եթէ մէկէ աւելի դասատուներ ըլլան , ժամերուն ու նիւթերուն որոշումը , դասադրքերու ընտրութիւնը , և դպրոցին արձանագրութեանց հոգը . մէկ խօսքով , ամէն ինչ որ դպրոցին մեքենակաւորքիւնը կը կոչուի :

Այս բոլոր մեքենակաւորութեան նպատակն է ժամանակ խնայել , և ուսուցչին և ուսանողին աշխատութիւնը աւելի արդիւնաւոր ընծայել , ճշդապահութիւնը և կանոնաւոր ուսողութիւնը ապահովել :

Որչափ պարզ ըլլայ այս մեքենակաւորութիւնը , այնքան աւելի լաւ , եթէ իր նպատակին կը ծառայէ : Բայց աստիճան մը մեքենակաւորութիւնն անհրաժեշտ է յաջող վարչութեան համար : Եթէ լաւ կարգադրուի , ամէն ինչ դիւրաւ և առանց շփումի յառաջ կ'երթայ : Դասատուն և աշակերտները կ'օգտուին անկէ , և անոր համաձայն կը սորվին գործել , առանց իսկ զգալու զայն : Աշխարհի զանազան մասերուն մէջ կան կազմակերպութեան զանազան դրութիւններ , որք իրարմէ կը տարբերին դպրոցական կառավարչութեան վարդապետութեան համեմատ , զոր կը նախընտրենք , և նոյն իսկ միեւնոյն վարդապետութեան տակ : Ժամանակ չունինք հոս ասոնց վրայ խօսելու . բայց կը պարունակեն այսպիսի ինչդիրներ ինչպէս զոր օր. — ուսանողները իրարու սորվեցնելու են ինչպէս կ'ընեն լանքասթրեան դրութեան մէջ , որ սովորական դարձած էր հոս քառասուն տարի առաջ : Աշակերտներէն պէտք է հսկողներ կարգել բարեկարգութեան օգնելու համար : Տղաքներ և աղջիկներ մէկտեղ ըլլալու են , և այլն , և այլն :

Չեղմէ անոնք որ դասատու պիտի ըլլան , հաւանաւորաբար պիտի երթան դպրոցներ , որք արդէն կազմակերպուած են , և ընդհանուր կանոն մը կայ այդպիսի

պարագայից համար : Այդ կանոնն այս է թէ պէտք չ'է փորձէք կազմակերպութիւնը փոփոխել, մինչև որ լաւ մը չը ծանօթանաք դպրոցին, և այնուհետև ալ՝ աստիճանաբար ընելու է զայն, փոփոխութիւնները մի առ մի ներմուծելով, այնպիսի եղանակաւ մը, որ շփոթութիւն կամ երկիւղ չը պատճառէ ո՛չ ծնողքներուն և ոչ ուսանողաց : Անբաւական կազմակերպութիւն մը միշտ լաւագոյն է քան անլստահութիւնն ու անկարգութիւնը. և փորձառութեամբ միայն մարդ կրնայ դպրոց մը վերակազմելու գործին ձեռնարկել :

Դպրոցական կառավարութեան մասին կան ուրիշ խնդիրներ ալ, որք պիտի նկատուին հետեւեալ ճառին մէջ, և շատ մը ուրիշներ, զորս յիշելու ժամանակը կը պակսի հիմա : Հաւանականաբար մեծ կորուստ մը չ'է այս խնդիրները մէկ կողմ թողուլն հիմա, որովհետեւ դասատուին անձնաւորութիւնը մեծ դեր կը կատարէ դպրոցին կառավարչութեան մէջ, և աւելի բուն իր փորձութենէն ու ողջմտութենէն քան թէ ճառերէ ու գրքերէ պիտի սովորի թէ ի՞նչպէս կառավարելու է իր աշակերտները : Եթէ յաջող է իր կառավարութիւնը, եթէ կրնայ կարգ ու կանոն պահել, աշակերտներուն համակրութիւնը շահիլ և անոնց նկարագիրը զարգացնել, շատ փոյթ չէ թէ իր դրութիւնը ա՛յս անուամբ կը կոչուի կամ այն, թէ ուրիշ դրութեանց կը նմանի՝ կամ ո՛չ : Եթէ յարմար է իրեն և իր աշակերտներուն համար, այդ լաւագոյն յանձնարարութիւնն է :



Գ Լ ՈՒ Խ Ե.

Վ Ա Ր Չ Ք Ե Ի Պ Ա Տ Ի Ժ Ք

Կյառաջաբանս ո՛ր և է դրութիւն և ո՛ր և է օրէնք ի հարկէ կը պարունակեն նաև վարձքի և պատիժի դրութիւն մը : Օրէնք առանց պատիժի օրէնք չ'է, ևՐՍՏ է միայն : Կազմութիւնը աշխարհին, որուն մէջ կը բնակինք, թէ նկատենք զայն նիւթական կամ թէ՛ բարոյական տեսակէտէն, կը պարունակէ վարձք և պատիժ : Յաջողութիւն և երջանկութիւն կը գտնենք Աստուծոյ թէ՛ բնական և թէ՛ բարոյական օրէնքներուն համաձայն գործելով, և երբէք չենք կրնար դիմադրել այս օրէնքներուն կամ մեղանչել անոնց դէմ, առանց պատիժ կրելու :

Դպրոցը բացառութիւն չէ մարդկութեան այս տիեզերական օրէնքին, և եթէ մանուկները պիտի պատրաստէ այս աշխարհիս կեանքին, պէտք չէ որ բացառութիւն մ'ըլլայ : Ինչպէս առաջին ճառիս մէջ ըսի, դաստիարակութեան ամենէն կարեւոր նպատակը բարոյական նկարագրին զարգացումն է, և բարոյական կրթութիւնը մին է դասատուին գլխաւոր պարտաւորութիւններէն : Եթէ

կարելի ըլլար ի գլուխ հանել զայն լոկ օրինակի և խրատի միջոցաւ, դասատուն պիտի ազատէր իր գործին ամենէն անհաճոյ և վշտառիթ մասէն, բայց դժբաղդաբար ստիպուած է ասկէ աւելին ընել, և համակերպիլ աշխարհիս տիեզերական օրէնքին, որ հնազանդութիւնը կը վարձատրէ և անհնազանդութիւնը կը պատժէ:

Իր առնչութիւնը այս անհաճոյ պարտաւորութեան հետ կը պարունակէ քանի մը հիմնական սկզբունքներ որք արժան են մեր նկատողութեան:

Ա. — Բարոյական կրթութեան ընդհանուր նպատակն է մանուկին մէջ այնպիսի նկարագիր մը մշակել, որ առաջնորդէ զինքը ուղղութեամբ ապրիլ իր յօժար կամքովը, սորվեցնել իրեն բանականութեան և պարտաւորութեան բարձրագոյն շարժառիթներով գործել աւելի քան թէ կիրքով և անձնասէր փափաքներով: Պէտք է նաև իրեն սորվեցնել թէ ո՞ր գործերն բարի են և որո՞նք չար: Իր բանականութիւնը, իր զգացումները, իր կամքը բոլորն ալ կը կարօտին այս կրթութեան: Աւելի երկարօրէն պիտի խօսինք այս մասին ուրիշ ճառի մը մէջ, բայց հոս հարկ է միայն ըսել թէ վարձքի ու պատիժի դրութիւն մը անհրաժեշտ է տպաւորելու համար այս դասերը իր նկարագրին վրայ: Տարբերութիւն մը կայ տղայոց մէջ այս նկատմամբ, և պատշաճ կրթութեան շնորհիւ հետզհետէ աւելի քիչ պէտք ըլլալու է վարձքի և պատիժի օգնութեան, որչափ մանուկը կ'աճի և երիտասարդութեան հասակին մէջ կը մտնէ: Բայց աշխարհի փորձառութիւնը ցոյց կուտայ թէ այսպիսի դրութիւն մը անհրաժեշտ է ամէն դպրոցի մէջ բարոյական կրթութիւնը պահպանելու համար:

Բ. — Դպրոցի մը մէջ հնազանդութեան և աշխատասիրութեան համար տրուած վարձքերը պէտք է ընդհանրապէս բարոյական բնութիւն մ'ունենան, այսինքն

յարգանք մը, գովեստ կամ պատիւ ըլլան: Դպրոցը ասկէ զատ ոչինչ ունի տալու: Մրցանակի դրութիւնը երբեմն կը գործածուի, բայց մրցանակը, վերջապէս, վկայական մ'ըլլալէ զատ ուրիշ արժէք չունի, և եթէ բաշխուելու ըլլայ անխտիր, իր արժէքը կը կորսնցնէ բոլորովին:

Իմ համոզումս այն է թէ ամենէն գոհացուցիչ վարձքը, զոր ուսանող մը երբէք կրնայ ընդունիլ, անկեղծ ու սրտագին գովեստն է դասատուի մը՝ զոր կը սիրէ ու կը յարգէ, և շատ կարեւոր է որ այսպիսի գովեստներ զանց չառնուին, ուր որ արժան է տալ:

Առաջնակարգ ուսանողներու մասնաւոր պատիւներ տալու դրութիւնն ընդհանրապէս ընդունուած է թէ Եւրոպիոյ և թէ Ամերիկայի մէջ: Այս դրութիւնը շատ աւելի ընդարձակօրէն ի գործ կը դրուի Ֆրանսայի՝ քան ուրիշ երկրի մէջ: Շատ բան կրնայ ըսուիլ այս դրութեան թեր ու դէմ: Կրնայ անոր դէմ ըսուիլ թէ նախանձ և անհաճոյ զգացումներ կը գրգռէ ուսանողներուն մէջ և ուսուցչին հակառակ: Բայց ասոր կը պատասխանուի թէ դպրոցին նպատակն է աշակերտը կեանքի պատրաստել, և թէ կեանքի մէջ ճիշդ այս փորձառութեան է որ պիտի հանդիպի: Մրցումն է որ կ'իշխէ աշխարհի վրայ, և ոմանք պատիւ կ'ստանան հոն, ուրիշներ պարտութիւն և նախատինք: Ինչո՞ւ աշակերտը դպրոցին մէջ չը պիտի սորվի այս փորձառութիւններն զիմագրաւել:

Կրնայ նաև այս դրութեան հակառակ ըսուիլ թէ անհրաժեշտ կ'ընէ նիշերու աշխատալից դրութիւն մը, որ չը կրնար երբէք կատարելապէս արդար ըլլալ: Բայց ի պատասխանի կ'ըսուի թէ, մինչ աշխարհիս մէջ ոչինչ կայ կատարեալ, ամենքն ալ կարելի արդարութիւնը կը վաշելին նիշերու լաւ կազմուած դրութեան մը մէջ, և այսպիսի դրութիւն մը անհրաժեշտ է գէթ ամէն մեծ զըպրօցներու մէջ ուսանողին յառաջդիմութեան համար: Իմ

կարծիքս այն է թէ դպրոցական պատիւներու դրութիւնը օգտակար է, եթէ չը չափազանցուի, կամ ուսանողին աշխատութեան գլխաւոր շարժառիթը չը դառնայ: Փափաքելի չէ աշակերտները քաջալերել պատիւ ստանալու համար աշխատիլ: Ստորին շարժառիթ մ'է այդ, և այս է գլխաւոր վտանգը, որուն դէմ դասատուն զգուշանալու է միշտ:

Բայց ուղիղ է այն ընդհանուր սկզբունքը թէ ժրութիւն և հնազանդութիւն պէտք է վարձատրուին: Կատարեալ փափաքելի արդիւնքն այն է որ աշակերտը զգայ թէ իր իրական վարձքը իր բուն նկարագրին զարգացման ու կատարելութեան մէջ պարտի փնտռել: Եթէ զգայ զայն, ուրիշ վարձքեր կարեւորութիւն մը չը պիտի ունենան իրեն համար: Այս գաղափարականը միշտ ունեննալու է ի նկատի, և ըստ կարելոյն ջանալու է հասնիլ անոր: Բայց գործնականապէս ուրիշ վարձքերու կը կարօտինք ընդհանրապէս: Թէ ի՞նչ պէտք է ըլլան այդ վարձքերը, այդ կախումն ունի դպրոցին պարագաներէն և դասատուին փորձառութենէն:

Կրնանք վարձքի մասին մեր ըսածները ամփոփել նկատելով անոնց առնչութիւնը այն շարժառիթներուն հետ, որք կրնան աշակերտն աշխատելու դրդել:

Ա. Կրնայ դրդուիլ մրցանակ կամ պատիւ շահելու փափաքէն:

Բ. Նախանձաւորութենէ, իր ընկերները վերազանցելու փափաքէն:

Գ. Իր դասատուներուն ու ծնողաց համարումը շահելու փափաքէն:

Դ. Զարգանալու և իր պարտաւորութիւնը կատարելու պարզ փափաքէն:

Արդ՝ փաստերու չ'ենք կարօտիր ցոյց տալու համար թէ առաջինն է ամենէն ստորին շարժառիթը, և վեր-

ջինը՝ բարձրագոյնը, և թէև այս բոլոր շարժառիթներն կրնան միացուիլ, թէև ուսանողներէն ոմանք առաջին երկուքէն պիտի հրապուրուին, դասատուն՝ որ կը հասկընայ թէ դաստիարակութեան նպատակը՝ նկարագրին զարգացումն է, բոլոր իր ձեռքէն եկածը պիտի ընէ, վերջին շարժառիթը ընել փրոզ շարժառիթը, որովհետև այն է բոլոր ուղիղ գործունէութեան էական շարժառիթը: Այս շարժառիթով գործելու ունակութիւնն է որ առաքինի կ'ընէ զմարդ:

Գ. — Հիմա կրնանք հարցնել թէ ի՞նչ է պատիժին նպատակը դպրոցին մէջ:

Առ հասարակ պատիժին նկատմամբ բարոյախօսներն համաձայն են թէ կը ծառայէ երեք նպատակներէ միոյն կամ միւսին: (1) Կայ փոխարինական պատիժը, որ սահմանուած է ցոյց ալալ անհրաժեշտ և արդար կապակցութիւնը օրէնքին զանցառութեան և տառապանքին մէջ: Այս տեսակէն է այն պատիժը, զոր Աստուած կուտայ իր թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական օրէնքին զանցառութեան համար: (2) Կայ իբր օրինակ ծառայող կամ արգելիչ պատիժը, որ սահմանուած է արգիլելու ոճիրին կրկնութիւնը պատժուող անձին և կամ ուրիշ ո՛ր և է մէկու մը կողմանէ: Այս է պետութեան տուած պատիժներուն զաղափարը: Իրենց գլխաւոր նպատակն է ոճիրն արգիլել: (3) Կայ բարենորոգիչ պատիժը, որ սահմանուած է յանցաւորը բարենորոգելու: Այս տեսակ է այն պատիժը, զոր ծնողք կուտան իրենց զաւակաց: Վերջին տարիներս մեծամեծ ջանքեր եղած են թէ՛ Անգլիոյ և թէ՛ Ամերիկայի մէջ քաղաքական պատիժներն ալ բարենորոգելու ծառայեցնել: Պատիժի այս երեք տեսակներէն առաջինը յայտնի է թէ. ընտել չը պատկանիր դասատուին: Դասատուն իր աշակերտները չը պատժեր Իրաւունքի և Արդարութեան յաւիտենական սկզբունք-

ներուն վրէժը լուծելու համար: Աստուծոյ գործն է այդ: Կրնայ երբեմն պատիժի երկրորդ ձեւն ունենալ ի նկատի, որովհետեւ դպրոցը տեսակ մը փոքրիկ պետութիւն է, ուր կարգն ու կանոնը անհրաժեշտ են հանրային բարեւրաւութեան, բայց դպրոցական պատիժին գլխաւոր և մասնաւոր նպատակը յանցաւորին կրթութիւնն և բարեփոխութիւնն է: Այս նկատմամբ դպրոցը աւելի ընտանիքի կը նմանի քան պետութեան: Իր պատիժներով դասատուն միայն կը ջանայ մտորեալ աշակերտը ետ բերել ուղղութեան ճամբուն մէջ, հնազանդութեան և պարտաւորութեան ճամբուն մէջ:

Քանի որ այս այսպէս է, բոլոր պատիժները այս նպատակին յարմարցուելու են թէ՛ իրենց ձեւին և թէ՛ չափին մէջ: Առանց պատիժի, առանց հնազանդիլ ստիպելու միջոցներու, օրէնքներն ու կանոնները անօգուտ են, բայց ուշադրութեան արժանի խնդիր մ'է թէ՛ ի՞նչ տեսակ ըլլալու են պատիժներն, և ի՞նչ կերպով տրուելու են: Գ. — Ի՞նչ են ուրեմն յատկանիշները ազդեցիկ պատիժին դպրոցին մէջ:

Անգղիացի հեղինակ մը կը յիշէ հետեւեալները. «Կատարելապէս ազդեցիկ ըլլալու համար փութանակի ըլլալու է պատիժը, լրջութեամբ տրուելու է, յստակ կերպով հասկցուելու, յանցանքին համեմատական ըլլալու է, տղուն նկարագրին յարմար, և յանցանքին ընտելեան համաձայն:»

Եթէ մաս առ մաս նկատենք զայս, պիտի տեսնենք որ մեր այս կէտին վրայ ըսելիքներուն գրեթէ բոլորն ալ կը պարունակէ իր մէջ:

(1) Պատիժը պէտք է անյայտաղ ըլլայ, որովհետեւ միայն երբ պատիժը շուտով կը հետեւի յանցանքին, բարերար ազդեցութիւն մը կրնայ ունենալ և արդար ու անհրաժեշտ կը համարուի: Անգուժ բան մ'է նաև առ-

կախ վիճակի մը մէջ թողուլ մանուկը ընդ երկար: Որչափ շուտ կատարուի պատիժը, այնքան աւելի լաւ: (2) Պէտք է լրջութեամբ տալ զայն, որովհետեւ իր արժէքին մեծ մասը կը կորսնցնէ, երբ անհոգ ու անտարբեր եղանակաւ մը կը տրուի: Երբեմն նոյն իսկ օգտակար կրնայ ըլլալ որ դասատուն ցոյց տայ իր արդար ցասումը, երբ յանցանքը ի մասնաւորի գծուծ է, կոշտ կամ անբարոյական: Պէտք է որ այս տեսակ յանցանք մը իր ցատու գրգռէ, և աշակերտն ալ գիտնալու է թէ իր ընթացքը արժանի է ցասումի: Դասատուն ամէն պարագայի մէջ, զգալու է թէ պատիժը լուրջ բան մ'է, և ոչ երբէք կատակ, և պէտք է որ նոյնը զգալ տայ աշակերտին: Աշակերտին այսպէս զգալն կամ ս'չ' կախում ունի այն եղանակէն, որով պատիժը կը տրուի աւելի քան նոյն ինքն պատիժէն:

(3) Պատիժը անօգուտ է եթէ մանուկը որոշ կերպով չը հասկնար թէ ինչու կը պատժուի: Պէտք է բացատրել իրեն իր յանցանքին ընտելեանը, ճանչցնել իրեն իր յանցաւորութիւնը, և իր պատիժի արժանի ըլլալը: Այս կերպով ցաւ պիտի զգայ ոչ միայն պատիժին այլ նաև բուն իսկ գործուած յանցանքին համար, ցաւ մը՝ որ ջանալ պիտի տայ իրեն նոյն յանցանքին մէջ չը գտնուել դարձեալ: Երբ հասկնայ զայս, այն ատեն պատիժը կրնայ բարերար ազդեցութիւն մը ներգործել իր վրայ: Պատիժին հետ մէկտեղ տրուած համակրալից բացատրութիւն մը՝ պատիժին ամենէն կարեւոր մասն է յաճախ:

(4) Պատիժը պէտք է համեմատական ըլլայ յանցանքին աստիճանին: Դասատուներն յաճախ կը փորձուին յանցանք մը պատժել իրենց կրած նեղութեան և ս'չ' թէ նոյն ինքն յանցանքին ծանրութեան աստիճանին համեմատ: Մեծ անարդարութիւն մ'է այս աշակերտին նկատմամբ: Ամենէն սրտնեղիչ յանցանքը կրնայ պարզ անհո-

գութենէ կամ դիպուածէ բղխիլ, և այդպիսի պարագաներու մէջ թեթեւ ըլլալու է պատիժը: Միւս կողմանէ բարոյական մեծ յանցանք մը կրնայ այնքան հանդարտութեամբ և դադանի գործուած ըլլալ՝ որ ուշադրութիւն չը գրաւեր. բայց դատատուն պարտաւորութիւնն առ աշակերտն կը պահանջէ որ ծանր պատիժ մը կրէ: Դասատուն պարտաւոր է յանցանքը կշռել, մեղմացուցիչ պարագաները նկատել, և ըստ այնմ իր պատիժը որոշել: Այս կերպով միայն կրնայ փափաքելի բարոյական ազդեցութիւնը ներգործել յանցաւորին վրայ: (5) Պատիժը պէտք է պատշաճեցուի մանուկին նկարագրին: Մանուկները շատ կը տարբերին իրարմէ իրենց նկարագրին մէջ, և պէտք է անոնց հետ անհատաբար վարուիլ: Դասատուն պէտք է գործածէ իր ճարտարութիւնը և իր չըջանալիցութիւնը պատիժը մանուկին նկարագրին յարմարցնելու համար: Կարելի է՛ ընդհանուր կանոն մը թելադրել այս մասին: Թերեւս լաւագոյն բանը զոր կրնայ դասատուն ընել, ետ երթալն է իր դպրոցական օրերուն փորձառութեան, և ինքն իրեն հարցնել թէ պատիժը ի՞նչ ապաւորութիւն ըրաւ իր և իր ընկերներուն վրայ: Այս պիտի օգնէ իրեն իր աշակերտներուն հետ վարուելու եղանակին մասին:

(6) Պատիժը պէտք է առնչութիւն մ'ունենայ պատժուած յանցանքին հետ, այնպէս որ իբր այդ յանցանքին բնական արդիւնքն երեւնայ: Շատ պարագաներու մէջ այս կարելի է՛, բայց շատ անգամ ալ կարելի է: Կրնամ օրինակ մը տալ միտքս բացատրելու համար: Անտեղի է տղու մը ստախօտութիւնը պատժել պահանջելով իրմէ յաւելուածոյ դասեր գրել. բայց բնական պիտի ըլլար տղայ մը ապակի մը կտորած ըլլալուն համար պատժել՝ պահանջելով որ իր գրպանի գրամէն հատուցանէ եղած փնար:

Ռուսօ և Սթենսըրը երկուքն ալ կը պնդեն թէ բոլոր պատիժներն ալ բնական հետեւանքի այս օրէնքին համաձայն ըլլալու են, և ստոյգ է որ ամենէն ազդեցիկ դասը որ կրնայ տղայ մը սորվիլ, այն է թէ բնութեան օրէնքներն այնինչն են և անողոք, ուշ կամ կանուխ իրենց պատիժները կը հասնին առանց գթութեան: Զեղխութիւնը մարմինը կը տկարացնէ, ծուլութիւնը պատճառ կ'ըլլայ աղքատութեան, ստախօսը վտանգութիւն չը վայելեր, տգիտութիւնը անպատիւ կ'ընէ զմարդ և էն: Տղան պէտք է սորվի այս ամէնը, բայց այս կանոնը անբաւական է դպրոցի կառավարութեան մէջ: Բնութիւնը չը մոռնար երբէք իր պատիժները կրել տալ, բայց յաճախ կը յապաղի և գթութիւն չ'ունի: Դպրոցի մը բարեկարգութիւնը յանցանքին անյապաղ պատիժը կը պահանջէ, և նաև շատ պարագաներու մէջ շնորհք ու գթութիւն: Բնութեան պատիժները փոխարինական են, դպրոցին պատիժները զգաստացուցիչ են կամ արգելիչ: Այս անկարելի կ'ընէ բնութեան հետեւիլ միշտ և պատիժը միշտ համեմատական ընել յանցանքին:

4 (7) Միշտ փափաքելի է որ պատիժ մը իր կողմն ունենայ դպրոցին բարոյական զգացումը: Այս ճշմարիտ է ի մասնաւորի խիստ պատիժներու մասին:

Դպրոցին համակրութիւնը բնականաբար աւելի պատժուող տղուն հետ է քան թէ դասատուն հետ երկու պատճառներով: Նախ որովհետև մենք այնպէս կազմուած ենք որ միշտ համակրութիւն կը զգանք տառապող բարեկամի մը կամ ծանօթի մը մասին, և նոյն իսկ օտարականի մը մասին, երբ մեր ուշադրութիւնը դառնայ իրեն: Եւ դարձեալ որովհետև շատ պարագաներու մէջ աշակերտները չեն գնահատեր պատիժի հարկաւորութիւնը:

Զինք կրնար դատապարտել ո՛ր և է համակրութիւն որ առաջին պատճառէն կը ծագի, բայց շանալու է այն-

պիտի ուղղութիւն մը տալ անոր որ պատժուող տղան մնաս չը կրէ այնպէս զգալով թէ իր յանցանքը անկարեւոր բան մ'է: Երկրորդ պատճառէն ծագող համակրութիւնն ալ ներելի է, բայց կարելի է դասել զայն, եթէ դասատուն զգուշութեամբ բացատրէ դպրոցին, սիրալիր եղանակաւ, յանցանքին բնութիւնը և պատիժին հարկաւորութիւնը: Թերեւս անմիջական արդիւնք մը չունենայ այս, մինչ տղայք գրգռուած են դեռ, բայց պիտի փոխուին, երբ հանդարտին:

Իմ կարծիքս այն է թէ դասատուն պարտաւոր է այսպիսի ջանք մ'ընել ո՛չ միայն ինքզինքն արդարացընելու համար, այլ նաև դպրոցականաց վրայ տպաւորելու համար մեղքի և պատիժի անհրաժեշտ կապակցութիւնը: Եթէ այսու կարենայ դպրոցն իր կողմն շահիլ, շատ աւելի մեծ պիտի ըլլայ բարոյական տպաւորութիւնը պատժուող տղուն վրայ: Ինքն, ինչպէս նաև միւսները այն ատեն պիտի զգան թէ դասատուն չը պատժեր զինքը բարկութեամբ կամ վրէժխնդրութեան ոգւով, այլ իբր իր լաւագոյն բարեկամը, որ անկեղծութեամբ կը փափաքի բարիք ընել իրեն:

(8) Երբ մասնաւոր յանցաւորը կարելի չէ եղած երեւան հանել, պէտք է միշտ խոյս տալ ամբողջ կարգը կամ դպրոցը առհասարակ պատիժի ենթարկելէ, ի բաց առեալ երբ իրական մեղսակցութիւն մ'ունեցած է կարգը կամ դպրոցը: Նոյն իսկ այդպիսի պարագաներու մէջ, որչափ քիչ ըլլան պատիժի ենթարկուողները, այնքան աւելի լաւ:

(9) Գալով այն յանցանքներուն, զորս շատ դժուարին է նշմարել, կրնանք հետեւիլ քաղաքական օրէքին սկզբունքին, որ է այնքան խիստ ընել պատիժը, որքան դժուար է նշմարել յանցանքը:

Հիմա կրնանք անցնիլ պատիժի տարբեր տեսակներն

նկատելու: Ընդհանրապէս երկու տեսակ պատիժներ կան, մին՝ ցաւ պատճառել կամ հաճոյքէ զրկել, մյուսը՝ ինչ որ կրնայ ձեւական պատիժ կոչուիլ, որ պարզապէս պայմանադրական է, զոր օր. Նիշեր արձանագրել: Այս կէտին վրայ խօսելէ առաջ յիշենք թէ չը կայ ո՛ր և է տեսակ պատիժ որ բուն կերպով պաշտպանուած չըլլայ ոմանց կողմանէ, և նոյնքան բուն կերպով դատապարտուած՝ ուրիշներու կողմանէ: Ընդհանուր համաձայնութիւն մը չը կայ այս մասին, և երբէք այդպիսի համաձայնութիւն եղած չէ: Հինաւուրց Յոյներն վիճարանցան նոյն նիւթին վրայ, որուն վրայ մենք կը վիճաբանինք այժմ. և ունէին կարծիքի նոյն տարբերութիւնները, զորս մենք ունինք այժմ:

(1) Մարմնաւոր պատիժը անտարակոյս ամենէն բնականն է, ամենէն պարզը և ամենէն սովորական ձեւը զբարոցական պատիժներուն: Բայց ի վաղուց անսփ քննադատուած և դատապարտուած է դատախարակութեան վրայ գրող բազմաթիւ հեղինակներու կողմէ: Ներկայ ժամանակին մէջ այս հակառակութիւնը թերեւս աւելի զօրաւոր է քան երբէք: Բայց տակաւին բաց խնդիր մ'է թէ արդեօք վերջապէս խորազանը իմաստուն դպրոցական պատիժ մ'է կամ ո՛չ: Եթէ այս խնդիրը դատելու ըլլամ իմ աշակերտական փորձառութիւնէս, որ արդարև լաւագոյն տեսակէսն է, պիտի ըսեմ թէ մարմնական պատիժը օգտակար է: Խորազանուած եմ ես շատ անգամներ դպրոց եղած միջոցիս, և ուրիշ տեսակ պատիժներ ալ կրած եմ, և տարակոյս չունիմ թէ խորազանը ուրիշ բոլոր պատիժներէ աւելի օգտակար եղաւ ինձ: Գիտէի թէ արժանի էի անոր, և իմ օգտին համար էր որ այսպէս կը պատժուէի: Հաճելի չէր անշուշտ նոյն վայրկեանին, բայց աւարտածին պէս ամէն բան կ'աւարտէր: Ուրիշ կարգ մը աւելի մեղմ պատիժներու չափ սրտնեղութիւն չէր պատճառեր ինձ:

Վստահ եմ թէ խարազանը լաւագոյն է քան կարգ մը մարմնաւոր տանջանքները որոնց յաճախ տղայք կ'ենթարկուին, որք արժանի են Հաւատաքնութեան, և որք ի գործ կը դրուին դպրոցներու մէջ, ուր խարազանը արգելուած է: Եթէ մարմնական պատիժ պիտի ըլլայ երբէք, խարազանն ըլլալու է այն, այս մասին տարակոյս չը կայ մտքիս մէջ: Ուրիշ միակ արդարանալի ձեւը բանտարկութիւնն է, որ կրնայ իբր մարմնական պատիժ ի գործ տրուել, ուր պէտք եղած յարմարութիւնները կան:

Իսկ իբր դասատու հիմայ տարբեր կերպով սորված եմ նկատել մարմնական պատիժը: Հիմայ ինձ այնպէս կը թուի թէ պէտք չ'է աչակերպը այդ պատիժին ենթարկել ի բաց առեալ խիստ մասնաւոր պայմաններու մէջ: Դասատուն երբէք խարազանի դիմելու չ'է սովորական յանցանքներու համար: Որոշեալ տարիքէ մը, 12—14 տարեկանէն վար եղողներն միայն ենթարկուելու են այս պատիժին: Երբէք հրապարակաւ դպրոցին ներկայութեանը ըլլալու չ'է: Տրուելու է կռնակի կողմէն, ուր տղուն վրաս հասցնելու վտանգ չը կայ: Երբէք տրուելու չ'է, երբ դասատուն բարկացած է: Եթէ մէկէ աւելի դասատուներ կան, դպրոցին տնօրէնը միայն տալու է զայն, և զգացնելու է մանուկին թէ դասատուն ցաւելով կուտայ այս պատիժը իրեն, և միայն որովհետեւ անյաջող եղած են միւս միջոցները:

Կարծեմ թէ ճիշդ հիմայ հասարակաց կարծիքը դպրոցներէն մարմնական պատիժը ջնջելու ի նպաստ է: Իսկ կը տարակուսիմ թէ երբէք բոլորովին բարձի թողի պիտի ըլլուի ամէն ուրեք:

Այս խնդրոյն հետ ուղղակի կապակցուած է ուրիշ խնդիր մ'ալ, թէ արդեօք դասատուն երբէք ուժի դիմելու է իրեն հրամաններուն հնազանդիլ բռնադատելու

համար: Պատասխանը պարզ է: Ուժ գործածելը ընդհանրապէս փափաքելի չ'է, բայց երբ անհնազանդութիւնը հրապարակաւ է և նախատալից, դասատուն կրնայ ուժի դիմում ընել, եթէ ըմբոստը զսպելու չափ բաւական ուժ ունի: Եթէ կը տարակուսի իր բաւականութեան մասին, բաւագոյն է բնաւ չը փորձել զայն:

(2) Դպրոցէն արտաքսելը ճիշդ հիմայ նախապատիւ կը համարուի ընդհանրապէս քան խարազանը: Անշուշտ այս միջոցին միշտ դիմում եղած է, երբ ուրիշ ամէն միջոց փորձուած ու անյաջող գտնուած է, բայց հիմայ շատ աւելի սովորական դարձած պատիժ մ'է: Կրնար շատ մը կերպերով արդարացուել: Եթէ տղայ մը դպրոցը կ'ապականէ, պէտք է վերցնել զինքը՝ միւս տղայոց օգտին համար: Եթէ յամառութեամբ կը մերժէ հրամաններուն հնազանդիլ, այդ կերպով ցոյց կուտայ իր փափաքը արտաքսուելու: Դպրոցը սահմանուած չ'է, կ'ըսուի, չար տղաքներն զգաստութեան բերելու, այլ դաստիարակելու զանոնք՝ որ կ'ուզեն դաստիարակուիլ: Արդար է որ տղայ մը որչափի հասկնայ թէ ընտրելու է կամ օրէնքներուն հնազանդիլ և կամ մեկնիլ:

Իմ կարծեօք, ճշմարտութիւն մը կայ այս ըսուածներուն մէջ, բայց յառաջացեալ դպրոցներուն միայն կը պատշաճի, և որոշ տարիքէ մը վեր ուսանողներու, որք կարող են իրենց ըրածն հասկնալ: Ինձ այնպէս կը թուի թէ նոյն իսկ քօլէճի կամ գիմնապիտնի մէջ աղտաքսումը ըլլալու է հազուադէպ պատիժ մը, յատուկ միայն անյոյս պարագաներու կամ բարոյականի դէմ գործուած մասնաւոր յանցանքի և կամ հեղինակութեան դէմ յայտնի ըմբոստութեան:

Նախնական և նախապատրաստական դպրոցներու մէջ անտեղի կը թուի ինձ այս պատիժը, թէև նոյն իսկ այսպիսի դպրոցներու մէջ կրնան ըլլալ պարագաներ,

կրք ծնողքներէն գաղտնապէս խնդրելու է իրենց տղաքները դպրոցէն առնել :

Աւելորդ չէ սակայն կրկնել հոս թէ ներկայ հասարակաց կարծիքն է մարմնական պատիժին փոխարէն այս պատիժը գործածել :

(3) Քանի մը դպրոցներու մէջ սովորական պատիժ մ'է յաւելուածոյ դասեր կամ պարտականութիւններ տալ աշակերտին, բայց դաստիարակութեան վրայ ճառող հեղինակներէն մեծագոյն մասը կը դատապարտեն զայս, այն պատճառաւ թէ ուսումը երբէք զուգորդուելու չէ պատիժի հետ, այլ ընդհակառակը՝ իբր հաճոյք գործածելու է զայն : Ես ալ փորձած եմ այս դրութիւնը և թողուցած իբր անգոհացուցիչ, թէև բոլորովին զայն դատապարտելու որամաղիւր չեմ : Կրնան ըլլալ տղաքներ, որոնց պատիժի այս ձեւը կը յարմարի, և որք պիտի օգտուին անկէ, երբ ծուլութեան համար կը ստիպուին կրել զայն :

(4) Հրապարակային պարտաւ ուրիշ տեսակ պատիժ մ'է որ պատշաճ է և աղքեցիկ : Բայց զգուշութեամբ պէտք է գործածել զայն : Եթէ յաճախ կրկնուի, իր ուժը կը կորսնցնէ : Եթէ չափազանց զգայուն սղու մը համար գործածուի, չափազանց խիստ է շատ մը պարագաներու մէջ : Եթէ բթամիտ, անզգայ տղայ մը ենթարկուի անոր, պատիժ չէ բնաւ : Երբէք այս պատիժը գործածուելու չէ, ի բաց առեալ երբ դասատուն վստահ է թէ դպրոցին բարոյական զգացումն իրեն կողմն է : Որովհետև առանց ասոր, պարզապէս ընդհանուր զգացում մը կը գրգռէ իր պատիժին դէմ :


(5) Յոռեմիջներու կանոնաւոր դրութիւնը պատիժ մ'է, որ բազմաթիւ առաւելութիւններ կ'ընծայէ, որովհետև կրնայ զգուշութեամբ կշռուիլ, և դիմում կ'ընէ աշակերտին պատուասիրութեան, ինչպէս նաև իր փա-

փաքին՝ իր ծնողաց համարումը վայելելու և նպատաւոր արձանագրութիւն մը թողելու դպրոցին սօմարներուն մէջ :

Կան բազմաթիւ ուրիշ տեսակ պատիժներ, զորս կրնայինք յիշել հոս, բայց ինչ որ արդէն ըսինք բաւական է բացատրելու այն սկզբունքներն, որք առաջնորդուեն դասատուն իր պատիժներն ընտրելու և այդ պատիժները տալու եղանակին մէջ :

Բաւական է յարել իբր եղրակացութիւն մը թէ որչափ սակաւաթիւ ըլլան դասատուի մը տուած պատիժներն, այնչափ աւելի լաւ, այն պայմանաւ անշուշտ որ իր դպրոցին բարեկարգութիւնը չը խանգարուի : Եթէ կրնայ այս արդիւնքը ձեռք բերել յորդորելով և համոզելով, իր աշակերտներուն սէրն ու վստահութիւնը շահելով, անոնց խիղճն ու պատուասիրական զգացումներն զարգացնելով, այդ պիտի ըլլայ լաւագոյն եղանակը : Ասոր ձկտելու է իւրաքանչիւր դասատու և այս սկզբունքին համեմատ գործելու է ըստ կարի, և իբր վերջին միջոց դիմում ընել պատիժի :





ԳԼՈՒԽ Զ.

ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԴԱՍԱԳԻՐՔ, ԴԱՍԱԿԱՐԳՔ ԵՒ ՔՆՆՈՒԹԻՒՆՔ

ԴԱՍԱԿԱՐԳՆԵՐ տարբեր գրութիւններ հնարուած են տարբեր ժամանակներ և նուազ կամ առաւել ժողովրդականութիւն վայելած : Այս գրութիւններն ծանօթ են անուններովը իրենց հնարիչներուն, որոնցմէ ոմանք աշխարհահռչակ համբաւ մ'ունին : Բաւական պիտի ըլլայ ամենէն կարեւորներն յիշատակել հոս : Բամէնիուս, Ռուսօ, Փետթալօձի, Լանքասթըր ամենէն քաջածանօթ անուններն են դաստիարակութեան վրայ ճառող հեղինակներու, և ասոնցմէ երեքը եղած են նաև գործնական դասատուներ :

Փետթալօձիի գրութիւնը նախնական կրթութեան միայն կը պատկանի, բայց իր սկզբունքներն ընդունուած են ընդհանրապէս : Փետթալօձի ջանաց բնութեան կարգին հետեւիլ սղաքներ կրթելու մէջ, օգնել կարողութեանց բնական զարգացման, և այնքան ժողովրդական ընել իր մեթոտները, որ առտնին դաստիարակութիւնը

ընդհանրանայ : Իր գրութիւնը արժան է ուսումնասիրութեան, բայց մենք այժմ ժամանակ չունինք անոր մանրամասնութեանց մէջ մտնելու :

Յովսէփ Լանքասթըրի գրութիւնը ժամանակ մը խիստ ժողովրդական եղաւ, և առ հասարակ ընդունուեցաւ աշխարհիս այս մասին մէջ 40-50 տարի առաջ : Իր գըլխաւոր յանձնարարութիւնը խնայողութիւնն էր, և հիմա ոչ եւս գործածական է : Փոխադարձ գրութիւն կը կոչուի, և աշակերտներն էին որ կը կատարէին ուսուցանելու գործը : Դպրոցը զգուշութեամբ աստիճանաւորեալ կարգերու կը բաժնուէր, և այս կարգերուն իւրաքանչիւրին դաս տալու գործը կը յանձնուէր իրմէ անմիջապէս վեր եղող կարգին աշակերտներուն : Այս կարգադրութեամբ միակ փորձառու դասատուի մը կարելի էր հինգ հարիւր աշակերտ ունեցող դպրոց մը վարել : Այնպիսի համոզում մը կար թէ փոփոխակի ուսանելու և ուսուցանելու այս եղանակն ինքնին լաւագոյն մեթոտն էր դաստիարակութեան :

Կարգ մը ուրիշ աշակերտներ հսկողի կամ կարգապահի դերը կը կատարէին : Դաստիարակը միայն տեսակ մը ընդհանուր հրամանատարն էր դպրոցին : Կային նաև երկրորդական նուազ կամ առաւել կարեւոր կարգադրութիւններ, ոմանք խիստ քմահաճ, զորս հոս ժամանակ չունինք նկատելու :

Այս գրութիւնը նոր մղում մը տուաւ ընդհանուր դաստիարակութեան զաղափարին և դպրոցական կազմակերպութեան մասին քանի մը բարեկարգութիւններ թելադրեց, բայց, ընդհանրապէս խօսելով, չը կրցաւ գոհացնել դարուն պահանջներն և իր համբաւը կորսնցուց :

Անգղիոյ մէջ տարածուեցաւ ուրիշ գրութիւն մը որ աշակերտ-դասատուի գրութիւնը կը կոչուի, և որուն նպատակն է նաև ծախքի մէջ խնայողութիւն ընել :

Դպրոցին ուսանողներուն մէջէն զասատուներ կ'որոշուին օգնելու համար կանոնաւոր դասատուններուն: Տեսակ մը աշակերտներ են, ժամանակին մէկ մասը կ'ուսանին, մնացեալ մասը կ'ուսուցանեն, որուն փոխարէն փոքրիկ թոշակ մը կ'ընդունին: Այսպէս հինգ տարի ծառայելէ վերջ՝ կրնան կանոնաւոր դասատուներ ըլլալ: Այս գործին կրնան ձեռնարկել, երբ դեռ տասներեք տարեկան են: Այս դրութիւնը իր աժանութենէն զատ ուրիշ շատ բան չունի յանձնարարելի. և հետզհետէ իր ժողովրդականութիւնը կը կորսնցնէ Անգլիոյ մէջ:

Փոքրիկ գիւղային դպրոցի մը մէջ միակ գործնական դրութիւնն է դասատուին ամէն ինչ դասախօսելն, որչափ որ կրնայ, անհատներու կամ փոքրաթիւ կարգերու: Անհատական դրութիւն կը կոչուի այս, և երբ վարժ է դասատուն և իր պաշտօնին հետամուտ, յաճախ նշանաւոր արդիւնքներ ձեռք կը բերուին, ի մասնաւորի կրթելով կամ ներշնչելով անհատական մանուկներ, որոնց հանձարն թմրած պիտի մնար այլպէս:

Որքան որ դաստիարակութիւնն յառաջդիմեց կառավարութեան հսկողութեան տակ, ընդարձակ զարգացում մը ընդունեց նաև ինչ որ Կարգի Դրութիւն կը կոչուէր: Այս կը նշանակէր դպրոցներու կանոնաւոր աստիճանաւորում մը Մանկապարտէզէն մինչև Համալսարանը, և ասոնց իւրաքանչիւրին ալ կարգերու բաժանումը, որ երբեմն գլխաւորաբար տարիքէն կախում ունէր, բայց բարձրագոյն վարժարաններուն մէջ ուսման մէջ յառաջդիմութենէն, որ քննութիւնով կ'որոշուէր: Կըսուի թէ ուսանողներու կարգերու մէջ դասախօսելու դրութիւնը ծագում առաւ Ռէմսի Լասալ Քանոնիկոսէն որ Քրիստոնէայ եղբարց Ընկերութիւնը հիմնեց 1680ին: Հիմա Կարգերու Դրութիւնը տարբեր կերպերով կը ներկայանայ տարբեր երկիրներու և տարբեր աստիճանի

դպրոցներու մէջ: Կարգի Դասաւանդութեան չորս գըլխաւոր մեթոտներ կան, Իրագրութիւն, Ընդօրինակութիւն, Դասազիրք և Ճառեր, որոնց վրայ կրնանք աւելցնել նաև Քննութիւնը՝ իբր հինգերորդ մեթոտ մը: Ասոնք բոլորը կրնան միացուիլ միեւնոյն դպրոցին կամ կարգին մէջ, բայց ընդհանրապէս մին կամ միւսն է տիրող տարրը: Բոլորն ալ տեսակ մը քննութիւն կը պահանջեն:

(1) Իրագրութիւն. — Այս կը նշանակէ ուղղակի կրթութիւնը և զարգացումը զգայարաններուն, իմասնաւորի տեսողութեան, լսողութեան և շօշափման, և միտքին կրթութիւնը զգայարանաց միջոցաւ: Կը պարունակէ ո՛չ միայն Մանկապարտէզի նախնական կրթութիւնը, այլ և ամէն գործնական աշխատութիւն, Արտաշափութեան, Քիմիաբանութեան, Երկրաբանութեան նման ուսումներու մէջ:

Այս տեսակ կրթութեան կարեւորութիւնը հիմա ամենէն ուշագրաւ նիւթն է դաստիարակութեան վրայ գրուած գրքերուն մէջ: Շատ անտես ստեղծած էր բազմաթիւ տարիներ Կարգի Դրութեան տակ, և տակաւին անտես կ'առնուի բազմաթիւ դպրոցներու մէջ, բայց տեսականապէս ամենուրեք ընդունուած սկզբունք մ'է հիմա:

Այս տեսակէն է Մանկապարտէզին կամ փոքրիկ մանուկներու դպրոցին մէջ աւանդուած ամբողջ կրթութիւնը: Փոէօպէլ է հեղինակը դասատուներու այս դրութեան: Գիտէր որ առաջին բանը, զոր մանուկները ընելու են, տեսնել է, շօշափել, շարժիլ, իրենց զգայարաններն գործածել: Բնութեան թելադրութեանց հետեւելով զգուշութեամբ կարգ մը պարզ ու պատշաճ զբաղումներ կարգադրեց դաստիարակելու համար զիրենք առանց ձանձրացնելու. տեսակ մը կազմակերպեալ խաղ,

որ կարգաւ կը զբաղեցնէ բոլոր զգայարանները ու գործարանները, մասնակները վարժեցնելով գործածել իրենց ձեռքերը, ոտքերը, աչքերը և ձայները, մինչ միեւնոյն ատեն հնազանդութիւն կը սորվին, ուշադրութեան ու ժրութեան ունակութիւններ կը ստանան և չարին ու բարւոյն պարզ գաղափարներուն կը տիրանան: Այս տեսակ դպրոցները հետզհետէ կը բազմանան քաղաքակրթեալ աշխարհի մէջ, որչափ որ զանոնք վարելու կարող դասատուներ գտնուին:

Հասարակ ու բարձրագոյն դպրոցներու մէջ Իրագիտութիւնը նուազ կարեւոր տեղ մը կը գրաւէ, բայց յանձնարարելի է ուր որ կարելի է ներմուծել զայն, ինչպէս Չափագիտութեան քանի մը ճիւղերուն մէջ, բնութեանէն գծելուն մէջ, և բոլոր գիտական ուսմանց մէջ: Օրինակի համար, Թուաբանութեան մէջ խորանարդ արմատը սորվեցնելու համար հիմա ընդհանրապէս փայտի կոճղիկներ կը գործածուին: Բոլոր փորձերը Բնագիտութեան, Քիմիաբանութեան մէջ և այլն և ի մասնաւորի բոլոր գործնական գիտութիւնները Իրագիտութեան կը պատկանին: Արհեստանոցները գլխաւորաբար կ'ապաւինին ուսուցանելու այս մէթոտին, այսինքն աշակերտին գործնական աշխատութիւններ ընել կը տրուի, իրմէ կը պահանջուի ո՛չ միայն տեսականը և չափագիտական խնդիրները սորվիլ, այլ այդ տեսականը իրենց ձեռքով գործնականի վերածել փորձառաբար աշխատանոցին մէջ:

(2) Ընդօրինակութիւն. — Գերմանական այն դրութիւնը՝ որով դասատուն բերանացի կ'աւանդէ իր դասերը և աշակերտները տետրակներու մէջ կը գրեն զայնս, երբէք մեծ ընդունելութիւն չէ գտած Անդրլոյ և Սմերիկայի մէջ, և ես ալ երբէք անձնապէս փորձած չեմ այս դրութիւնը:

Այնպէս կը կարծեմ թէ դասագրքի գործածութեան

վրայ այդ դրութեան ընծայուած առաւելութիւններն այսպիսիք են.

(1) Աշակերտը աւելի մերձաւոր շօշափման մէջ կը դնէ դասատուին հետ ու աւելի անոր անձնական ազդեցութեան տակ: Անտարակոյս ներչնչում մը կայ այս շօշափման մէջ, եթէ համակրական նկարագիր մ'ունի դասատուն:

(2) Աշակերտները կը ստիպէ դասերը ուսանիլ: Ստիպուած է մտիկ ընել և գրել: Ստիպուած է ուշադրութիւն տալ, երբ դասատուն կը խօսի, և այս ամէնը մեծ օգնութիւն մ'է յիշողութեան: Ոչինչ կը թողուի աշակերտին կամքին: Ստիպուած է սորվիլ թէ ուղէ կամ ո՛չ:

Այնպէս կը կարծեմ թէ այս է այս դրութեան գրելխաւոր առաւելութիւնը, և կարգ մը ծոյլ, անհոգ տղայոց համար խիստ մեծ առաւելութիւն մ'է: Թերեւս փափաքելի է որ մենք ալ ընդունինք այս դրութիւնը կարգերէն ոմանց համար, մասնաւորաբար նախապատրաստական ճիւղին մէջ:

Այս դրութեան վնասներն են (1) որ հակամէտ է դասատուները լոկ կենդանի ձայնագիրներ, դասախօս մեքենաներ ընել: (2) Հակամէտ է աշակերտներն ալ պարզ գրելու մեքենաներու վերածել: Չը քաջալերեք անձնական նախաձեռնութիւն: Ճշդութիւն կ'ապահովէ, բայց ի վնաս ազատութեան: Աւելի կրթութիւն է քան դաստիարակութիւն:

Կարծեմ թէ այս դրութեան արդիւնքը կրնանք տեսնել Գերմանական նկարագրին մէջ: Չը կայ աշխարհի մէջ ուրիշ երկիր մը, որ աւելի համբերող, աշխատալից, և մանրակրկիտ ուսանողներ արտադրէ, բայց ժողովուրդը ամբողջովին նկատելով, կը տեսնենք մեքենական միօրինակութիւն մը, անհատականութեան բացակայութիւնը, որ շատ ակներև է: Բժականդիրներու ազգ մ'են, և ճիշդ

հիմա Պիղմարք է իրենց դասատուն, տուն տալով իրենց դասեր, զորս կը լսեն և կ'ընդօրինակեն: Զինուորական ազգի մը համար, ուր ամէն մարդ զինուոր է, որուն առաջին պարտաւորութիւնն է հլու հնազանդութիւն, այս գրութիւնը իր անվիճելի առաւելութիւններն ունի: Որեւէ տեղ կրնայ օգտակարապէս գործածուիլ կարգ մը ուսանողներու համար, բայց իբր ընդհանուր գրութիւն գոհացուցիչ չ'երեւիր ինձ: Ես նախապատիւ կը համարեմ գործնական կրթութեան համար եղանակ մը՝ որ առիթ կ'ընծայէ ուսանողին կողմանէ աւելի նախաձեռնութեան և մտքի աւելի կամաւոր գործունէութեան: Ճարտար դասատուն կրնայ այս գրութեամբ այս արդիւնքն ալ ապահովել յաճախակի բերանացի քննութիւններով, բայց վերջապէս դասագրքի գրութիւնը նախապատիւ կ'երեւի ինձ:

Գ. Դասագրքեք. — Դասարանին մէջ դասագրքի գործածութիւնը նոր հնարք մ'է, և վերջին տարիներու մէջ է որ իր ներկայ կատարելութեան հասած է: Դրութիւն մ'է որ ունի իր վտանգները ինչպէս իր առաւելութիւնները, և կրնայ ընդօրինակութեան գրութեանէն աւելի վատթար բանի մը վերածուիլ:

Դասագիրքը նիւթի մը բացատրութիւնն է, որ այնպէս կ'ենթադրուի թէ պատրաստուած է այդ նիւթին հմուտ անձի մը կողմանէ, և սահմանուած է գործածուելու ուսանողներու կողմանէ, որ ոչինչ գիտեն այդ նիւթին նկատմամբ, ուղղութեան տակ դասատուի մը, որ կը հասկնայ զայն: Դասագիրքը հաստատուեցաւ օգնութիւն մ'ըլլալու համար դասարանին դասաւանդութեան:

Կան դասագիրքեր որ լաւ են, ուրիշներ որ յոռի են, և կրնան լաւ կամ յոռի դասատուներու կողմանէ գործածուիլ: Լաւագոյն դասագիրքերն իսկ գոհացուցիչ չ'են, եթէ իրենց վրայ բաւական բերանացի տեղեկութիւններ չ'աւելցուին, ինչպէս կ'ակնկալուի:

Այս գրութեան վարդապետութիւնն այն է թէ աշակերտը հաւատարմաբար ինքն իրեն պիտի ուսանի օրուան դասը դասագրքին մէջ, և անոր վրայ աւելցնել ինչ որ կրնայ քաղել իրեն յանձնարարուած ուրիշ գրքերէ: Այսպէս դասարան կուգայ իր միտքն արդէն արթնցած և քիչ շատ ծանօթութիւն ստացած դասախօսուած նիւթին նկատմամբ: Դասարանին մէջ կը քննուի Սովրատական ոճով. թէ՛ տեսնելու համար թէ իր դասը սորված է, և թէ՛ նաև օգնելու համար իրեն հասկնալ զայն: Բուն դասախօսութիւնը կը կայանայ կարգին այս քննութեան մէջ իւրաքանչիւր դասի ժամանակ, և այն բացատրութեանց մէջ, որք կը տրուին այդ առիթ, և որուն համար ուսանողը պատրաստուած է, իր գործօն աշխատութեամբը, դասարան գալէ առաջ:

Դիտմամբ է որ ըսի թէ քննութիւնը և բացատրութիւնը Սովրատեան խօսակցութեան ձեւով ըլլալու է, որովհետև ենթակայ է ճառախօսութեան ձևն առնել, երբ դասատուն կ'ըլլայ միակ խօսողը և աշակերտներն ալ միայն ունկնդիրի դերը կը կատարեն: Այսպէս ըլլալու չ'է: Նպատակը օգնել է աշակերտին ինքն իրեն համար խորհիլ, ո՛չ թէ ուրիշը խորհի իրեն տեղ:

Երբ լաւ է դասատուն և լաւ են դասագիրքերը, որոնց վրայ կ'աւելցուին նաև պատշաճ իրագիտական դասեր, չը կայ կարգի Դասախօսութեան ուրիշ գրութիւն մը որ հաւասար ըլլայ ասոր ուշիմ ու հաւատարիմ ուսանողներու համար: Իր մէջ կը միացնէ միւս գրութեանց բոլոր կարելի առաւելութիւնները:

Երբ լաւ է դասատուն և լաւ են ուսանողները շատ փոյթ չ'է որ խեղճ ըլլայ դասագիրքը: Բայց եթէ անկարող է դասատուն, կամ ուսանողը ծոյլ ու անհոգ, անյաջողութեան դատապարտուած է, որչափ ալ լաւ ըլլայ դասագիրքը:

Ճիշդ հոս է այս դրութեան իրական վտանգը : Մասնաւոր փորձութիւններ կը ներկայացնէ թէ՛ դասատուին և թէ՛ ուսանողին : Ընդօրինակութեան դրութեան մէջ դասատուն պէտք է որ գոնէ գիտնայ ինչ որ կ'ուսուցանէ . և աշակերտն ալ ստիպուած է աշխատիլ : Բայց դասագրքի դրութեան մէջ , դասատուն ինքն կրնայ տգէտ ըլլալ , և տակաւին դասախօսելու երեւոյթը պահել : Տղան կրնայ ծոյլ ըլլալ , և տակաւին դասագրքէն բառեր գոց սորվիլ չը խայտառակուելու չափ : Եւ այս բոլորը պատճառ կ'ըլլայ տեսակ մը ծանօծադութեան , որ անարժան է դաստիարակութեան անուան :

Եթէ պատշաճօրէն գործածուի , լաւագոյն դրութիւնն է , բայց անհոգ կամ տգէտ գործածութեամբ կրնայ ամենէն յոռի դրութիւնն ըլլալ :

Գ. Ճառախօսութիւն . — Ճառախօսութեան միջոցաւ դասախօսելու դրութիւնը յատուկ է միայն բարձրագոյն դպրոցներու , ուր աշակերտները արդէն կրթուած , վարժուած են իրենց պատասխանատուութեամբն ուսանիլ :

Այս դրութեան համեմատ , ուսուցիչը ճառ մը կը կարդայ ուսանողներուն , որք կը նշանակեն ինչ որ կամին , և ընդհանրապէս քննութիւն չը կայ ի՛ բաց առեալ ընդհանուր նիւթին վրայ . ամբողջը աւարտելէ վերջ : Այս քննութեան համար աշակերտը կը պատրաստուի ի՞նչ կերպով որ կը կամի : Այս դրութիւնը կարելի կ'ընէ ճիշդ հարիւր աշակերտ ունենալ մէկ կարգին մէջ , և անհատական կրթութիւն չը կայ , քիչ անգամ նոյն իսկ անձնական ծանօթութիւն ուսուցչին և ուսանողին մէջ : Ուսուցիչը քիչ անգամ զիտէ անունները ուսանողներուն , որք թերեւ երբէք առիթ չ'են ունենար իրեն հետ խօսելու :

Երրօրական համալսարաններուն մեծագոյն մասին դասախօսութեան եղանակն այս է , և այս դրութեան տակ ուսանողը կրնայ շատ բան սորվիլ կամ ոչինչ , ինչ-

պէս կը կամի : Իմ կարծիքս այն է թէ քիչ մը աւելի Սոկրատեան մեթոտ մեծապէս օգտակար պիտի ըլլայ նոյն իսկ համալսարաններուն մէջ , և ուրիշ դպրոցներու մէջ որչափ քիչ ճառ կարդացուի , աւելի լաւ : Նախնական դպրոցներուն մէջ բոլորովին անտեղի է :

Վերջին տարիներս համալսարանները ջանք մ'ըրած են այս դրութեան պակասը լրացնելու՝ հաստատելով տեսակ մը ժողովներ , ուր ուսանողներէն ամէն անոնք որ կը փափաքին , կրնան ներկայ ըլլալ ուսուցիչին հետ խօսակցելու համար իրենց դասերուն վերաբերեալ նիւթերուն վրայ : Ամերիկայի մէջ , ասկէ դատ կայ նաեւ դաս մը՝ ուր ուսանողները ուսուցիչին կը ներկայանան Սոկրատեան մեթոտով հարցաքննուելու համար :

Ե. Քննութիւնք . — Ընդհանրապէս ոչ ուսանողները և ոչ հասարակութիւնը քննութիւնը կը նկատեն իբր միջոց մը դաստիարակութեան , այլ միայն իբր միջոց ուսանողին և դասատուին կատարած գործը փորձելու : Ուստի քննութիւնները անհաճոյ եղած են միշտ ուսանողներուն և հասարակութիւնն ալ չափազանցած է անոնց արժէքը : Սովորաբար աւելի արժէք ունին ուսանողներուն կարծածէն , և նուազ՝ հասարակութեան կարծածէն :

Բայց արդարեւ քննութիւնները էական մասը կը կազմեն կարգի Դաստիարակութեան , կարեւոր միջոց մը կարողութիւնները զարգացնելու : Այս կերպով քննութիւնները կրնան գլխաւորաբար արդարանալ : Տեսակ մը մտաւոր մարզանք են , և օժանդակ ուրիշ տեսակ մարզանքներու , ապահովելով յստակ և ճշգրիտ գաղափար մը այն դասերուն մասին , զորս սորված է ուսանողը :

Քննութիւնները կրնան ըլլալ գրաւոր կամ բերանացի : Բերանացի քննութիւնները գլխաւորաբար կը կատարուին առօրեայ դասերուն մէջ , զորս աշակերտը

սորված է իր դասագրքէն կամ դասատուին խօսածնե-
րուն ընդօրինակութենէն :

Գասատուին գործին էական մասը կը կազմէ հոս : Այս է որ կենդանի իրականութիւն մը կուտայ այն դա-
սին , գոր աշակերտը սորված է , և կը կարողացնէ զինքը
ըմբռնել զայն , և հոս է որ ամենէն աւելի ճարտարու-
թիւն կը պահանջուի դասատուին կողմանէ : Առօրեայ
այս բերանացի քննութեանց մէջ է որ դասատուն իր
յաջողութիւնը կամ անյաջողութիւնը կ'ապացուցանէ :
Ինչպէս ըսի արդէն այս քննութիւններն ընդհանրապէս
Սովրատեան խօսակցութեան ձեւով ըլլալու են : Կարո-
ղացնելու են ուսանողը ինքն իրեն համար խորհիլ : Օգ-
նելու են իրեն յստակ , որոշ գաղափարներ կազմել , և
իր ազիտութիւնը ինչպէս իր գիտութիւնը ցոյց տալ
իրեն : Երբեմն իր յիշողութիւնն ալ կրնայ այս կերպով
փորձուիլ , բայց այս ամենէն քիչ կարեւոր մասն է գոր-
ծին : Գոց սորվելն դաստիարակութեան էական մաս մ'է ,
բայց ո՛չ ամենէն էականը :

Որպէս զի այս առօրեայ բերանացի քննութիւնները
իրենց նպատակին ծառայեն , պէտք է որ յստակ ըլլան
հարցումները , պարզ հարցում մը՝ պարզ և որոշ լեզուաւ
բացատրուած : Կտրուկ ըլլալու են և միտքը խոտորե-
ցընելու չ'են այն միակ նիւթէն , որոյ մասին կուզես
հարցում ուղղել : Պէտք է որ որոշ ըլլան , ո՛չ թէ ցլը-
ուած , անորոշ : Ընդհանրապէս ըլլալու չ'են այնպիսի
հարցումներ , որոնց պատասխան մը կրնայ լոկ այո՛ և ո՛չ
ըլլալ : Այդպիսի հարցումներ գործածուած են Սովրատե-
ան մէթոտին մէջ ալ , բայց իբրև մասերը այն շարքին ,
որոնց նպատակն է հարցաքննողին ազիտութիւնը ցոյց
տալ : Ընդհանրապէս խօսելով՝ հարցումը պարունակելու
չ'է նաև պատասխանը , որ ուսանողէն կ'ակնկալուի :
Պէտք է կապակցութիւն մ'ըլլայ , շարայարութիւն մը

ուղղուած հարցումներուն մէջ : Առ հասարակ պէտք չ'է
հարցումը ուղղել այնպիսի լեզուաւ մը՝ որ նիւթը իրա-
կանէն աւելի դժուար ընէ :

Բերանացի քննութիւնները կը կատարուին նաև առ-
տիճանաւ մը փորձելու համար կատարուած գործը , բայց
երբէք չ'են կրնար կատարելապէս արդար ըլլալ , և հիմա
այնքան չ'են գործածուիր , գէթ իբր մրցումի փորձեր :

Գրաւոր քննութիւններ . — Շատ չ'են գործածուիր
կարգին առօրեայ աշխատութեանց մէջ պարզապէս որով-
հետև դասատուին չափազանց աշխատութիւն կը պատ-
ճառեն , բայց երբ կարելի է , զանց առնուելու չ'են :
Քանի մը կարգերու մէջ անհրաժեշտ են , և դասատուն
ժամանակ գտնելու է անոնց համար , և բոլոր կարգե-
րուն մէջ պահանջուելու են մերթ ընդ մերթ : Իրենց
մասնաւոր արժէքն այն է որ կը ստիպեն ուսանողը յստակ
գաղափարներ կազմել . կ'ազատեն զինքը տարտամ և
անորոշ տեսութիւններէ իւր ուսած նիւթերուն նկատ-
մամբ : Կ'օգնեն իրեն իր ծանօթութեան սահմաններն
նշմարել , և իր մտքին մէջ տպաւորել ինչ որ կարող է
ըմբռնել : Կը կարողացնեն զինքը նաև իր գաղափար-
ներն յստակ լեզուաւ բացատրել , և իր գիտցածը գոր-
ծածել :

Փոքրաթիւ կարգերու մէջ դասատուին կարելի է
չարունակ գործածել կրթութեան այս եղանակը . բայց
բազմաթիւ կարգերու մէջ կրնայ միայն մերթ ընդ մերթ
գործածուիլ :

Իբր փորձ կատարուած գործին , այսինքն իբր միջոց
գիտնալու թէ արդե՞օք ուսանող մը ըստ բաւականին
յառաջացած է յաջորդ բարձրագոյն կարգը անցնելու
համար , գրաւոր քննութիւնը գերազանց է բոլոր միւս
փորձերէն : Այս կ'ենթադրէ մեծ աշխատութիւն դասա-
տուին համար , որ բոլոր թուղթերը քննելու է ուշադ-

բուժեամբ, և այս պատճառաւ մէկ քանի քուէճներ ուրիշ դրութիւններ ընդունած են, ոմանք բոլորովին թողած են փորձի համար կատարուած քննութիւնները, բայց առանց բանաւոր պատճառի, ինչպէս ինձ կը թուի:

Փորձի համար եղած քննութիւնք, եթէ գրաւոր են, կատարելապէս արդար և բանաւոր եղանակ են ապացուցանելու թէ ինչ սորված է աշակերտը, և այսպիսի քննութեան մը ակնկալութիւնը շարունակ պիտի դրդէ զինքը եռանդեամբ աշխատելու տարւոյն ընթացքին մէջ: Հետեւաբար ըստ ինքեան միջոց մը կ'ըլլայ զինքը դաստիարակելու:

Շատ հոգ տանելու է սակայն դասատուն իր հարցումները պատրաստելուն մէջ, ինչպէս նաև արգելելու որ և է խարդախութիւն աշակերտին կողմանէ, և միանգամայն կատարեալ անկողմնակալութեամբ քննելու թուղթերը: Հարցումները պէտք է յստակ ըլլան և կրտրուկ, կարեւոր կէտերը միայն պէտք է շօշափեն, և պահանջին աշակերտէն միայն ինչ որ պէտք է գիտցած ըլլայ:

Աշակերտք չեն ակորժիր խիտ հսկողութեան մը ենթարկուիլ քննութեան ժամանակ, բայց եթէ այսպիսի հսկողութիւն մը ի գործ չը դրուի, կը փորձուին խարդախութիւն գործել, իրենք պիտի ըլլան առաջինը դասատուն դասապարտելու, և անոր անմտութիւնը հեզնելու: Եթէ ճշդապահ է դասատուն, այնչափ աւելի պիտի յարգեն զինքը:

Դասատուն պատիւն ու պարտաւորութիւնը կը պահանջեն որ թուղթերը քննէ զգուշութեամբ և բացարձակ անկողմնակալութեամբ: Մերթ պիտի գտնէ որ թուղթերէն ոմանք իր ակնկալածին չափ յաջող չեն, և ուրիշներ ալ իր ակնկալածէն լաւագոյն: Բայց իր պարտքն է նիշ տալ անոնց ինչպէս կը գտնէ զանոնք և ո՛չ ինչպէս կ'ակնկալէր գտնել:

Այսպէս կ'ամբողջացնենք մեր տեսութիւնը կարգի Դրութեան մէջ ի գործ դրուած կրթութեան տարբեր եղանակներուն մասին: Եւ անօգուտ չէ թերեւս խօսքս վերջացնելէ առաջ յիշեցնել ձեզ մէկ քանին այն դիտողութիւններէն, զորս ըրի այս նիւթին վրայ այս և ուրիշ ճառերու մէջ:

Դասագրքի դրութիւնը, որ գրեթէ բոլոր աշխարհիս վրայ կը գործածուի հիմա առ հասարակ, չը կրնար, ինչպէս ըսինք, գոհացուցիչ համարուիլ, եթէ իրեն չ'ընկերանայ ուրիշ մեթոտներու ազատ կիրարկութիւնը: Այն դասատուն որ միայն դասագիրքը գիտէ, յարմար չէ դասատու ըլլալու: Պարզապէս պահանջել որ աշակերտը դասագիրքը գոց սորվի, դասախօսել չէ բնաւ: Դասագիրքերէն շատերը անպիտան են, և մեծ զգուշութեամբ ընտրուելու են անոնք՝ որ պիտի գործածուին: Լաւագոյն դասագիրքը անբաւական է, եթէ դասատուն իր կողմանէ յաւելումներ չ'ընէ անոր վրայ: Կենդանի դասատուն և ո՛չ թէ դասագիրքն է որ կը դաստիարակէ աշակերտը: Դասատուն օգնելու է միշտ աշակերտին յարմար գրքեր գտնել իր դասագիրքին հետ մէկտեղ կարդալու համար, և այդպիսի ուսումնասիրութիւններ քաջալերելու է ըստ կարելւոյն:



Գ Լ Ո Ւ Խ Է.

Գ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

ՅՈՅՅ տուի իմ առաջին ներածական ճառիս մէջ թէ զաստիարակութեան մեծ նպատակը նկարագրի զարգացումն է, թէ նեոեւաբար զասատուն հետաքրքրուելու է իր աշակերտին ֆիզիզական, և իմացական ու բարոյական զարգացումովը, քանի որ ասոնք ամենքն ալ էական են ամբողջ մարդուն: Ասոնց մէջ բարոյական զարգացումը ամենէն կարեւորն է, և միշտ ներկայ ըլլալու է զասատուին միտքին մէջ, որ կրնայ, եթէ կամի, այս նպատակին ծառայեցնել զպրոցին կրթութիւնը ու ազդեցութիւնը: Իր բուն նկարագիրը և օրինակը ամենէն կարեւոր տարրն են այս ազդեցութեան մէջ:

Այդ ճառին մէջ անցողակի յիշուեցաւ նաև ուսմանց ընթացքին առնչութիւնը մտաւոր կարողութեան ներդաշնակ մշակութեան հետ: Բայց աւելորդ չ'հրեւիր ինձ իմ այս պարզ ներածական ճառերուս շարքը փակելէ առաջ այս կէտին անդրադառնալ և աւելի մանրամասնօրէն նկատել զայն: Կարգ մը խիստ զժուարին խնդիրներ կան ասոր հետ կապակցուած:

1. Ամէն դպրոց պէտք է ունենայ ուշադրութեամբ կարգադրուած ու հաստատուած ուսմանց ընթացք մը, որ պարտաւորիչ ըլլալու է ամէն աշակերտի համար: Համալսարանը անշուշտ իր մէջ կր պարունակէ բազմաթիւ անշատ դպրոցներ, և աշակերտն ազատ է որոշել թէ ասոնցմէ որո՞ւն մէջ պիտի աշակերտի: Բայց այս դպրոցներէն խրաքանչիւրը պարտի ունենալ իր հաստատուն ուսմանց ընթացքը, որուն պարտին հետեւիլ ուսանողներն:

Նախնական կամ Բարձրագոյն դպրոցներու նկատմամբ այս մասին կարծեաց տարբերութիւն չը կայ և ո՛չ ուրեք: Այնքան ակներև կերպով անհեթեթ է մանուկին թողուլ սրտչել թէ ի՞նչ ուսմանց պիտի հետեւի կամ ո՛չ, որ խնդիր չը կրնար ըլլալ այս մասին:

Բայց Քօլէճին կամ Գիմնազիոնի նկատմամբ այսպիսի համաձայնութիւն չը կայ: Ամերիկայի մէջ ի մասնաւորի բաւական վիճաբանութեան նիւթ եղած է այս՝ վերջին տարիներս: Այս ծագում առած է ուրիշ վիճաբանութենէ մը Դասական ուսմանց արժէքին նկատմամբ: Այս ուսմանց հակառակորդները տեսնելով որ չ'են կրնար ջնջել զայն քօլէճներուն մէջ, փորձեցին ներմուծել ուսմանց ուրիշ փոխադարձ ընթացք մը և թողուլ որ ուսանողը ընտրէ Դասական կամ Գիտական ուսմանց հետեւիլ: Արդիւնքը այն եղած է որ քօլէճներուն մեծագոյն մասը թիւ մը կամաւոր ուսումներ ներմուծած են բարձրագոյն կարգերուն մէջ, և քօլէճներէն ոմանք ըտլոր կարգերուն մէջ:

Կ'ընդունիմ թէ կամաւոր ուսումներ կրնան ներմուծուիլ ուսմանց հաստատուն ընթացքի մը մէջ այնպիսի կերպով մը որ անոր օգտակարութեան չը վնասեն: Զոր օրինակ, ուսանողի մը կրնայ թոյլ արուիլ ընտրել Յրանտերէն կամ Գերմաներէն և կամ Իտալերէն, Քիմիա-

բանութիւն և կամ Երկրարանութիւն, Բաղաքական Տնտեսութիւն և կամ Միջազգային Օրէնք, որովհետև մտաւոր կրթութիւնը նոյնն է միոյն կամ միւսին մէջ: Բայց խելացութիւն չ'է թողուլ որ ուսանողն ընտրէ երկու ճիւղերէն մին կամ միւսը, զոր օրինակ, Չափագիտութիւնը և կամ Լեզուագիտութիւնը: Իրեն այսպիսի ընտրութիւն մը ընելու ժամանակը չ'է, մինչև որ Համալսարան մտնէ:

Թէ ի՞նչ պատճառաւ ուսմանց ընթացք մը պէտք է հաստատուի Քօլէճի կամ Գիմնադիոնի մէջ և ուսանողին կամքին չը թողուլ տարբեր ճիւղերէն մին և կամ միւսը ընտրել, դժուար չ'է մակարեւել:

(1) Ուսանողը դեռ այնքան յառաջացած չ'է որ կարենայ գիտնալ թէ ո՞րն է լաւագոյնը իրեն համար:

(2) Այնքան զարգացած չ'է որ կարող ըլլայ որոշել թէ ի՞նչ կոչումի պիտի հետեւի, և կամ ի՞նչ կոչումի յարմարութիւն ունի ամենէն աւելի:

(3) Քօլէճի դաստիարակութեան նպատակը մտքին կարողութեանց ընդհանուր զարգացումն է, և ո՛չ պատրաստութիւն մասնաւոր կոչումի: Ուսմանց մէկ ճիւղը զանց ընել կը նշանակէ անմշակ թողուլ կարգ մը կարողութիւններ, մինչ ճշմարտապէս դաստիարակեալ անձը այն է որ համերաշխաբար դաստիարակուած է: Այսպիսի մէկը շատ աւելի արժէք ունի իրեն և աշխարհի, քան այն՝ որուն կրթութիւնը գործնական է և միակողմանի:

(4) Յաճախ շատ աւելի ազդեցիկ մտաւոր կրթութիւն մ'է ուսանիլ ինչ որ դժուարին է և անհաճոյ քան ինչ որ դիւրին է և յանկուցիչ:

(5) Փորձառութիւնն ու հեղինակութիւնն ալ նոյնը կը հաստատեն: Նոյն իսկ Ամերիկայի մէջ, ուր ամենէն շատ խօսուած է ի՛ նպաստ կամաւոր ուսմանց, ընդհանուր կարծիքը հիմա աւելի հակառակ է թոյլ տալու որ ուսանողներն ընտրեն իրենց ուսումները:

Պէտք է յարել սակայն թէ կան բացառիկ պարագաներ, երբ խելացութիւն է դասատուին համար աշակերտը ազատ թողուլ այս կամ այն ճիւղին չը հետեւիլ. բայց այսպիսի ուսանողներ երբէք ընդունելու չ'են այն տեսակ վկայականը որ կը տրուի անոնց, որք ուսմանց ընթացքը ամբողջացուցած են, կամ ենթադրել տալ թէ իրենց դաստիարակութիւնը հաւասարակչիւ է միւս ուսանողներուն դաստիարակութեան: Կան միտքեր, որոնց կարողութիւններէն ոմանք յայտնի կերպով թերի են, Չափական գիտութիւններն ըմբռնելու կարողութիւնը, զոր օրինակ, և որք կրնան ուրիշ ճիւղերու մէջ յաջողութեամբ կրթուիլ: Դասատուն և ո՛չ ուսանողը ըլլալու է դատաւորը այսպիսի պարագաներու մէջ, և իր որոշումը պէտք է հիմնուի մտաւոր անկարողութեան և ո՛չ թէ ուսանողին ծուլութեանն և քմահաճոյքին վրայ: Ո՛ր որ այդպիսի անկարողութիւն մը կայ, չպիտի գրկեմ գիրենք քօլէճի դաստիարակութեան մը առաւելութիւններէն, այլ կարելին պիտի ընեմ իրենց համար:

Բ. Ուսմանց ծրագիրը խճողուած ըլլալու չ'է չափէն աւելի ուսումներով. ի մասնաւորի ստորին դպրոցներու մէջ:

Ներկայիս մէջ շատ քիչ դպրոցներ կան մասնաւոր Անգլիոյ, Ամերիկայի և Ֆրանսայի մէջ, որ չեն մեղանչեր այս սկզբունքին դէմ: Պատիւ մ'է Գերմանական կայսրութեան որ դիմադրած է ներկայ ժամանակիս այս դժբաղդ հակամիտութեան աւելի քան ուրիշ ո՞ր և է երկիր:

Նախնական դպրոցը բաւական համարելու է Ընթերցանութիւն, Գրավարժութիւն, Թուաբանութիւն և Աշխարհագրութիւն: Բայց հիմա շատ տեղեր այդպիսի դպրոցներն ունին ուսմանց ընթացք մը, որ կը պարունակէ երկոտասանեակ մը ուրիշ նիւթեր, և ոմանք կը

յաւակնին քօլէճի մը չափ նիւթեր աւանդել : Այս պարզապէս յիմարութիւն ու պատրանք է . եթէ ո՛չ վատթար քան զայս : Խարդախութիւն մ'է ծնողաց դէմ և փնաս տղայոց : Վերջ 'ի վերջոյ ողջամտութիւնը պիտի յաղթանակէ, և պիտի վերադառնանք նին դրութեան, սակաւաթիւ նիւթերու ձեռնարկել և զայնս լաւ ուսանիլ : Այս է գաղափարականը :

Նոյն իսկ քօլէճի ծրագիրը հիմա չափազանց ընդարձակուած է և չափէն աւելի նիւթեր կը պարունակէ : Եթէ իմ բուն դատողութեանս հետեւէի, պիտի կարէի գէթ մէկ երրորդը Ռոպրթ Քօլէճի ուսումներուն, և ժամանակ տայի միւսները աւելի զգուշութեամբ ուսումնասիրելու : Իմ կարծիքս այն է թէ օրը երեք դաս իւրաքանչիւր դաս մէկ ժամ, շատ աւելի օգտակար պիտի ըլլար քան մեր ներկայ դրութիւնը :

Բայց այս այնպիսի պարագայ մ'է, ուր դատաւորն ստիպուած է իր լաւագոյն դատողութեան հակառակ տեղի տալ ժողովրդական ընթացիկ կարծիքին, և գոհանալ ընելով ինչ որ կրնայ այս պարագաներուն մէջ : Այս կէտին մասին կարծիքի փոփոխութիւն մը սկսած է արդէն, և կրնանք յուսալ թէ քսան տարի վերջ աւելի բանաւոր եղբակացութեան մը պիտի յանգինք : Ներկայ անբանաւոր ընթացքը կը պարտինք գլխաւորաբար այն մեծ յառաջդիմութեան, զոր գիտութիւնը կատարած է վերջին յիսուն տարուան միջոցին, և այն պայքարին՝ որ ծագում առած է դաստիարակութեան Դասական և Իրապաշտական վարդապետութեան միջև : Դպրոցը փորձած է երկու դրութիւններն ալ ընդգրկել միանգամայն :

Խելացութիւն չը պիտի ըլլայ ձեզ, երիտասարդ դասատուներուդ համար ասոր դէմ տպստամբիլ . բայց հասկնալու էք ասոր անհեթեթութիւնը, և լռելեայն գործածելու էք ձեր ազդեցութիւնը իւրաքանչիւր աս-

տիճանի դպրոցական ուսումները սահմանափակելու իրենց յատուկ շրջանակներուն :

Այս երկրին մէջ պիտի գտնէք Նախապատրաստական դպրոցներ ուր կը յաւակնին Հոգեբանութիւն և Իմաստասիրութիւն ուսուցանել : Եթէ այդպիսի դպրոցի մը մէջ իյնալու դժբաղդութիւնն ունենաք, թերևս չը պիտի կարենաք ջնջել այսպիսի ծաղրելի յաւակնութիւններ . բայց կրնաք գոնէ սահմանափակել ձեր դասախօսութիւնը այնպիսի տարրական սկզբունքներու, զոր տղայք կարող են հասկնալ, և ո՛չ թէ այն պատրանքը տալ իրենց թէ իրօք այդպիսի նիւթեր կրնան ըմբռնել :

Գ . Այն մտաւոր կարողութիւնները, զորս դպրոցը պիտի զարգացնէ և մարզէ հետեւեալներն են, Ուշադրութիւն, Ըմբռնում, Յիշողութիւն, Երեւակայութիւն, Գիտակցութիւն, Դատողութիւն :

Այս է նաև զարգացման բնական կարգը : Նախնական դպրոցներուն մէջ առաջին չորսն է որ մասնաւորաբար ջանք կ'ըլլայ զարգացնել, թէև նոյն իսկ հոն կը կատարուի բարձրագոյն կարողութեանց տարրական կրթութիւնը : Բարձրագոյն վարժարաններու մէջ կը շարունակենք այս և միւս կարողութեանց մշակութիւնը :

Մասնակին դպրոցական դաստիարակութիւնը իրապէս կը սկսի Ուշադրութենէն և Ըմբռնումէն : Պէտք է վարժուի ուշադրութիւն տալ իր առջև եղած առարկային, միտ դնել անոր և զայն մտքին մէջ պահել : Այս թէ՛ ամենէն դժուար, և թէ՛ միանգամայն ամենէն կարեւոր դասն է . զոր մասնակը սորվելու է : Երբէք չի կրնար շատ յառաջդիմութիւն ընել մինչև որ սորվի զայն : Իրապէս կալիֆն դաստիարակութիւնն է, թէև նախապէս մասնակին ուշադրութիւնը կրնաս գրաւել արտաքին հրապոյրով մը, զոր տակաւ կը փոխեո կամաւոր ուշադրութեան :

կամքին դատարարակութեան կ'ընկերանայ զգայաբաններուն և ըմբռնելու կարողութեան կրթութիւնը, որ հիմն է մեր ծանօթութեան մեծագոյն մասին, որուն գործը իրերու հետ է և ո՛չ գաղափարներու, թանձրացեալին աւելի քան թէ վերացականին, թէ՛ ի՛նչպէս պէտք է ըմբռնել, ի՛նչպէս ուղիղ մտաւոր պատկերներ կազմել՝ առաջին բաներէն մէկն է, զոր պարտինք սորվիլ:

Հոս ալ կան դատողութեան և իմաստասիրութեան քանի մը տարրական գործողութիւններ, զորս պէտք է՛ անտես ընել:

Ասոր կը հետեւի Յիշողութեան կրթութիւնը, որ իրապէս կը պարունակէ երեք բաներ. Ստացում, Պահպանում և Վերարտադրում: Այսինքն թէ մանուկը պէտք է վարժուի ծանօթութիւն ստանալ այնպիսի եղանակաւ մը որ կրնայ յիշուիլ, և այս մասին բաւական է ձեզ յիշեցնել Յիշողութեան օրէնքները, զորս արդէն ուսած էք ձեր Հոգեբանութեան մէջ: Զուգորդութեան նախնական օրէնքները կը վերաբերին Պահպանումի և Վերարտադրումի:

Այս կարողութիւնը այնքան կարեւոր է որ շատերու աչքին կը պարունակէ բովանդակ դատարարակութիւնը, որ իրենց տեսութեան համեմատ ուրիշ բան է՛ բայց միայն բաներ գոց ընել: Բայց սխալ է այս կարծիքը: Որքան ալ հիանալի և կարեւոր ըլլայ այս կարողութիւնը, տակաւին մինակը է՛: Առանց անոր չը պիտի կրնայինք բնաւ դատարարակուիլ, նոյն իսկ մեր նոյնութիւնը չը պիտի գիտնայինք, բայց վերջապէս աւելի միջոց մ'է քան վախճան դատարարակութեան մէջ: Միջոց մ'է միւս կարողութիւնները կրթելու, և անոնց նիւթ կը հայթայթէ գործելու: Դասատուն զգոյշ ըլլալու է չափազանց առաջնութիւն չ'ընծայել անոր իր Լ'նթացքին մէջ: Մանուկներուն երեւակայութիւնը առ հասարակ խիստ

գործօն է, և հրահանգութեան ու հսկողութեան կը կարօտի աւելի քան թէ զարգացման:

Գիտակցութեան, Դատողութեան և Բանավարութեան բարձրագոյն կարողութիւններն են որ գլխաւորաբար կը տարբերեն մարդուն իմացականութիւնը անասունին իմացականութենէն, և ամենէն զգոյշ և ուշադիր կրթութիւն կը պահանջեն ինչպէս նաև ամենամեծ ճարտարութիւն դասատուին կողմանէ: Այս կարողութեանց նկատմամբ է որ ամենէն աւելի կը տեսնենք լաւ և յուրի դատարարակութեան տարբերութիւնը:

Պէտք է՛ մոռնալ թէ կարողութիւնները կրթելու և զարգացնելու մեր միակ միջոցը գործածութիւնն է և ուղիղ գործածութիւնը: Ինչպէս դայեակը մանուկին քալել կը սորվեցնէ, այնպէս դասատուն տակաւ առ տակաւ և հոգածութեամբ պէտք է օգնէ մանուկին իր մտաւոր կարողութիւնները գործածել, մինչև որ գործածութեամբ բաւական զօրաւոր ըլլան և իրենք իրենց գործելու կարող: Դայեակը չը կրնար քալել փոխանակ մանուկին, ո՛չ ալ քալելու վարժեցնել իր բազկաց մէջ կրելով զինքը: Նմանապէս դասատուն չը կրնար խորհիլ փոխանակ մանուկին, ո՛չ ալ խորհելով՝ խորհել վարժեցնել զինքը:

Դասատուին յաջողութիւնը ուրեմն մեծաւ մասամբ կախումն ունի իր ձանձնալէն այն կարողութիւնները, զորս կ'ուզէ զարգացնել, և լաւագոյն միջոցները զանոնք զարգացնելու: Այս կը յարուցանէ այն հարցը թէ որո՞նք են ուսումները, որք ամենէն աւելի յարմար են կարողութեանց տալու այն կրթութիւնը, որուն կը կարօտին:

Դ, Դպրոցի մը Դասընթացքը որոշելու համար երկու կէտեր կան նկատելու. (1) Ո՞ր ուսումները ամենէն աւելի յարմար են այդ մասնաւոր դպրոցին աշակերտաց կարողութիւնները զարգացնելու: (2) Ուրիշ ի՛նչ ուսումներ էական են հազորդելու համար այնպիսի օգտակար

ծանօթութիւններ, զորս ուսանող մը պարտի ունենալ : Այս երկու նպատակներուն ալ կարելի է քանի մը պարագաներու մէջ հասնիլ միեւնոյն կարգի ուսումներով, և այս շատ փափաքելի է, ուր որ կարելի է, ուսմանց անտեղի բազմապատկութիւնն արգիլելու համար :

Հոս չ'եմ կրնար երկարօրէն խօսիլ մասնաւոր ուսումներու նկատմամբ, բայց աւելորդ չ'է կարգ մը դիտողութիւններ ընել լուսարանելու համար ինչ որ արդէն ըսած եմ :

(1) Քանի որ զանազան կարողութիւններ կան գործածութեամբ կրթելու, յայտնի է թէ բոլոր դպրոցներուն մէջ պէտք է ըլլան զանազան ուսումներ :

(2) Ապահովելու համար ներդաշնակ և կանոնաւոր զարգացում մը, և խոյս տալու համար անդադար միևնոյն կարողութիւնը գործածելուն առթած ձանձրութեանէն՝ մէկէ աւելի ուսումներ պէտք է աւանդուին միևնոյն ատեն : Մէկ անգամին միայն մէկ նիւթ ուսանելու կերպը փորձուած և անյաջող գտնուած է, ինչպէս դժուար չ'էր գուշակել : Միւս կողմանէ միեւնոյն ատեն չափէն աւելի ուսումներ աւանդելն ալ միտքը կը չփոթէ և ձանձրութիւն կը պատճառէ : Ինչպէս ըսի այս վերջինն է արդի հակամիտութիւնը, և որչափ որ կարելի է, խոյս տալու է անկէ : Կանոնն է մէկէ աւելի ուսումներ, բայց ոչ չափէն աւելի միեւնոյն ատեն :

(3) Դասընթացքը կարգադրելու ատեն առաջին բանը որ պէտք է գիտնալ այն է թէ ի՞նչ ընդհանուր ճիւղ պիտի որոշուի, և ասոր մէջ ալ պէտք է որ գլխաւորաբար առաջնորդուինք աշխարհի փորձառութենէն : Այնպիսի խնդիր մը չ'է, որ կրնայ կարգադրուիլ ի յառաջագունէ : Կան ուսման քանի մը ճիւղեր, որք իբր դաստիարակութեան էական կը նկատուին ամենուրեք : Այսպիսի երկու ուսմանց մասին երբէք խնդիր եղած չ'է :

Լեզուները և Չափական գիտութիւնները առաջին տեղը կը գրաւեն իբր անտարակուսելի : Իմաստասիրութիւնն ալ իբր միջոց բարձրագոյն դաստիարակութեան ընդունուած է գրեթէ նոյնքան միաձայնութեամբ : Ասոնցմէ վերջ կուգայ, թէ և նուազ հին կամ նոր հեղինակութեամբ, այն ճիւղը որ կը պարունակէ Աշխարհագրութիւն և Պատմութիւն : Գիտութիւնն ալ գրեթէ նոյն դիրքը կը գրաւէ : Գլխաւորաբար արդի հեղինակութեան ուժովն է որ տեղ մը կը գտնէ այն՝ դաստիարակութեան մէջ : Թէ ճիշդ որքան կարեւոր տեղ մը տրուելու է անոր, փորձառութեամբ պիտի որոշուի : Բայց չը կրնար զանց առնուիլ նոյն իսկ նախնական դաստիարակութեան մէջ :

Այս հինգ ճիւղերը կը պարունակեն մտաւոր կրթութեան բոլոր այն էական միջոցներն, որք առ հասարակ ընդունուած են իբր անհրաժեշտ : Ոմանք պիտի աւելցնեն Արուեստը, որ կը պարունակէ Նկարչութիւն, Քանդակագործութիւն, Ճարտարապետութիւն և Բանաստեղծութիւն, ամէն ինչ որ գեղեցկին ու վսեմին կը վերաբերի, և թերևս սխալ չ'է խորհիլ թէ աւելի Գեղեցկագիտութիւն և նուազ Գիտութիւն փափաքելի բարեփոխում մը պիտի ըլլայ արդի սովորական դասընթացքներուն մէջ : Այսպէս, մասամբ մեքենական արուեստներ ինչպէս Գեղագրութիւն և Գծագրութիւն պէտք է նաև աւելցնել իրենց գործնական օգուտներուն պատճառու :

(4) Մինչև հոս ուսմանց ծրագրի մը պատրաստութիւնը լուրջ դժուարութիւններ չը ներկայացնէր, բայց երբ կուգանք որոշել մասնաւոր ուսումները իւրաքանչիւր ճիւղի մէջ, և անոնց կարգադրութիւնը ու յարաբերական կարեւորութիւնը տարբեր աստիճանի դպրոցներու մէջ, կը հանդիպինք ամենէն հակասական կարծիքներու ու ամենամեծ դժուարութեանց :

Շատ քիչ համաձայնութիւն կայ ո՛ր և է բանի նկատմամբ ի բաց առեալ Չսփազխտական ուսումները: Չսփազխտութեան մասին ամէն ոք համամիտ է թէ Գործնական Թուարանութիւնը սկսելու է Նախնական դպրոցին մէջ, և թէ Տարրական Երկրաչափութիւնն նաև կրնայ օգտակարապէս աւանդուիլ հոն: Ասկէ վերջ կուգայ Գրահաշիւ, Եռանկիւնաչափութիւն, Վերլուծական Երկրաչափութիւն, և Հաշուողութիւն. այնպիսի գործնական կիրարկութիւններով Բնագիտութեան, Անդաշափութեան, Ճարտարագործութեան և Աստղաբաշխութեան, որպիսիք կրնան փափաքելի նկատուիլ բարձրագոյն վարժարաններու մէջ: Տրամաբանութիւնն ալ երբեմն մասը կը նկատուի այս ճիւղին:

Լեզուագիտութեան ճիւղը կը պարունակէ Մայրենի լեզուն, Արդի և Հին լեզուներն ու Գրականութիւն, Քերականութիւն, Ճարտասանութիւն: Ասոնց յարաբերական կարեւորութեան մասին միաձայնութիւն չը կայ, ի բաց առեալ այն սկզբունքը թէ Մայրենի լեզուն ունի նախապատուութիւնը: Աշակերտը պէտք է սորվի ուղիղ կարգալ, գրել և խօսիլ զայն, և անոր գրականութիւնը ուսումնասիրել: Այս ուսումը պիտի սկսի Նախնական դպրոցին մէջ, և շարունակուի երկար ժամանակ: Գալով Հին լեզուներուն՝ ոմանք կ'ուզեն բոլորովին արտաքսել զանոնք. և այլք կ'ուզեն դաստիարակութեան մէջ ամենէն կարեւոր դերն տալ անոնց: Ոմանք Արդի լեզուներու ուսումը կը նկատեն իբր միջոց մը միտքը կրթելու, և այլք ուրիշ ոչինչ՝ բայց միայն օգտակար տեղեկութիւն: Ոմանք կ'ուզեն Քերականութիւն և Ճարտասանութիւն սորվեցնել, և այլք կը հակառակին:

Իմ կարծեօքս՝ բոլոր այս ուսումները օգտակար միջոցներ են միտքը մարդելու, և որ և է Դասընթացքի մէջ առաջին տեղը տրուելու է ուսանողին Մայրենի լեզ-

ուն, որ կը պարունակէ նաև Հին լեզուն, ուրկէ ծագումն առած է և ուրիշ յարակից ուսումներ: Բաց աստի՛ բոլոր միւսները պարագաներէ կախումն ունին: Աշխարհիս այս մասին մէջ ուրիշ արդի լեզուներու ծանօթութիւնն ալ բացարձակապէս էական է, և այս շատ ժամանակ չը թողուր Հին լեզուներու համար: Ասոնք չ'են կրնար առաջնակարգ տեղ մը գրաւել:

Բայց Լատիներէնը կ'ընծայէ մասնաւոր առաւելութիւններ որ փափաքելի կ'ընեն փոքր ինչ ծանօթանալ անոր: Իր աղերսը Անգղիերէնի, Ֆրանսերէնի և իր կատարեալ քերականութիւնը, իր դիրքը Եւրոպական համալսարաններու մէջ, էական կ'ընեն զայն դաստիարակեալ անձի մը: Ի՛նչ որ ալ ըլլայ այն վարդապետութիւնը՝ զոր կ'ընդունինք, պարտինք յիշել թէ աշխարհիս նշաւաւոր մարդոց մեծագոյն մասը իրենց մտաւոր զարգացումը ստացած են գլխաւորաբար Լատիներէնի և Յունարէնի ուսմամբ: Չայս ունենալով ի՛ նկատի, չ'ենք կրնար արհամարհանօք նայիլ անոնց վրայ, թէ և մեր հաւատքն այն ըլլայ թէ՛ նոյն նպատակին կարելի է ուրիշ միջոցներով հասնիլ:

Իմաստասիրութեան ճիւղը կը պարունակէ Հոգեբանութիւն, Պատմութիւն Իմաստասիրութեան և բոլոր Բնագանցական ուսումները: Թէ և այս ուսումները աստիճան մը մտքի հասունութիւն և ըստ բաւականին նախապատրաստութիւն կը պահանջեն որպէս զի կարենան օգտակար ըլլալ, տակաւին իրենց տեղը, Ընթացքին ամենէն կարեւոր ուսումներն են: Հիմն են բոլոր անձնագիտութեան, և ծանիր զքեզ այնքան կարեւոր առած մ'է հիմա որքան էր Սոկրատի օրով: Չսփազխտութեան հետ անոնք են նաև գլխաւոր միջոցը մեր դատելու կարողութիւնը կրթելու, պատրաստելու զմեզ դիմագրաւելու և լուծելու կեանքի մեծ խնդիրները: Համալսարան-

ներու մէջ միայն կարելի է հիմնովին ուսումնասիրել զայնս, բայց ասոնց մասին տարրական ծանօթութիւն մը կարելի է ստանալ Քօլէճի կամ Գիմնազիոնի մէջ: Այս ուսումները քօլէճներու մէջ փորձելու վտանգը կարող դասատուներ գտնելու դժուարութիւնն է: Այնպիսի ուսումներ են ասոնք որ աւելի լաւ է նոյն իսկ անոնց տարերքը բնաւ չը սորվեցնել քան թէ անկարող մարդու մը յանձնել անոնց դասախօսութիւնը, որովհետեւ նոյն իսկ կեանքի ու նկարագրի հիմերը կը շօշափեն:

Պատմութեան և Աշխարհագրութեան ճիւղը շատ րնգարձակ է, և կարելի է Նախնական դպրոցին մէջ սկսել զայն, ի մասնաւորի աշակերտին բնավայրին աշխարհագրութիւնը ու պատմութիւնը: Ասկէ կ'անցնինք Հին և Նոր Պատմութեան դէպքերուն և ապա Պատմութիւնը նկատելու իբր նկարագրութիւնը մարդկային յառաջդիմութեան և զարգացման:

Այս ճիւղը շատ անտես եղած էր դարերով, բայց քանի մը տարիներէ լ՛ վեր իր կարևորութիւնը կատարելապէս ճանչցուած է, և հիմա առաջնակարգ տեղ մը սկսած է գրաւել ուսմանց բոլոր ծրագիրներուն մէջ Նախնական դպրոցէն մինչև Համալսարանը:

Բնական գիտութեանց ճիւղը կը պարունակէ բոլոր ուսումները որք կը վերաբերին այն բնական տիեզերքին, որուն մէջ կ'ապրինք, իր մէջ ըլլալով մեր բուն նիւթական մարմինները: Ներկայ ժամանակիս նշանաւոր գիտերը մասնաւոր առաջնութիւն մը տուած են այս ուսումներուն՝ որ մուտ գտած են դպրոցներուն մէջ: Բայց իրենց ճիշդ յարաբերական արժէքը իբր միջոց դաստիարակութեան տակաւին վիճարանուած կէտ մ'է: Չ'ուբացուիր թէ իրենց տեղն ու արժէքը ունին, բայց թէ որչափ, այդ դեռ կը մնայ անորոշ խնդիր մը: Իմ կարծիքս այն է թէ ուսմանց ամբողջ ընթացքին մէջ ժա-

մանակին գրեթէ մէկ հինգերորդը կրնան գրաւել, բայց պատճառ մը չ'եմ տեսներ թէ ինչո՞ւ միւս ճիւղերուն տեղն առնեն:

Իսկ թէ ինչ Գիտական ուսումներու ձեռնարկելու է. բաւական տարակոյս կայ այս մասին: Եթէ իմ դատողութեանս հետեւէի, պիտի ըսէի թէ լաւագոյն էր հիմնական կրթութիւն մը տալ երկու կամ երեք այսպիսի ուսմանց մէջ, զոր օր. Բնագիտութեան, Քիմիարանութեան և Երկրաբանութեան, քան թէ ժամանակը բաժնել եօթը կամ ութը ուսմանց միջև: Բայց ներկայ հասարակաց կարծիքը կը պահանջէ նաև Բուսաբանութիւն, Կենդանաբանութիւն, Բնախօսութիւն, Հանքաբանութիւն, Ատտեղագիտութիւն և Կենսաբանութիւն, որոնց թիւը կը բարձրանայ իննի:

Մինչդեռ իբր դաստու կրնանք ստիպուած ըլլալ հասարակաց կարծիքին հետեւիլ ուսմանց ընթացքին վերաբերեալ բոլոր խնդիրներուն մէջ, տակաւին ձեր պարտաւորութիւնն է ձեր բուն կարծիքն ունենալ, և ձեր կրցածն ընել առաջնորդելու և ուղղելու Հանրութեան կարծիքը: Միայն այս կերպով կրնանք յուսալ յառաջդիմել:

Եզրակացնելով՝ պիտի ըսեմ ի մի բան, թէ ձեզմէ անոնք որ մտադիր են դատաստու ըլլալ, պէտք է այս գործին ձեռնարկեն այն ղգացումով թէ խիտ լուրջ պատասխանատուութիւն մը կը ստանձնեն, թէ մանուկներու կրթութիւնը նուիրական աւանդ մ'է: Հոգիներու հոգածութիւնն է, և ամենէն ծանրակշիւ հետեանքները կը պարփակէ իր մէջ: Կարող չ'էք իրապէս անոնց նկարագրել կազմել, որովհետեւ կան ուրիշ ազդեցութիւններ ալ, որ կը գործին տնոնց վրայ, և զորս դուք կարող չ'էք կառավարիլ: Բայց և ո՛չ մէկ ուրիշ ազդեցութիւն այնքան ուղղակի է, և այնքան մեծ որքան ձերը,

և ապագան ձեռքն է անոնց, որ մանուկ են հիմա: Ձեր ազգերուն ճակատագիրը կրնայ կախումն ունենալ այն նկարագիրներէն, զորս դուք պիտի կազմէք, և ձեր աշակերտներուն հոգիներուն ճակատագիրներն ալ կախումն ունին այդ նկարագրէն:

Սովորական գործ մը չ'է որուն պիտի ձեռնարկէք, այլ գործ մը որ կը պահանջէ անձնուիրութիւն, յոժարութիւն այլոց բարիքին համար ապրելու և գործելու, առանց ուրիշ շատ պաշտպանութեան ի բաց առեալ Աստուծոյ օգնութիւնը և ձեր իսկ ուղղամտութեան գիտակցութիւնը:

Այս չ'է դրամ կամ համբաւ շահելու տեղը, բայց մին՝ լաւագոյն տեղերէն ինքզինքնիդ գոհելու այլոց համար, որ թերեւս երբէք չը պիտի ըմբռնեն ինչ որ դուք ըրած էք իրենց համար:



2000

ՀՀ Սգգային գրադարան



NL0465352

46. 110

Տոբ. Ուօսպրնի միս

ԴՐԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ե Ի

ՈՒՐԻՇ ՔԱՐՈՋՆԵՐ

Լաբակազմ 8 Դր.

Թղթակազմ 5 Դր.

Կը ծախուի

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՅԸ

Ֆինանսըլաբ Եօգուու (Պայլ Հասուգ) Կ. Պոլիս

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۹ ربیع الآخر ۱۳۲۴ و ۲۰ مایس
۳۲۲ ناربخلی و ۷۳ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدز